



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1669-1678

17

4-64

105000
NO 2014


171

Handwritten mark

ԳԻՐԲ

ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

Տղ. Հարսե



ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

Ի ԳԱՂՂԻՍԿԱՆԷ

N. B. Harutyunyan



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՔԻՐԻՇՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

— 1870 —

9074-aw

7-5-6549

ՅԱՌԱՋԱՐԱՆ

Լամբրնէ (Lamennais) Գաղղիոյ կղերական դասէն եւ ներկայ դարուս ազատամիտ եւ հռչակաւոր ճարտասաններէն է որ սիրոյ եւ արդարութեան վսեմ բարոյականը կը քարոզէ . ամէն կողմ զօրաւորք եւ տկարք, հալածիչք եւ հալածեալք նշմարելով, աղէկիպեալ ոգւով մերթ անոյշ եւ մերթ կծու յանդիմանութեամբ մեծամեծները կը խրատէ եւ աղքատները կը խրախուսէ :

Նր այլեւայլ եւ գեղեցիկ աշխատասիրութեանց մէջէն « Գիրք ժողովրդեանն » ընտրեցինք զոր ահա թարգմանելով 'ի լոյս կընծայեմք, համոզուած ըլլալով որ մարդկային պարտուց եւ իրաւանց վըրայ այս ողջամիտ խորհրդածութիւնները ուր դարմանալի պարզութեամբ ամէն աստիճանի ընկերական բարուց նկարագիրը կը դանեմք, ազգի մը բարի զգացումները կը զարթուցանեն եւ մտաց մըռայլը փարատելով՝ եղբայրսիրութեան կապը կը պնդեն : Հատորին վերջը յարած եմք նոյն հեղինակին « Չայն 'ի բանտէ » մարդարէական ոճով տըխուր եւ ազգու գրուածը :

Լամբրնէ մօտ ժամանակներս իր վաստակաբեկ կեանքը կնքեց, բայց իր խօսքը անմահ է, եւ ուր որ հասնի՝ ատելութիւնը բնաջինջ հալածելով, առաքինութեան մաքուր սէրը կը բորբոքէ :

Բերա. 4 Մայիս 1870

Մ. ԱՅԻՄԵԱՆ

Այս գիրքը, ուր ընթերցող, թերևս քանի մը
չահաւէտ գիտելիքներ կը պարունակէ, ուսուցա-
նելով իրաւունքը եւ դանձնք քաջութեամբ պաշտ-
պանելու կերպը, բացասելով պարտաւորութիւն-
քը եւ դանձնք հաւատարմութեամբ լեցընելու
միջոցը: Եւ յիրաւի ինչ է մարդս առանց պարտա-
ւորութեանց: Տեսակ մը հրէշ մենակեաց, չունե-
նալով կապ կամ յարաբերութիւն համակրական եւ
ոչ սէր, ինքն իր մէջ ամբողջապէս ինչպէս վայրի
գազան մը որ կուրորէն մաղձոտ եւ ախուր կեանք
մը կը վարէ, յափշտակելով, երբ քաղցէն մղեալ
է, եւ քնանալով երբ կուշտ է:

Եւ առանց իրաւանց, ինչ է մարդս: Նիւթա-
կան գործի անանց որ իրաւունք ունին, մեծամե-
ծաց ընտանի անասունն, ինչպէս է ձի կամ կով:
Միթէ բաւական չէ այս մտածմունքը միայն սրբա-
մտութեամբ եւ ամօթով ողիւ բորբոքել, դու որ
Սասունաց գերադոյն տրարած եւ պատկերն ես.
դու իր ձեռակերտաց թագաւորը, Սասունած կու-
ղէ որ նմաններդ բնութեան առջեւ հաւատար եւ
իրբեւ եղբայր եւ ոչ իրբեւ տէր ճանչնաս:

Բայց առանձին ոչինչ կարեւ. կարող չես եր-
բէք ոչ պահպանել եւ ոչ վերստանալ իրաւունքդ
որ անդադաց չարձակումներ կը կրէ եթէ ոչ մի-
անալով եղբարդդ հետ. եւ չիք միութիւն առանց
անաչառ կատարման պարտաւորութեանց, առանց
փոխադարձ անձնանու իրութեան, որ իւրաքան-

չիւր անհատ սիրով ապրելով ամբողջին մէջ, ամբողջին ոյժն իր իրաւանց եւ իր պաշտպանութեան նեցուկ ունի:

Երբ զայս լաւ ըմբռնես եւ հաստատ առաջադրես ընթացքդ կէտ առ կէտ ասոր յարմարցընել, մեծ յոյս մը պիտի ծագի աշխարհիս վրայ, եւ այս յոյսը պիտի լեցուի եթէ ըմբռնես նաեւ թէ ճշմարտութեան սկզբունք, թէ բարի եւ սուրբ ձեռնարկութիւնք պտղաբեր կրկան երբ 'ի գործ դրուին անխոնջ վաստակօք:

Սմենէն սքանչելի մտածմունք եւ ամենէն անարատ եւ բերրի զգացմունք կը նմանին հունտի մը որ եթէ խնամքով պատրաստուած հողոյն չաւանդուի եւ աճման ժամանակը չմշակուի, ամուլ կը մնայ:

Գործեր, գործեր, եւ միշտ գործեր, ապա թէ ոչ ձեր թշուառութեան մէջ յաւիտեանս պիտի բատիք:

Իւրաքանչիւր ոք ընդ հակառակն անկիւն մը քաշուած կը ննջէ վասն զի չը գիտեր ինչպէս գործէ եւ իր գործելուն վրայ կը թերահաւատի: Արտարակուսի եւ այն է ահա իր կորուստը. վասն զի մեղկ տարակոյսը կամայ զսպանակները կը թուլացընէ, կը տկարացնէ, կը թմրեցնէ ոգւոյ դորութիւնները:

Քաջ գիտեմ որ բիւր դժուարութիւններ, բիւր տագնապ, բիւր արգելք կը պաշարեն զձեզ: Քաջ գիտեմ թէ անոնք որ զձեզ յաշխատանս կը մղեն մէկ ձեռքով խարաղան եւ միւսովն չուանին ծայրը բռնած զոր վզերնիդ անցուցեր են, կը հսկին:

ձեր վրայ եւ թոյլ չեն տար ձեզ որ աջ կամ ձախ շեղիք այն ակօսէն զոր իրենց շահուն համար բռնի ձեղի փորել կուտան : Բայց երբ չուան եւ խարաղան մը բաւական են մարդս լծոյ ներքեւ զօպել, ըսել է թէ այն մարդը ալ մարդ չէ : Սակայն վեր կը բարձրացընէ միշտ ձակատը երբ ուղէ եւ կրնայ մարդոյ գործ գործել, բաւական է որ մեռած չըլլայ իր սրտին մէջ այն զգացումն որ ճշմարիտ մարդը կը կազմէ :

Տեսէք մերձակայ աղգաց մէջ այն միլիոնաւոր գործաւորները որ թէպէտ դալկահար եւ հիւժեալ չքաւորութեամբ, բայց այնպիսի սիրտ մը կը կրեն զոր հարստահարութիւնը երբէք չէ կարող ընկճել. տեսէք ինչպէս ամէնքը միախոհ կը պահանջեն օրինաւոր միջոցներով իրենց մերժուած եւ ոտից տակ առնուած իրաւունքները :

Ար հաւատան Աստուծոյ եւ իրենց իսկ, կը հաւատան սերմանելու ժամանակին եւ ապառնի հրնձոց եւ անոր համար ալ կը քաղեն : Իրենց անխնայութեամբ կը յաղթեն ամէն ընդդիմութեանց, Արդարութեան օրը՝ որոյ այսքան ժամանակէ 'ի վեր կը սպասենք, պիտի ծագի իրենց վրայ, եւ ապագայն պիտի պատմէ թէ ինչպէս իրենց արիութեամբ բանտը հայրենիք փոխեցին :

Ըսէք, ըսէք միթէ իրենց ձայնը մինչեւ ձեր ունկը չէ հասած, միթէ այն ահաւոր ձայնը, համօրէն ժողովրդեան մը ձայնը որ կաղաղակէ « կուղեմ » ձեր սիրտը չէ խռոված :

Ինչ որ նա կարող է, դուք ալ կարող էք : Աս-

բող էք խօսիլ, կարող էք խնդրել որ դուք ալ մասնակից ըլլաք այն ընկերութեան որ ձեզմով կը կայանայ :

Կարող էք խնդրել որ մասն ունենաք հասարակաց դործոց մատակարարութեան մէջ որ ձեր իսկ դործերն են :

Կարող էք խնդրել որ այն սրահաց դռները ուր 'ի քննութիւն կառնուն զձեզ, ձեր շահերը եւ ձեր կեանքն անդամ, բացուին անոնց որ զձեզ ներկայացընելու համար կրնարէք դուք ինքնին . կարող էք խնդրել որ ընդհանրական քուէարկութեան իրաւունքն՝ քաղաքական սարկաց զած վիճակէն բարձրացընէ զձեզ յատիճան քաղաքացւոց :

Կարող էք խնդրել որ զձեզ գաշտաց անբան անասնոց տեղ չի դնեն այն տէրութեան մէջ որոյ թէ հարստութիւնը եւ թէ գորութիւնը դուք կը կազմէք :

Կարող էք խնդրել որ արժան համարին ճանչնալ զձեզ մարդ եւ այսուհետեւ ամպարիշտ օրէնք մը չի ջնջէ 'ի բաց ձեր ճակատէն այն սուրբ նշանը որ Աստուած մատակը դրոշմեր է :

Կարող էք խնդրել զայս, խնդրել անդադար խնդրել միշտ եւ աւելի . եւ եթէ այսպէս խնդրելու ըլլաք մի պիտի պատասխանէ ձեզ ոչ :

Աչ ոք պիտի յանդգնի : Աստուծոն կամեցէք եւ աշխարհիս կերպարանքը կը մտխուրի :

Իսկ եթէ իւրաքանչիւր ոք ծայլ եւ լռիկ անկիւն մը ստանձնացեալ, հետեւէն դիտելով արարնջէ թէ իրաց ընթացքը գէշ են, մի յուսաք ընտ

որ բարեբանան, եւ ընկճեալ չարեաց բերին ներ-
 քեւ զոր ձեր սրդւոյր ժառանգ կը թողուք, դան-
 դատեցէք միայն ձեզի դէմ, ձեր անդդալութեան,
 ձեր անճնապաշտութեան եւ ձեր վատութեան
 դէմ:



Անցնելով եւ ես երկրիս վրայէն, ինչպէս կանցնինք մենք ամէնքս ալ, խեղճ պանդուխտք մի աւուր, մեծամեծ հառաչանքներ լսեցի. բացի աչքերս եւ աչքերս անլուր տանջանքներ եւ անթիւցաւեր տեսան: Մարդկութիւնը թալկադէմ, տկար հիւժեալ, արեամբ արատաւոր ոգոյ հանդերձներով պատեալ դէմ առ դէմ ինձ կանգնեցաւ, եւ ես ազազակեցի. — Ա՞յս է ուրեմն մարդը. միթէ այսպէս էր երբ Աստուած զինքը ստեղծեց: Եւ ոգիս խռովեցաւ տարակուսանօք եւ անձկութեամբ լցեալ:

Բայց շուտով համոզուեցայ թէ Աստուած մարդուս տանջանք եւ ցաւք չի դրկեր, Աստուած յորմէ ամէն բարիք կը բխեն եւ միայն բարիք կը բխեն եւ ուրիշ ոչինչ. համոզուեցայ թէ այս տանջանքները եւ ցաւերը մարդս ինքնին կը պատրաստէ ազխութեան մէջ թաղուած եւ կրից մէջ ապականեալ ըլլալով. եւ յոյս մը փայլեցաւ յիս եւ մարդկային նոր ցեղին վրայ վստահութիւն մը զգացի: Մարդկութեան ճակատագիրը պիտի փոխուի երբ նա ուզէ որ փոխուի եւ պիտի ուզէ երբ զգայ իր չարիքները եւ զանոնք դարմանելու պայծառ ծանօթութիւնը ստանայ:

Ժամ է, նվ ժողովուրդ, որ արդարանայ արարածոյ Ստեղծիչը, վասն զի ինքը իր արդարութեան եւ բարութեան համեմատ կենացդ հանգամանքները մատակարարած է:

Իսկ կը մտնի կրսես. եւ դողդոջուն մարմինդ տաքցընելու համար երկաթեայ կապանօք եռապատիկ կը պնդեն:

Գու ծարաւի եմ կըսես . եւ կը պատասխանեն քեզ . արբ դարաասուքդ :

Աստակոց ներքեւ կընկճիս դու եւ տէրերդ կուրախանան , յողնութիւնն եւ աշխատանքն են ըսելով կարեւոր սանձ մը :

Կը գանդատիս դու թէ չես կարող միտքդ մշակել եւ իմացականութիւնդ զարգացընել՝ եւ քու վրադ իշխողները կըսեն . քաջ է՝ պէտք է որ ժողովուրդը ապուշ ըլլայ որպէս զի կարենանք զինքը կառավարել :

Աստուած 'ի սկզբանէ այս պատուէրը ըրաւ մարդոց : Աճեցէք եւ բազմացարուք եւ լցէք գերկիր , եւ իշխեցէք նմա . եւ հիմա կըսեն քեզի . Ուրացիր ընտանիքդ , ամուսնութեան քաղցր հաճոյքները եւ հայրական սուրբ զգացումն , եւ ժուժկալելով առանձին ապրէ :

Ուրիշ ինչ կրաս բազմացուցանել եթէ ոչ թըշուառութիւններդ :

Յայտնի է ուրեմն թէ մարդ կուժեան արդի վիճակը Աստուծոյ արամադրածը չէ . Աստուծոյ գծած ճանապարհէն շեղեր է : Ինչպէս պէտք է վերատին այդ ճանապարհին մէջ դառնայ :

Ահաւասիկ :

Ի վաղուց անտի Օրէնք մը կար դոր մերժեցին եւ պղծեցին :

Արդ այս օրէնքը պարաւորութեանց եւ իրաւանց աւերակաց ներքեւ ճնշեալ կը մնայ , եւ անոր համար միջակար եւ տրտում գիշերային խարխաւփանաց մէջ կը թափառիք :


Այս սուրբ օրէնքը միայն կարող է զձեզ վեր-

կել . այս օրէնքն է սերմնս պապարկս բարեաց զոր
Արարիչն ձեզ սահմանած է :


Ի բաց առէք այդ օրէնքին վրայէն բարդեալ
կոչաւորք եւ այս միսիթարիչ յոյսը եւ հինաւորց
մարդարէական խօսքը լիովին պիտի կառարուի
ձեր վրայ :

ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՍՏԻՐ Ի ԽՍԻՍՏՈՒ ԵՏԵՍ ԼՈՅՍ ՄԵՍ ԵՒ ՈՐՈՅ
ՆՍՏԻՆ ՅԱՆՆԱՅԻՆ ԵՒ Ի ՍՏՈՒԵՐՍ ՄԱՆՈՒ ԼՈՅՍ ՆԱԳԵՍՆ ՆՈՅՍ :

(ՄԱՏՅՈՒ Գ. Հ. 16)



ԺՈՂՈՎՐԴԵԱՆ



Ա.

ԱՄԷՆ բաներ այս աշխարհիս մէջ պէտք չէր
այնպէս ըլլային ինչպէս որ են: Շատ չարիքներ
կան եւ մեծամեծ չարիքներ: Աստուծոյ կամքը
այս չէ:

Մարդիկ որոյ հասխահայրը մէկ է, պէտք էին
մեծ ընտանիք մը ձեւացընել, սիրոյ եւ եղբայրա-
կան կապերով միացեալ: Նման այն ծառին որ
բարձրանալով բունէն հաղարաւոր աստեր կարծա-
կէ եւ հեաղհեաէ ճիւղեր եւ շառաւիղներ օրոյ սը-
նունդ եւ նիւթը մէկ արմատէ կը բղխէ:

Ընտանեաց մը անդամք ընդհանուրին օգուտը կը
մտածեն վասն զի ամէնքը զիրար կը սիրեն եւ հա-
սարակաց բարեաց մասնակից կըլլան: Ամէնքը զա-
նազան միջոցներով ըստ իրենց կարեացը, խելացը եւ
մասնաւոր յատկութեանցը իրարու ձեռնտու կըլլան.
մին այս կընէ, միւսը այն, բայց խրաքանչիւրին
վաստակը ընդհանուրին կօդատէ: Կնչ որ ունին քիչ
չառ եղբոր պէս կը բաժնեն, ծննդեան յարկին
նեքիւ զանազանութիւնք տեղի չեն կրնար ու-
նենալ, հոն քաղցը եւ առատութիւնը քովէ քով

չեն նստիր : Աստուծոյ լցուցած բաժակը ձեռքէ
ձեռք կը պտըտի, ծերը եւ մանուկը, այն որ ալ չէ
կարող եւ այն որ տակաւին չէ բաւական աշխա-
տանք կրել, եւ այն որ դաշտէն կը դառնայ ճա-
կատը քրտամբ ողողեալ, նոյն բաժակին մէջ շրթ-
թունքնին կը դովացընեն : Նրենց ուրախութիւննե-
րը եւ վշտերը մէկ են : Եթէ մէկը տկար կամ հի-
ւանդ է, եթէ ժամանակէն յառաջ անկարող է աշ-
խատիլ, միւսները զինքը կը սնուցանեն եւ կը խը-
նամեն որով երբէք երեսի վրայ չի մնար :

Անկարելի է որ մէջերնին գծաութիւններ ծա-
գին վասն զի շահերնին մէկ է եւ հետեւաբար բը-
նաւ վէճ : Ամէն բան գրաւելով իր անձին սեփնա-
կանելու անյագ փափաքէն, կը ծնանին երկպառա-
կութիւն, նախանձ եւ ատելութիւն : Նախախնա-
մութիւնը կը նզովէ յատուկ ստացուածները որ
միշտ ցանկութիւնը գրգռելով երբէք դայն չեն յա-
գեցըներ : Բարիքները վայելելի են երբ հաւասա-
րապէս բաժնուին :

Հայր, մայր, որդիք, եղբարք եւ քորք, միթէ
կան աւելի սուրբ եւ աւելի անոյշ բարբառք եւ
ինչո՞ւ ուրիշ անուէններ ալ կը գտնուին երկրիս վրայ :

Եթէ այս կապերը նախնի անարատութեամբ
պահուած ըլլային, անձանօթ պիտի ըլլային մեզ
շատ չարիք որ մարդկային ցեղը կը չարչարեն. իսկ
անհրաժեշտ չարիքներն ալ կրնային գթութեամբ
թեթեւնալ : Այն արտասուքը որ ոչ ուրիշի մը ծո-
ցը կը հեզուէ եւ զոր ոչ ոք կը սրբէ, ամենէն դառն
են :

Ի՞նչ է պատճառը որ մեր ճակատագիրը այս-

քան ծանր է եւ մեր կեանքը այսքան թշուառ ,
պատճառը մենք իսկ եմք , վասն զի բնու թեան շա-
ւիղէն հեռացանք ուրանալով իր օրէնքները : Մէ-
կը որ իր ընկերներէն կը բաժնուի եւ առանց օղ-
նականի ժայռերու վրայ կը քալէ , պէտք չէ որ
գանգատի թէ ճանապարհը դաժան է :

Երկրիս վրայ ամէնուս համար տեղ կայ եւ
Սատուած դայն ըստ բաւականի պաղաքեր ըրեր է
որպէս զի առատապէս մեր պիտոյքը հողանք :

Եթէ շատերուն կարեւոր սնունդը կը պակասի ,
ըսել է թէ մարդս Սատուծոյ կարգադրութիւնը
խանգարելով , հինաւուրց ընտանեկան միութիւնը
ջնջեց եւ թէ այս ընտանեաց անդամները նախ
իրարու օտար ձեւանալով յետոյ թշնամի եղան :

Բազմաթիւ մասնաւոր ընկերութիւններ , ժողո-
վուրդներ ցեղեր եւ ազգեր կազմուեցան եւ փոխա-
նակ իրարու ձեռք կարկառելու եւ փոխադարձա-
բար օգնելու , իրարու մնասել ջանացին :

Ցած կրքերը եւ անձնասիրութիւնը յորմէ ամէն
կիրք կը ծնանին , զեղբայր եղբօր դէմ զինեցին . իւ-
րաքանչիւր ոք իր հանգիստը փնտռեց ուրիշին վը-
նասելով , յափշտակութիւնը երկրիս երեսէն ապա-
հովութիւնը աքսորեց , եւ պատերազմը զաշխարհ
աւերեց եւ հասարակաց ժառանգութեան կտոր-
ները իրարու ձեռքէ կատաղաբար յափշտակեցին :
Երբ այն զօրութիւնը որ աշխատութեան սահման
ներով կրնար արդիւնաւորել , գրեթէ փճայրնելու
կը գործածուի . երբ մարդս հրդեհի , կողոպուտի
եւ սպանութեան հետքը թողլով կանցնի երկրիս
վրայէն . երբ աշխարհակալութիւնը կը փոփոխէ ժո-

դովրդեան քնական յարարերո թիւնները եւ անոր
քնական երկրին տարածո թիւնը զոր կարող էր
մշակել . երբ անթիւ արգելքներ դաւառաց հաղոր-
դակցութիւնը եւ բերքերու աղատ առուտուրը կը
խափանեն , ինչպէս հապա ծանր շարշարանքներ
չեն յառաջ դար այսպիսի ծանր անկարգութիւն-
ներէ :

Ազգերը այսպէս իրենց մէջ բաժնուելէ յետոյ
խրաքանչիւր ազգ ալ դարձեալ իր մէջ բաժնուե-
ցաւ : Ոմանք ալ ելան եւ այս ամպարիշտ խօսքը
ըսին . — Մենք պիտի հրամայենք եւ կառավարենք,
միւսները պարտին հնադանդիլ :

Երենց շահուն համեմատ օրէնքներ յօրինեցին
զորս բռնութեամբ հաստատեցին : Մէկ կողմը դօ-
բութիւն , հարստութիւն եւ բերկրութիւն , միւս
կողմը ընկերութեան բեռ :

Այլեւայլ ժամանակի եւ այլեւայլ երկրի մէջ
մարդս իր նմանին ստացուածքը եղաւ . դրաստի
պէս վաճառեցին , ծախեցին եւ դնեցին զինքը :

Ուրիշ տէրութեանց մէջ եւ ուրիշ ժամանակ ,
առանց ազատութիւնը վերցընելու , այնպէս կար-
գադրեցին որ մարդուս աշխատանաց գրեթէ ամ-
բողջ պատուը իր վրայ տիրողներուն կը մնար : Լա-
ւագոյն էր կատարեալ գերութիւնը վասն զի գոնէ
տէր մը կը սնուցանէ , կը պահպանէ եւ կը հագուե-
ցընէ իր գերին , եւ հիւանդութեան ժամանակը
զինքը կը խնամէ իր շահը այնպէս պահանջելով :
Իսկ այն որ մասնաւոր մէկուն սեփականեալ չէ ,
կը գործածեն զինքը քանի որ կարող է աշխատիլ ,
եւ տպա կը թողուն : Եւ ինչ բանի կը ծառայէ նա

երբ տարիք եւ վաստակ իր ոյժը սպառած են, կը մնայ իրեն մեռնիլ անօթի եւ ծարաւ փոզոցի մը անկիւնը: Ար կերպարանքէն կը խորշին անոնք, որ փափկութեան մէջ կը ծփան եւ որոց կըսէ թերեւս «կտոր մը հաց տուէք Աստուծոյ սիրոյն համար»:

Ամէն կողմ չափազանց սէրը՝ խեղդեր է զընկերական սէրը: Եղբարք եղբարց ըսին: Մենք մէկ ցեղէ սերեալ չենք, մեր արիւնը աւելի անարատ է, չենք ուզեր ձեր արեանը հետ խառնել: Գուք եւ ձեր որդիքը դատասպարտեալ էք յաւիտեանս մեզի ծառայել:

Այլուր պատուոյ աստիճաններ հաստատած են ոչ ծննդեան, այլ հարստութեան վրայ:

Ո՞րչափ դանձ ունիս—Ս, յսքան—Նստէ ուրեմն ընկերութեան սեղանին առջեւ որ քեզի համար պատրաստուած է: Իսկ դու որ բան մը չունիս, հեռացիր: Միթէ կայ հայրենիք աղքատին համար:

Բազդը այսպէս դասակարգած է դաստիճանները. հարուստք ամէն տեսակ իրաւունք ունին եւ առանձին արտօնութիւն հասարակաց գործոց մատակարարութեան մասնակցելու, այսինքն, անձնական գործերնին հօգալ զրեթէ 'ի վնաս հասարակութեան:

Ռամիկք, ինչպէս կը կոչեն վսեմ արհամարհանօք, թէպէտ առանձինն ազատ, բայց խմբով ըստացուածքն են անոնց՝ որք ընկերութեան անհատից յարաբերութիւնները, արուեստից գնացքը, աշխատութեան պայմանները եւ դիմերը կը կարգադրեն: Իրենց հրամանները օրէնք կոչեր են եւ այս օրէնքները մեծ մասամբ անձնական շահուց

6459-57

հետեւանքներ եւ փոքր մասին մեծ մասին վրայ
ունեցած իշխանութիւնն ընդարձակելու եւ մշտն-
ջենաւորելու միջոցներ են :

Այս է ահա աշխարհիս գիրքը քանի որ եղբայ-
րական կապը խորտակեցաւ : Հանգստութիւն, բար-
գաւածութիւն եւ ամէն առաւելութիւն ոմանց հա-
մար են, միւսներուն աշխատութիւն, թշուառու-
թիւն եւ յետոյ փոս մը :

Առաջինները զանազան անուամբ բարձրագոյն
դասերը կը կազմեն. վերջիններէն կը բաղկանայ ժո-
ղովուրդը :



Բ .

Ժողովուրդ էք . գիտցէք նախ թէ ինչ է ժո-
ղովուրդը : Անն մարդիկ որ արեւուն, անձրեւին,
հողմոյն եւ եղանակաց փոփոխութեանցը դիմանա-
լով, երկիրս կը հերկեն եւ որուն ծոցը կաւանդեն
պտղաբեր սերմանց հետ իրենց ուժոյ եւ կենաց
մէկ մասը, եւ իրենց ճակտին քրտամբը կըստանան
մեր ամէննուս հարկաւոր սնունդը :

Այս մարդիկը ժողովրդեան մարդիկ են :

Ուրիշները անտառներ, քարահատներ եւ հան-
քեր կը խուզեն, երկրիս խորին խորխորատները
կիջնան աղ, ածուխ, մետաղ եւ այն ամէն նիւ-
թերը հանելու համար՝ որք արուեստից եւ ձեռա-
կերտից հարկաւոր են : Ասոնք առաջիններուն պէս
դաժան աշխատութեանց մէջ կը ծերանան ամէն-
ւս պէտք եղածները հայթայթելու համար :

Ասոնք եւս ժողովրդեան մարդիկ են :

Ուրիշներ ալ մետաղները կը հալեցընեն որոց յատուկ ձեւեր կուտան այլեւայլ պիտոյից վերաբերեալ : Ուրիշները փայտը կը յղկեն, ուրիշներ բուրդը, կտաւը եւ մետաքսը հիւսելով զանազան կերպասներ կը յօրինեն . ուրիշներ սոյն միջոցներով մեր զանազան պիտոյքները կը հոգան որք բնական կամ ընկերական վիճակի արգասիքներ են :

Ասոնք եւս ժողովրդեան մարդիկ են :

Շատերը վտանգներով պաշարեալ, ծովերը կը չափեն մէկ աշխարհէ միւսն իւրաքանչիւրին սեփական բերքը կրելով, ալեաց եւ մրրկաց հետ կը կռուին մերթ արեւադարձին տապոյ ներքեւ եւ մերթ բեւեռային սառոյցներու մէջ թափառելով ձկնորսութեամբ սննդարար բերքերը բազմապատկելու կամ Ովկիանու ծոցէն մարդկային կենաց պիտանի բազում նիւթեր քաղելու համար : Ասոնք եւս ժողովրդեան մարդիկ են :

Եւ անոնք որ 'ի զէն կը դիմեն հայրենեաց համար, զոր կը պաշտպանեն եւ որոյ կը նուիրեն իրենց երիտասարդութիւնը, տքնութիւնը եւ արիւնը, որ իրենց անձը կը զոհեն եւ կը մեռնին ուրիշներուն պահպանութեան եւ ընտանեկան խաղաղ բերկրութիւնները ապահովցընելու համար, անոնք ժողովրդեան որդիքներն են :

Ոմանք ալ հաղար դժուարութեանց յաղթելով իրենց տաղանդովը կը փայլին եւ կընդարձակեն ու կը կատարելագործեն արուեստները, գրականութիւնը, գիտութիւնները, որ մարդուս բարքը կը մեղմացընեն, զազգերը կը կրթեն եւ այն շքեղ լու-

աւորութիւնը կը ծածկեն զիրենք՝ զոր փառք կանուանեմք եւ վերջապէս հասարակաց բարգաւաճութեան անստարուխ աղբիւրներն են :

Ս. յապէս ամէն երկրի մէջ, ամէն անոնք որ կը յոգնին եւ կը տաժանին արդիւնաւորելով կամ արդիւնքներ օխելով, ամէն անոնց որոնց վաստակը ընդհանուր հասարակութեան շահաւոր է, մարդկային այն խումբերը որ օգտակար եւ կարեւոր են մեր հանդստութեան եւ պահպանութեան, անոնք ահա ժողովուրդ են : Ժողովուրդը մարդկային ցեղն է՝ ի բաց առնելով հաճոյից մէջ ընկղմած աղնուականաց փոքրիկ դաս մը :

Ս. անց ժողովրդեան չի կայ երջանկութիւն, ոչ յառաջադիմութիւն եւ ոչ կեանք, վասն զի կեանքը աշխատութեան արդասիքն է եւ աշխատութիւնը ամէն տեղ ժողովրդեան ճակատագիրն է :

Թէ յանկարծ ժողովուրդը անհետանայ, ինչ կըլլայ ընկերութիւնը . ժողովրդեան հետ կանհետանայ : Եւ եթէ մնան քանի մը անհատներ ցրուեալ երկրիս երեսը, պարտին իրենց ձեռօքը մըշակել, եւ ապրելու համար պարտին անմիջապէս ռամիկ ժողովուրդ ըլլալ :

Ս. բոլ ինչ են ժողովրդեան պայմաններն այս ընկերութեան մէջ զոր գրեթէ ժողովուրդը կը կազմէ եւ կապրեցընէ : Ի՞նչ կընէ ընկերութիւնը ժողովրդեան համար :

Ընկերութիւնը կը դատապարտէ զժողովուրդը հազարաւոր եւ ամեն տեսակ դժուարութեանց հետ անդադար կռուիլ եւ այս դժուարութիւնները ժողովրդեան վիճակը բարւոքելու եւ չարիքները մեղ-

մելու արդելք կըլլան : Ժողովրդեան աշխատանաց պաղոյն փոքրիկ մէկ մասը հազիւ ընկերութիւնը իրեն կը շնորհէ եւ իրեն հետ կը վարուի՝ ինչպէս կը վարուի մշակը իր ձիոյն կամ կովուն հետ եւ շատ անգամ աւելի գէշ . ընկերութիւնը կաղաղակէ ժողովրդեան զանազան անուններ տալով . «ճառայութիւն յաւիտեանս , եւ թշուառութիւն անուանց յուսոյ» :

Գ .

Նթէ համրենք այսքան դարերէ 'ի վեր ժողովրդեան երկրիս վրայ կրած չարչարանքներն որ ոչ բնական օրինաց այլ ընկերութեան ախտից հետեւանքն են , այս չարչարանաց թիւը կը հաւասարի երկիրս ծածկող խոտոց թելերուն որ ժողովրդեան արտասուօք ուողեալ են :

Միթէ այսպէս պիտի շարունակէ եւ հանապազ աղէտից շրջանին մէջ պիտի դառնայ ժողովուրդը . միթէ չունի ապագայէն որ եւ է յոյս մը . միթէ իր կենաց դժուար ասպարէզին մէջ միշտ յուսահատութեան ձայն մը պիտի արձակի կուրծքէն : Միթէ կայ անհրաժեշտ աղէտ մը իր մէջ կամ իրմէ դուրս որ կ'արդելու իր վիճակն ամօքել : Միթէ երկնից Հայրը դատապարտած է զինքը յաւիտեանս չարչարիլ :

Նթէ այդպէս մտածէք՝ զձեզ կանխի՞ծէք :

Աստուծոյ շաւիղները սիրոյ շաւիղներ են , ոչ

ՅԱտուծոյ կուգան չարիք որ զխեղճ արարածները
կը տանջեն, այլ ամէն այն բարիք՝ զոր առատապէս
իրենց վրայ կը տեսնէ :

Անոյշ եւ մեզմ հովիկը որ գարնան գձեզ կը
կենդանացընէ, Ատուծոյ մրմունջն է, ցօղը որ
ամառային տապուն գձեզ կը զովացընէ իր խոնաւ
չունչն է :

Ոմանք կըսեն ձեզի. 'ի ծննդենէ տանջանայ
դատապարտուած էք, այս աշխարհիս մէջ ձեր
կեանքը այսպէս պէտք է ըլլայ: Բայց տանջան-
քըն իրենք հնարած են եւ որովհետեւ իրենց ըս-
տացուածքը ձեր աղէտից վրայ հիմնած են, կը
ջանան գձեզ համոզել թէ ձեր թշուառութիւնն
անդարմանելի է եւ զայն թօթափելու դուն գոր-
ծելը յիմարութիւն եւ յանցանք: Մի անսաք այդ
սուտ խօսքին: Յիրաւի կատարեալ երջանկութիւ-
նը զոր ամէն մարդ կը խնդրէ, այս աշխարհիս մէջ
չի գտնուիր. աշխարհ եկեր էք նպատակաւ մը,
գործ մը կատարելու եւ պարտաւորութիւններ լե-
ցընելու. հանգստութիւնը անդին է, հիմա աշխա-
տութեան ժամանակ է: Եւ սակայն այս աշխա-
տութեան ենթակայ ընելով գձեզ, Ատուծած դի-
տաւորութիւն չունի գձեզ անընդհատ չարչարա-
նաց մատնել, այլ կուզէ որ ըստ կարելւոյն ճշմա-
րիտ բարիքներ վայելէք որ են սկիզբն անմահ եր-
ջանկութեան :

Մշակին կը նմանինք որ ձմեռուան սկիզբը կը
ցանէ եւ աշնան կը քաղէ. բայց միթէ իր աշխա-
տանքը քաղցր չէ եւ միթէ փրկութիւնը եւ յոյսը
միասին չեն ծլիր իր դաշտաց մէջ: Ձեր թշուա-

առ թիւնը որ անդարմանելի է կրսեն, պէտք է ընդհակառակն որ դարմանէք, եւ որովհետեւ արդեւքը ոչ թէ բնութեան այլ մարդոց մէջ է, կըրնաք ճարը տեսնել եթէ կամփք. իսկ անոնք որ սըխալ ըմբռնմամբ կարծեն թէ իրենց շահը կը պահանջէ որ արդելուն զձեզ, անոնք ինչ են ձեր քովը: Ի՞նչ է իրենց դօրութիւնը: Անոնց մէկին զէմ դուք հարիւր էք:

Ի՞նչ կը դարմանաք եթէ մինչեւ հիմա այսքան քիչ պտուղ քաղեցիք ձեր աշխատանքներէն: Բազուկ ունէիք կործանելու բայց ոչ սիրտ հիմնելու. արդարո՞ւ թիւնը երբեմն եւ բարերարութիւնը միշտ մերժեցին ձեզ:

Երբ ձեր իրաւունքը պաշտպանել պարտէիք, կողոպտեցիք մանաւանդ թէ կողոպտեցին յանուն ձեր ուրիշ իրաւունքը: Երկրիս վայ եղբայրս թիւնը, Աստուծոյ եւ սիրոյ արքայութիւնը կանգնել պարտէիք: Բայց ընդհակառակն իւրաքանչիւր ոք ինքզինքը միայն մտածելով իր անձնական շահը միայն փնտռեց. ատելութեամբ եւ նախանձով վառեցաք: Քննեցէք ձեր ոգւոյն խորը եւ գրեթէ ամենքնիդ ալ գաղտնապէս այս կը մտածէք: Ես կաշխատիմ եւ կը չարչարուիմ, եւ ինչո՞ւ ուրիշ մը դատարկ ուրախութեանց մէջ ընկըղմուի: Եւ կը փափաքիք իր տեղը ըլլալ եւ իրեն պէս ապրիլ, իրեն պէս գործել:

Արդ այս կերպով ոչ եթէ չարը կը հալածուի այլ կը մշտնջենաւորի: Չարը անիրաւութեան արդասիք մ'է, պէտք չէ մեզ այս կամ այն որ անիրաւութենէ օգուտ կը քաղէ:

Յթէ կուղէք յաջողիլ, բարին միայն գործեցէք բարի միջոցներով: Արդարութեան եւ բարեբարութեան գորութիւնը մի շիտթէք վայրենի եւ անգութ բռնութեան հետ: Յթէ կուղէք յաջողիլ հողացէք ձեր եղբարքն ինչպէս զձեզ. իրենց դատը ձեր դատն ըլլայ, իրենց ինչքը ձեր ինչքը, իրենց աղէտը ձեր աղէտը, զձեզ իրենց տեղը դրէք եւ ձեր անհոգութիւնը 'ի համակրութիւն եւ ձեր անձնասիրութիւնը յանձնանուիրութիւն փոխեցէք: Այն ժամանակ ոչ ցրուեալ անհատներ այլ մէկ եւ ամբողջ մարմին մը պիտի ըլլաք եւ ով պիտի յանդգնի արգելուլ զձեզ ձեր նպատակին հասնիլ: Ըսկ հիմա զատուած էք վասնզի իւրաքանչիւր ոք իր անձը միայն կը հողայ, եւ կը սանձեն զձեզ մէկզմէկու դէմ հանելով: Յթէ ձեր շահը, կամքը եւ գործը մէկ ըլլայ, ո՞ր գորութիւն կարող է յազթել ձեզ:

Բայց լաւ ըմբռնեցէք թէ ինչ է ձեր գործը ապա թէ ոչ 'ի դուր կաշխատիք:

Մի կարծէք թէ ձեր վիճակը մասնաւորապէս բարւոքելով՝ աշխարհիս ընթացքը կը փոխուի, ոչ բազմութիւնը կը տանջուի միշտ, չարը եւ բարին նոյն համեմատութեամբ կը մնան: Առաւելութիւններ վայելող անձանց թիւը միշտ նոյն կը մնայ, միայն թէ մէկը կիջնայ, միւսը կը բարձրանայ:

Ն'նչ օգուտ տիրապետութիւն մը տիրապետութեամբ փոխանակել: Ն'նչ փոյթ որ այս կամ այն տիրէ: Ամէն տիրապետութիւն զմարդիկ յորոչ դասեր կը բաժնէ, հետեւաբար ոմանք արտօնութիւններ կը ստանան, հետեւաբար այլ եւ այլ շահեր իրարու

կը պատահին եւ զօրութեամբ այն օրինաց դորս
բարձրագոյն դասերը իրենց օգուտը եւ աստիճա-
նը ապահովցընելու համար յօրենքեր են, ամէնքը կամ
զրեթէ ամէնքը զոհ կըլլան ոմանց : Ժողովուրդը
պարարտ արօտին կընմանի որ հողոյն մէջ կարմա-
տանայ :

Ահաւասիկ ձեր պաշտօնը որ մեծ է : Տիեզերա-
կան ընտանիք մը կազմել պարտիք . Աստուծոյ քա-
ղաքը հիմնել եւ յառաջագիւտելով անխոնջ վաստա-
կօք, Աստուածային դործը մարդկութեան մէջ ար-
դիւնաւորել :

Երբ մէկզմէկ եղբօր պէս սիրելով եղբօր պէս
վարուիք իրարու հետ, երբ ամէն անհատ իր եր-
ջանկութիւնը ամէնուն երջանկութեան մէջ փրնա-
ռելով, իր կեանքը ամէնուն կենացը միացընէ եւ
իր ջանքը ամէնուն շահուց, երբ իր անձը համօրէն
ընտանեաց նուիրէ, եւ սա փոխադարձաբար, առ
հասարակ չարիք՝ որոց ներքեւ մարդկային ցեղը կը
հեծէ անհետանան եւ ցնդին ինչպէս հորիզոնը պա-
տող ամպերը երբ արեւը կը բարձրանայ . այն ժամա-
նակ Աստուծոյ կամքը պիտի կատարուի, վասն զի
ինքը կուզէ որ մարդկութեան ցրուեալ մասունքը
սերտ կապակցութեամբ հեռզհեռէ միանալով եւ
ամփոփելով 'ի սէր, մէկ մարմին կազմեն ինչպէս
եւ ինքը մէկ է :

Գիտէք հիմա նապատակն յոր պիտի դիմէք : Բնու-
թիւնը զձեզ հոն կը մղէ եւ անդադար կըստիպէ
զձեզ անոր հասնիլ կը շնջէ ձեզ եռանդուն փափաք
մը զձեզ ամէն կողմէ պաշարող չարիքներէն աղա-
տելով երջանիկ վիճակ մը պատրաստել ձեզ, երջա-
նիկ ձեզ եթէ ձեր եղբարց համար երջանիկ է :

Ձեր եղբարց համար աշխատելով, ձեզի համար
կաշխատիք, եւ ձեր աշխատանաց ստուղբ չէք կըր-
նար վայելել եթէ ձեր եղբարց համար անխոնջ սի-
րով չաշխատիք :

Բայց բաւական չէ միայն ճանչնալ Սրարչին ձե-
զի սահմանած նապատակը . պէտք է դիմնաք նաեւ
թէ ինչ միջոցներով այդ նապատակին կրնաք հասնիլ,
առանց որոյ ձեր ջանքերը անպտուղ կը մնան : Խեղճ
եւ վաստակարեկ պանդուխտներ, երեկոյեան օ-
թեւան մը կը փնտռէք . ահա ես ձեզի ճանապարհը
ցուցընեմ :

Ճշմարտութիւնը պատմեմ ձեզ վասն զի ճշմար-
տութիւնն է որ կը փրկէ : Ան ոմանք որ յարմար կը
դատեն ծածկել զայն . խաբեբայք են կամ վատա-
սիրաք, վասն զի ճշմարտութիւնը Սատուած է, եւ ով
ճշմարտութիւնը կը ծածկէ, զՍատուած կը ծածկէ :

Իմաստութիւնը որ խարխաբանաց մէջ մարդուս
առաջնորդն է մարդկային ճշմարիտ օրինաց ծանօ-
թութեան եւ գործածութեան վրայ կը կայանայ .
եւ այս օրինաց բովանդակութիւնն է հիմն բարոյա-
կանի զոր ՊՍՐՏԲ եւ ԻՐԱՆՈՒՄԲ կանուանե՛ք :

Ոմանք միայն ձեր պարտքերը կը սորվեցընեն ձեզ, ուրիշները միայն ձեր իրաւունքները կը մեկնեն ինչ որ ըստ ինքեան անբաժանելի է, բաժանելը վտանգաւոր է : Պէտք է որ ճանչնաք թէ ձեր պարտքերը, եւ թէ ձեր իրաւունքները, որպէս զի առաջինները կատարէք եւ վերջինները պաշտպանէք . ուրիշ միջոց չունիք ձեր թշուառութենէն դուրս ելլելու :

Իրաւունք եւ պարտք զոյգ արմաւենեաց կը նմանին որ պտուղ չեն բերեր եթէ ոչ քովէ քով աճին : Իրաւունքը դուք իսկ էք, ձեր կեանքն եւ ձեր ազատութիւնն է :

Միթէ ամէն մարդ իրաւունք չունի ապրելու, միթէ իրաւունք չունի Աստուծոյ տուած պարգեւը պահպանելու :

Միթէ ամէն մարդ իրաւունք չունի առանց արգելքի մտաւոր եւ մարմնաւոր կարողութիւնները կրթել եւ դարգացընել, որպէս զի իր պիտոյքը հոգայ, իր վիճակը բարւոքէ, եւ անասնոյ կեղեւը մերկանաչով 'ի կատարելութիւն դիմէ :

Միթէ կարելի է խեղճ մարդ մը բռնի իր ազիտութեան եւ թշուառութեան, մերկութեան եւ տկարութեանը մէջ պահել, երբ նա կը ջանայ անկէ դուրս ելլել առանց մէկուն մնասելու, եւ եթէ մնասէ՝ կը մնասէ անոնց միայն, որ իրենց հանգըստութիւնը անօրէնութեան վրայ հիմնած են :

Այդ չար մարդոց բարկութիւնը, երբ տկարը շղթայները կը թօթափէ, միթէ չի նմանիր վայրագ գաղանին բարկութեան որոյ զոհը իրեն գէմ մաքառի . եւ միթէ իրենց գանդամները չեն նմա-

նիր արժուոյն որոյ որսը ձեռքէն կը փախչի :

Արդ ինչ որ սմանց համար ճշմարիտ է, ամէնուն համար ալ ճշմարիտ է. պէտք է ամէնքն ապրին, պէտք է ամէնքը օրինաւոր ազատութիւն մը վայելեն եւ ազատ դորձեն, իրենց վախճանը լեցընելու համար : Այտք է ուրեմն փոխադարձաբար յարգել մէկ մէկու իրաւունքը, եւ հոս կըսկսի պարտաւորութիւնը եւ արդարութիւնը :

Բայց լոկ արդարութիւնը մարդկային պիտոյից անբաւական է : Յիրաւի իւրաքանչիւր ոք կրնայ լիովին վայելել իր իրաւունքն իր մասնաւոր իշխանութեան մէջ, բայց ամբողջին օգնութենէն եւ ձեռնառութենէն զրկուելով՝ առանձին կը մնայ աշխարհիս մէջ :

Եթէ մարդ մը հացի կարօտ է, թող խնդրէ, կըսեն, միթէ ես կարգելովմ զինքը : Ես իր ըստացուածքը չի կողոպտեցի : Այսպէս ամէն մարդ ինքրդինքը կը հողայ կայենի խօսքը կրկնելով « միթէ ես եղբօրս պահապանն եմ » : Այրին, որքը, հիւանդը եւ տկարը երեսի վրայ կը մնան : Զիկայ փոխադարձ ձեռնառութիւն . ամէն կողմ անձնասիրութիւն եւ անտարբերութիւնը կը տիրեն : Աչ ճրջմարիտ սիրով կապեալ վշտերնին եւ ուրախութիւննին իրարու կը հաղորդեն, եւ ոչ շնչերնին իրարու կը խառնեն :

Աեանքն ամենուն սրտին խորը թաղուած, կը մարի նման գերեզմանի մէջ կախուած կանթեղի, որ մարդկութեան մնացորդները կը լուսաւորէ, վասն զի ինչ է այն մարդը որդգացմունք, գութ, համակրութիւն եւ սէր չունի, եթէ ոչ զիակ մը որ կը շարժի :

Եւ որովհետեւ մէկ մէկու կարօտ ենք, կարօտ ենք մէկ մէկու վրայ կրթնել, դիւրաբեկ բոյսերը զորս թեթեւ հողմիկը կը շարժէ եւ կը ծռէ, որովհետեւ մարդկային ցեղը կը ջնջուի եթէ մարդիկ չի հաղորդակցին եւ չի փոխանակեն ըստ արդարութեան օրինաց իրենց սասցած մասնաւոր ինչքերը, ուրիշ օրէնք մը հարկաւոր է մարդկային ցեղին պահպանութեան համար եւ այս օրէնքն է ողորմածութիւն. ողորմածութիւնը որ մարդկութեան ցըրուեալ անդամները իրարու մերձեցընելով մէկ մարմին կը ձեւացընէ, ողորմածութիւնը պարսաւորութեանց գործադրութիւն եւ իրաւանց նախնական հիմն է:

Ն^{օնչ} կըլլայ այն մարդը եթէ երկրիս վրայ բնաւ ազատութիւն չունենայ՝ եթէ առանց ուրիշի մը հրամանին կամ հաւանութեան՝ չի կարենայ երթալ, գալ եւ գործել: Ն^{օնչ} կըլլայ եւ այն ժողովուրդը որ սոյն պայմաններով կապեալ է: Չայրի գաղանակները աւելի երջանիկ եւ նուազ անարդանօք կապրին անտառաց մէջ:


Եւ սակայն ինչ կըլլայ այն մարդը որ անձնասիրութեամբն ինքն իր վրայ կեդրոնացած է, որ թէպէտ ոչ մէկուն օգնելով եւ միայն ինքը զինքը հողալով, միայն իրեն համար կապրի: Նմանապէս ինչ կըլլայ այն ժողովուրդը որոյ անհասաները իրարու հետ կապուած չեն, ուր ոչ ոք ուրիշի աղէտից վրայ կը ցաւի եւ ոչ ոք պարտք կը համարի իր եղբարցը օգնել. ուր փոփոխակի ծառայութիւն մատուցանելը, գթասէր եւ ողորմած ձեռնտուութիւնները շահոյ հաշիւներ են. ուր վշտացելոյն ողբը,

ցաւոց հեծեծանքները, յուսահատութեան հառա-
չանքը եւ քաղցելոյն ձայնը օդոյն մէջ կը ցնդին
ընդունայն աղաղակներու պէս . ուր անհատն ամ-
բողջին եւ ամբողջն անհատին ոչինչ կը շնորհէ սի-
րոյ դաղանի դրդմամբ, վասն զի ստացուածքը ան-
ծանօթ է սիրոյ եւ ունեցածը տալով միայն կրնայ
վայելել :

Յորենը ժողովելէն յետոյ կալին մէջ մնացած
թեթեւ փոշւոյն կը նմանի այսժողովուրդը, որ
շուտով ցեխին մէջ կը փառի եթէ հողմը չի ցրուէ
որոյ Աստուած կը հրամայէ երկրիս վրայէն փչել
անցնիլ եւ դայն մաքրել :

Համայն բնութիւնը կը սորվեցնէ մեզ թէ ան-
հրաժեշտ մէկմէկու կարօտ ենք : Աչքերնիս չորս
կողմ դարձրնելով շարունակ յիշել կը պարտաւո-
րիմք փոխադարձ ձեռնտուութեան, անճնանուի-
րութեան եւ սիրոյ աստուածային պատուէրը : Մի-
ծառները կը միանան երբ ժամանակը կուգայ ու-
րիշ կլիմայից թակ երթալ փնտուել երկնային Հօր
իրենց համար պատրաստած սնունդը . յետոյ ա-
ռանց իրարմէ բաժնուելով իրրեւ օգահերձ նա-
ւավարք, կը թիավարեն դէպի այն ամուսնքն ուր
խաղաղութեան եւ առատութեան մէջ կը հանդ-
չին : Միթէ ծիծառնիկ մը առանձին կարող է ճո-
ղոպրիլ ճանապարհին վտանգներէն : Բայց ամէնքը
միանալով հողմոց դէմ կը դնեն եւ զօրաւոր թե-
ւերը տկար կամ վաստակարեկ թեւոց նեցուկ
կրլլան : Գեռափիթիթ դարնան մատաղ եւ հեղիկ
արարածներն իրենց անդրանկաց պաշտպանու-
թեամբ եւ հսկողութեամբն հասնելով այն հեռա-

ւոր երկիրը՝ ուր նախախնամութիւնը ծովերուն
վրայէն իրենց առաջնորդեց՝ կը յիշեն իրենց ծը-
նընդեան բոյնը եւ առաջին ուրախութիւնները ,
այն անպատուժ եւ խորհրդաւոր ուրախութիւննե-
րը զորս Աստուած ամէն արարածոց կը պարգեւէ
իրենց խանձարուրին մէջ :



Ե .

Ըսի ձեզ . ձեր իրաւունքը դուք իսկ էք . ձեր
կեանքն եւ ձեր ազատութիւնն է : Միթէ ամէն
մարդիկ ուրոյն ուրոյն իրարմէ որոշ չեն : Միթէ
չունի ամէն մարդ յատուկ եւ անկախ էութիւն ,
մարմնաւոր գործարաններ , խելք եւ կամք :

Արդ մասնաւոր օրինաց համեմատ , եւ համա-
ձայն տիեզերական օրինաց դանձր պահպանել եւ
զարգացնելն է իրաւունք եւ ասկէ դուրս չկայ
կարգ , ոչ յառաջադիմութիւն եւ ոչ գոյութիւն .
հետեւաբար իրաւունքն ամէն անհատին էութեան
մէջ արմատացած է :

Ուստի իրաւունքը նախնական եւ արմատական
ակզբանց մէջ անսխալորելի է : Արնայիք երեւակա-
յել որ մէկը իր էութիւնը վաճառէ , ուրիշի մը
տայ , ուրիշի մը յատկացընէ : Աարող եմք եւ պար-
տիմք երբեմն մեռնիլ մեր եղբօր համար . բայց
չեմք կարող զինքն 'ի մեզ կերպարանափոխել կամ
մենք 'ի նա կերպարանափոխիլ :

Ինքը զինքը պահպանելու կամ ապրելու իրա-
ւունքէն յառաջ կուգայ կենաց պարէնը ճարելու

անհրաժեշտ իրաւունքը: Տիեզերաց արարիչը ոչ
անասուններէն աւելի չար վիճակ տուաւ մարդուս՝
միթէ ամէնքը բնութեան ճոխ խնջոցից հրաւիրեալ
չեն, միթէ մէկը գրկուած է: Լոյծ հիւլէին մէջ
յորում, ինչպէս կէտը յՈվկիան, աչաց անզգալի
ճճին կերթեւեկէ, նախասնամութիւնը իր կենաց
կարեւոր սնունդը դրած է. եւ ան կը ծծէ իր կաթի
կայլակն մօր բնութեան մշտաբուխ ստինքներէն.
բնութիւնը այսպէս զամէն արարածները կը ջամբէ
ըստ չափու իրենց պիտոյիցը:

Բայց մարդս որ ամէն արարածոց գերազայնն
է երկու տեսակ կեանք ունի, նիւթական եւ մը-
տաւոր. «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ այլ բա-
նիւ որ ելանէ 'ի բերանէ Աստուծոյ» այսինքն ճշ-
մարտութեան որ մտաց սնունդն է:

Ինչ պիտի ըլլար մարդս առանց բարոյականի
գիտութեան որ առաքինական վսեմութեամբն կը
միացընէ զինքը 'Աստուծոյ եւ իր ընկերացը հետ
եւ կը զատէ անբանէն Անմահ Կակին մշտավառ
ճառագայթովն լսաւորեալ՝ կը գիտէ եղած եւ ըլ-
լալիք անանց, անսիրտիս գաղտնիարներն եւ իրաց
ճշմարիտ կերպարանքները:

Յւ եթէ այս բարձրութենէն յորմէ իր անաս-
ման ճակատագիրը կը նշմարէ, յուսոյ անխոնջ թեւը
իւր ընդարձակութեան մէջ տարածելով, եւ ներքին
զօրութիւն մը կըզգայ որ զինքը յանհունս կը ձգէ
ինչպէս թեթեւ մարմին խորէն ծովուն երեսը կելլայ
եթէ այդ բարձրութենէն իր ծննդեան անձուկ հով-
տին մէջ իջնայ ինչ պիտի ըլլար դարձեալ առանց
գիտութեան որով բնութեան օրինաց հասու կըլ-

չայ, բնութեան կը տիրէ եւ բերքերն իր պիտոյից
կը գործածէ, գիտութեան անյաղթ զօրութեամբը
դիմեալ, գիտութեան իսկ կիշխէ եւ կատիպէ իր
կամայր հնազանդիլ, եւ վերջապէս իմացականութեան
թիւնն անեզրաբար ընդարձակելով իր գործոց աս-
պարէզն ալ կընդարձակէ:

Արսէ երկրիս. թնդ այս բոյսը ծոցիդ մէջ բուս-
նի. եւ բոյսը կը ծլի որպէս զի պտղովը դինքը սը-
նուշանէ:

Արսէ հողմոց. տարէք զիս աշխարհիս միւս ծայ-
րը. եւ հովերը հնազանդելով իր փափաքած ա-
փանց վրայ կը փոխադրեն դինքը:

Արսէ շողւոյն. իմ բազկացս գործը կատարէ,
տուր ինծի քու հրաշալի զօրութիւնդ. եւ մինչ-
դեռ ինքը կը հանդչի՝ այն կոյր զօրութիւնը դար-
մանալի կանոնաւորութեամբ կը գործէ իր մտաց
յղացածը:

Բարոյական օրինաց ծանօթութիւնը, տիեզերական
օրինաց ծանօթութիւնն է. այս է մտաւոր կեանքը
եւ ամէն անհատ այս ծանօթութեան իրաւունքն
ունի, վասն զի ամէն անհատ իրաւունք ունի ապրե-
լու, զարգանալու եւ ինքզինքը պահպանելու:

Արդ զարգանալ ըսելով՝ կիմանամք ածիլ առանց
արգելքի եւ իր կարողութիւնն ազատաբար հաղոր-
դել ամէն այն բանին, որում հասու կըլլայ ներքին
դրդմամբ, առանց տիեզերական կանոնաց սահ-
մաններէն դուրս ելլելու. ուսկից կը հետեւի թէ
իրաւունքը ազատութենէն նիւթականապէս ան-
բաժան ըլլալով, ազատութեան հետ կը խառնուի
իր գործադրութեան մասին:


Ոչ երբէք մարդս ուրիշ մարդու մը կը սեպհա-
կանի: Միթէ ըստ բնութեան ամէնքը հաւասար
չեն: Ի՞նչ իրաւամբ ուրեմն կրնայ պահանջել որ
ուրիշներն իրեն հոլատակին: Ամէն մարդ իւր ան-
ձին տէր ըլլալով կրնայ իւր անձին հրամայել: Ապա
թէ ոչ ամէն բանաւոր եւ կամաւոր արարած, որ
ըստ իւր որոշման կարող է գործել կամ ոչ գործել
ինքնաշարժ մեքենայ մը կը գառնայ, հակառակ աստ-
ուածային տրամադրութեան: Սրդ կը հարցընեմ
ձեզ այսպէս պէտք է ըլլայ մարդս. կրնա՞ք ըմբռ-
նել մարդկային արարած մը առանց բանաւորու-
թեան, կամ բանաւորութիւն առանց կամքի, կամ
կամք առանց գործոյ, կամ գործ, որ եթէ բուն
իրմէ կախումն չունենայ կարող ըլլայ իրօք ար-
տադրել:

Այսպէս ահա ազատութիւնն իրաւունքն իսկ է
եւ իրաւունքն ազատութիւնն իսկ է: Եթէ ազա-
տութիւնը վերցուի, բարոյական կարգը կը վերցը-
ուի: Ի՞նչ արժէք եւ ի՞նչ պատասխանատուութիւն
ունի այն մարդը որ այնպէս կը մտածէ, կը հաւատայ
եւ կը գործէ, ինչպէս իրեն կը հրամայեն: Չկայ իրեն
համար ոչ ուղիղ եւ ոչ սխալ ոչ բարի եւ ոչ չար:

Բարին եւ չարն ընտրութիւն կը պահանջեն,
ազատութիւնն 'ի ցոյց կը բերեն, եւ ազատութիւնն
որ կանոնաց եւ կենաց ընդհանուր հանդամանաց
ենթակայ է, սահմանակալ եւ գծեալ է ոչ մարդկա-
յին պատուիրանաց՝ այլ աստուածային օրինաց մէջ.
այսինքն մարմնաւոր ազատութիւնը բնագիտական
օրինաց, եւ մտաւորն արդարութեան եւ իմացա-
կանութեան օրինաց մէջ:

Աստուծմէ դատ ուրիշ տէր չունիք . Աստուած
կուզէ որ իրեն նման ազատ ըլլաք եւ ձեր ջանիւք
եւ իր օգնականութեամբ արժանի ըլլաք օր մը յա-
ւիտեանս իրեն միանալ :

Փառք եւ գովութիւն իրեն որ մարդս ստեղծեց
եւ իրեն դերագոյն վիճակ մը սահմանեց եւ այն
անհամար աստղերը որ անսահմանութեան մէջ օրի-
նուած են , իր ճանապարհը լուսաւորող ջահեր են
որոյ կատարածը՝ կենաց կատարելութեան եւ ամէն
բարեաց աղբիւրն է :



Զ .

Ս, յս է էական իրաւունքը , եւ այս է անճնական
պահպանութեան սկզբունքն եւ օրէնքն : Արեւի
է իրաւունքը բռնաբարել բայց նա այս բռնաբա-
րութեան դէմ հանապազ կը բողոքէ . իրաւունքն
իրօք սնեղծանելի է , վասն զի ամէն բան կոչնչա-
նայ եթէ իրաւունքը ջնջուի : Բայց մարդս միայ-
նակեաց չէ . Աստուած զինքն առանճնական կենաց
ենթարկած չէ : Իր նմանեաց հետ միանալով կը
դարգանայ ընկերութեան մէջ : Եւ անհատից միու-
թիւնը ժողովուրդը կը կազմէ , եւ ժողովրդոց մի-
ութիւնը մարդկային ցեղը՝ աիեղերական ընտանիքը
կը կազմէ . որուն հաստատութեան պէտք է շարու-
նակ աշխատինք որպէս զի անճնասիրութենէ սեր-
եալ չարիք , հետզհետէ նուազին եւ որպէս զի նոյն
համեմատութեամբ կրկնապատկին բարիք զորս նա-

խախնամու թիւնը մեր ճանապարհին մէջ կը սփռէ :
Նրբ ծառ մը ծովուն եզերքն առանձին ածի հո-
վերը իր տկար բունը ծռելով մատղաշ ճիւղերը
կը կոտորին, կը չորնայ եւ կը ցամաքի : Այսպէս է եւ
մարդս երկրիս վրայ . բաւական չէ որ անձրեւն իր
արմատը ոռոգէ, պէտք է նաեւ որ նեցուկ մը գրա-
նայ եւ ոստերը բարձրանալով ուրիշ ոստոյ վրայ
յենուն :

Որ եւ է մարդկային ընկերութեան մէջ իւրա-
քանչիւր անդամ իր իրաւունքը յառաջ կը բերէ
ինչպէս վերը բացատրեցի եւ դայն անփոփոխ կը
պահէ . վասն զի իրաւունքը, դարձեալ կը կրկնեմ,
ոչ կը փոխուի եւ ոչ կը փոխադրուի, եւ այս ամէ-
նուն համադունակ իրաւանց ամբողջութիւնը, ժո-
ղովրդեան իրաւունքը, ընկերական իրաւունքը կը
կազմէ . վասն զի ընկերութիւնը ժողովրդէն կը բաղ-
կանայ եւ առանց որոյ եւ ոչ վայրկեան մը կարող
է էութիւնը պահել :

Ժողովուրդը ուրեմն, ինչպէս անհատն, ապրե-
լու, ինքզինքը պահպանելու եւ զարգանալու իրա-
ւունքն ունի : Այն որ այս իրաւանց մնասել ուզէ,
Արարչին իրաւունքը կը բռնաբարէ եւ որչափ այս
բռնաբարութիւնը դորաւոր ըլլայ, այնչափ դորա-
ւոր կըլլան անկէ յառաջ եկած չարիք :

Եւ հիմա, ո՞վ ժողովուրդ, ըսէ ինձ ինչ եղաւ
իրաւունքդ երկրիս վրայ, ըսէ ինձ, ինչ էր երբեմն
եւ ինչ է այժմ խեղճ եւ վաստակաբեկ կեանքդ :

Քերի 'ի սկզբան՝ ծառայ ապա շատ դարեր,
միշտ ընկճեալ, միշտ հարստահարեալ, նման այն
գաշտին, զոր գարնան մահադադով կը հնձեն եւ աշ-

նան անյադ ատամանց ճարակ կուտայ, ինչ օգուտ
քաղեցիր ծաղրելի աղատութենէդ :

Ինչո՞ւ ցաւօք կը թափառիս երկրիս վրայ, որ ա-
ռանց բացառութեան ամէն մարդոց ժառանգու-
թիւնն է եւ որոյ ամէն մարդիկ պարտէին իջրեւ
տէր իշխել :

Ինչո՞ւ, մինչդեռ երկիրս առատ բերքեր կը պար-
գեւէ, զոր աշխատութեամբդ կը բազմապատկես,
անձկանօք անօթի կը հեծես դու յաճախ :

Ինչո՞ւ ոչ ձմեռուան ցուրտ հողմոց, եւ ոչ ա-
մառուան արեւուն կիզիչ ճառագայթներուն դէմ
ապաստան մ'ունիս :

Ինչո՞ւ ոչ հաղուտ ունիս հիւժեալ անդամներդ
ծածկելու եւ ոչ քօղ մը մարմինդ պատատելու,
երբ դքեղ մահու փոսը իջեցընեն, ուր միայն հան-
դիստ կրնաս գանալ :

Երբ յամպերէն անձրեւ տեղայ, հաւասարապէս
կողողէ եւ կը գովացընէ թէ հովտին մէջ ծածկը-
ւած նորափթիթ բոյսը եւ թէ լեռան վրայի ծառն
որ ոստերը հեռուն տարածելով՝ հպարտ գլուխն 'ի
վեր կը բարձրացընէ :

Ինչո՞ւ ներկայն հողալով, ապագայն հողալով, ըն-
տանեկան ուրախութիւններդ դառն անձկութեանց
փոխուեր են : Բնութեան սեղանին առաջ ուր երկ-
նաւոր Հայրն կուգէ որ ամէն որդիքն նստին, ին-
չո՞ւ բաժակդ պղտոր գինւով լցեալ է :

Մանուկ հասակէդ 'ի վեր մարմնաւոր աշխա-
տութեանց մէջ թաղուած, ինչո՞ւ այն անմահ լուսոյ
որ սնունդ է մտաց, քանի մը վերջին եւ սկար ճա-
ռագայթները հազիւ կը հասնին քեզ, ինչո՞ւ դի-

տութեան պայծառ աստղը չի ծաղկեր 'ի հոր'դոնն
երկրիս, որոյ խաւարն զքեզ կը պատէ :

Մտաբաւոյս մեր կեանքը երկրիս վրայ առանց
ցաւոյ չի կրնար ըլլալ : Հոգ եւ վիշտք որ մեր ջան-
քը կը դրդեն, ընդհանուր յառաջադիմութեան պայ-
մանն են :

Մտաբաւոյս մարդիկ, թէպէտ հաւասար իրա-
ւունք, բայց ոչ հաւասար կարողութիւններ ու-
նին, ոչ ամէնքը դարդանալու յաջող հանդամանօք
կը ծնանին : Եւ այս անհաւասարութիւնը հասարա-
կաց բարւոյն նպատակօր է, վասն զի անհաւասար-
ութիւնէ տեղի կուեննան տարբեր ձիրք եւ մաս-
նաւոր յարմարութիւն վարել զանազան պաշտօն-
ներ որ ընկերական կենաց արդասիք են :

Բայց հասարակաց բարւոյն պէտք է ամէնքը
մասնակից ըլլան, հասարակաց կ'ըսեմ վասն զի մե-
ծագոյն մասին այսինքն ժողովրդեան կը վերաբերի
եւ ոչ մէկ քանի անհատից կամ մէկ քանի դասերու
միայն : Եւ յիրաւի եթէ մէկը հարստութեանց մէջ
ընկղմեալ է, ուրիշներն աղքատ մնալով՝ կրնանք իր
հարստութիւնը հասարակաց հարստութիւն կոչել :

Արդ զրեթէ ամէն տեղ բարիք՝ բնականապէս
ամէնուն սահմանեալ 'ի բաժին արուած են մասնա-
ւոր մէկ քանի անհատից, որ զժողովուրդն իրենց
լծին ներքեւ ունելով եւ մոռնալով եղբայրական
զգացումները, կը գործածեն զինքն իրրեւ անա-
սուն՝ զոր ցերեկը սայլին կը լծեն եւ որոյ առջեւ ե-
րեկոյեան ափ մը յարդ կը նետեն ախոսին մէջ :

Եւ ահա այսպէս կը վարուին ժողովրդեան հետ
եւ այսպէս զինքը ծառայութեան, տգիտութեան,

Թշուառութեան եւ նուաստութեան մէջ կը պահեն, մասն զի ընկերութեան իշխելով, ըստ իրենց հաճոյիցը կը կարգադրեն անձնական օգուտն միայն նպատակ ունելով եւ որպէս զի կարող չըլլայ իր շահերը պաշտպանել, ժողովրդեան թեւերը կը կապեն իրողութեամբ քաղաքական իրաւունքներն, արդիւելով իրեն օրինաց կադմութեան եւ ներքին դործոց մատակարարութեան մասնակցիլ եւ պահանջելով իրմէ միայն կոյր հնադանդութիւն :

Սշխարհիս մէջ դանուած շարեաց մեծագոյն մասն ասկէ յառաջ կուգայ, զորս թեթեւցընել անհնարին է քանի որ բնական հաւասարութիւնն անիրաւութեամբ կը բռնարարեն :



է.

Նսէ ով ժողովուրդ թէ ինչ կըսեն քեզ եւ ինչ քանի կը նմանցընեն . կըսեն թէ իրենք հովիւք եւ դու իրենց հօտն ես, այսինքն դու անբան եւ իրենք մարդ : Ուստի իրենց բաժինն է բուրդդ, կաթդ եւ միսդ : Արածէ իրենց հովանաւորութեան ներքեւ եւ բաղմապատկէ, որպէս զի իրենց անդամները տաքցընես, իրենց ծարաւն անցընես եւ իրենց քաղցը յագեցընես :

Կըսեն նաեւ թէ թագաւորական կարողութիւնը կը նմանի հօր մը կրտսեր որդւոց վրայ ունեցած խնամակալութեան : Արով ժողովուրդը ոչ աղատութիւն եւ ոչ ստացուածք ունենալով, ոչ ճանչնալով ինչ որ իրեն համար բարի կամ չար

օգտակար կամ մնասակար է, իշխանաց միանե-
ծան հպատակութեան ներքեւ կապրի, որոնք կը
հրամայեն իրեն եւ ամէն բան ըստ հաճոյից կը
կարգադրեն :

Ոմանք դօրութիւնն իրաւընտիր տէր կը ճանչ-
նան ընկերութեան . իշխանութիւն դօրաւորին, ի-
րաւունք դօրաւորին : Խեղճ ժողովուրդ, ոտքի
տակ առած կընկճեն դքեղ . այս է տկարին ճակա-
տագիրը, ինչ կը դանդաւորի : Միամտաբար կը հար-
ցընեն բռնութեան թէ մեր են տիազոսները, դար-
ձնու աչքերդ չորս կողմ եւ տես, տես շողշողուն
սուխնները, տես հրապարակաց մէջ շարուած թըն-
դանօթները :

Եսկ ոմանք կերեւակայեն թէ իշխանութիւնը
մէկ երկու ազնուական ցեղաց սեփական իրա-
ւունքն է, կամ թէ Աստուած մասնաւոր վախճա-
հաւ մէկ քանի ընտրեալ անձանց կամ ընտանեաց
կը շնորհէ յաւիտեանս իշխանութիւն վարել : Յա-
ւիտեանս ուրեմն ժողովուրդք պարտին իրենց կոյր
եւ կատարեալ հնազանդութիւն : Այսն դի յԱստու-
ծոյ կարդեալ իշխանաց կամքը, ժողովրդեան հա-
մար Աստուծոյ իսկ կամքն է եւ հետեւաբար ար-
դար կը համարուի, եւ ինչ որ ալ պատահի, ինչ
անկարգութիւն, ինչ անիրաւութիւն եւ ինչ մե-
ծամեծ ոճիրներ ալ դորձեն, ժողովուրդն իրաւունք
չունի իրենց բռնաւոր իշխանութեան լուծը թօ-
թափել :

Եւ ահա ԱՍՏՈՒԱՅԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔ կը կոչեն զայս :

Ո՛վ ժողովուրդ մի հաւատար այս ստութեանց :
Թո՛ղ ամպարիչարը հայհոյէ Սրարչին դէմ, դու ճանչ-

ցիր Աստուածային ճշմարիտ օրէնքները, ճանչցիր
իրաւունքդ զայն ձեռք բերելու համար:

Մարդիկ հաւասար կը ծնանին եւ հետեւաբար
մէկմէկէ անկախ են. ոչ ոք հրամայելու իրաւունքն
իրեն հետ կը բերէ յաշխարհ դալով: Նթէ 'ի սկըզ-
բան իւրաքանչիւր ոք ուրիշի մը կամաց հպատա-
կելու պարտաւոր ըլլար, ոչ բարոյական ազատու-
թիւն եւ ոչ գործելոյ ազատ ընտրութիւն պիտի
ըլլար, ոչ մեղք ոչ առաքինութիւն պիտի ըլլար,
վասն զի առաքինութիւնը՝ բարւոյն եւ չարին ա-
զատ ընտրութենէն կախումն ունի:

Արդ անձնական անկախութիւն եւ իշխանու-
թիւն մի եւ նոյն են եւ մարդս ուրիշ մարդոյ նը-
կատմամբ ազատ եւ ինքն իր իշխանն ըլլալով, մը-
տաւորական արարած մըն է, պատասխանատու առ
Աստուած եւ ընդունակ առաքինութեան, վսեմ եւ
խորհրդաւոր նշան բանականութեան, անձնական
իշխանութիւն կամ ազատութիւնն որով մարդս իս-
կապէս կը զանազանի անբանէն, վասն զի անբանը
ճակատագրոյն ենթակայ, ճակատագրէն մղեալ
կոյր էութեան նեղ շրջանին մէջ կը գտնայ ինչ-
պէս երկնային մարմիններն իրենց գծեալ սահմա-
նին մէջ:

Ոչ ոք կրնայ իր իշխանութիւնը փոխադրել,
վասն զի չի կրնար հրաժարիլ իր իսկութենէն կամ
մարդ ըլլալէ դադրիլ. եւ ամէն անհատի իշխանու-
թենէ յառաջ կուգայ ընկերականութեան հաւաքա-
կան իշխանութիւնը կամ ժողովրդեան իշխանու-
թիւնն որ նմանապէս անփոխադրելի է:

Նրբ համակրութեամբ մը մարդիկ կապուին եւ

մէկմէկու օգնելով փոխադարձ ձեռնառուութեան եւ համօրէն աշխատութեամբ ընկերութիւն մը հաստատեն, ուստի կախումն կունենայ այս ընկերութիւնը եթէ ոչ իրմէ :

Ս, մէնքն ընկերութեան մէջ կը մտնեն հաւասար իրաւունքով թէեւ անհաւասար կարողութեամբ եւ զանազան ընդունակութեամբ : Երեւնց յարաբերութիւնները զիրենք 'ի միութիւն դրդող զօրաւոր եւ ներքին զգացման եւ այս միութեան առաւելութեանց վրայ հիմնեալ են, եւ այս յարաբերութիւններն իրենց ազատ հաճութենէն եւ իրենց դրած կանոններէն կախեալ են :

Ոչ ոք կրնայ բռնադատել զուրիշ մը հակառակիլ կամաց երբ ամէնքը զանազան պայմանօք միանալով ժողովուրդ ձեւացուցեր են, ժողովրդեան կամքը կամ ընկերութեան ընդհանուր կամքը կազմեն օրէնքը, միայն թէ բարոյականի հիմնական եւ անսխալ կարգը, կամ արդարութիւնն եւ ողորմածութիւնն անարատ պահուին : Ս, յսպէս ահա առանց եղծանելու կամ փոփոխելու նախնական ազատութիւնն, օրէնքն ազատութեան կիրառութիւնն է ամէնուն ձեռնառուութեամբն ամէնուն օգտակար ըլլալու վախճանաւ : Եւ եթէ մէկը կամ ոմանք փորձեն իրենց մասնաւոր կամքը ընդհանուրին կամաց փոխանակել, իրենց կանոնադրութիւնները չեն կրնար օրէնք համարուիլ, այլ պրղծութիւն օրինաց եւ անիրաւ դործ՝ ընդդէմ ճշմարիտ ընկերութեան :

Երբ ուրեմն տէրութեան մը մէջ հաւասարութեան բնական հիմունքը տասլալելով, մասնաւոր

դասեր, այսինքն աշխուականք եւ հարուստք մի-
այն օրէնսդրական իշխանութիւնը վարեն, անխ-
րաւութիւն եւ բռնութիւն է, վասն զի ճշմարիտ
ընկերութիւնը տիրապետութեան կը փոխուի: Նն-
չո՛ւ ունանք հրամայեն, եւ ինչո՛ւ ունանք հնազան-
դին: Ո՞վ զատոնք անոնց հպատակ ըրաւ. ո՞վ ըսաւ
եղբարց. նուաճեցէք ձեր եղբարքը, իշխեցէք եւ
ինչպէս հաճոյ թուի ձեզ, այնպէս անօրինեցէք զի-
րենք, իրենց ինչքը, աշխատութիւնն եւ աշխա-
տութեան արդիւնքը:

Սնվաւեր են այն օրէնքներն որոց ժողովուրդը
գործակից չէ, որ ժողովուրդէն ծագած չեն:

Թագաւոր, իշխան, տիրապետական դորութիւն
եւ ասոնց նման բառերով կը շլացնեն ձեր աչքե-
րը: Ըսի ձեզի թէ թագաւորը դուք էք, եւ իս-
կապէս ազատ ժողովուրդն է: Նշխանութիւնը թէ
եւ մէկ կամ մէկ քանիք կը գործադրեն, բայց ժո-
ղովուրդէն կը բղխէ: Թագաւորն օրինաց եւ ժո-
ղովրդեան կամաց գործադիրն է եւ ուրիշ պաշ-
տօն չունի: Սյս նպատակաւ ընտրեալ գործակալ
մ'է, իր պարտքն է ոչ հրամայել այլ հնազանդիլ.
եւ եթէ մերժէ հնազանդիլ, իբրեւ դրժող պատ-
գամաւոր՝ ժողովուրդը զինքը կը հրաժարեցընէ:

Սյս եւս պէտք է գիտնաք թէ երբ ձեր թըշ-
ուտութեան դառնութեանը չժուժալով դուն գոր-
ծէք ձեր կողմապետալ իրաւունքը ձեռք բերել, ձեր
հարստահարիչք՝ կամբաստանեն զձեզ իբրեւ վրդո-
ւիչք խաշաղութեան եւ իբրեւ ապստամբք: Սպըս-
տամբ, որո՞յ դէմ. այն է ապստամբութիւնն որ
ճշմարիտ թագաւորին դէմ յարուցեալ է, եւ ճըշ-

մարիտ թագաւորը ժողովուրդն է . եւ միթէ կրնայ
ժողովուրդը ժողովրդեան դէմ ապստամբիլ : Ա-
նոնք են ապստամբք որ 'ի վնաս ժողովրդեան ա-
նիրաւ առանձնաչնորհութիւններ կը վայելնն , որ
խարդաւանութեամբ կամ բոնութեամբ ժողովուր-
դըն իրենց իշխանութեան ներքեւ ընկձել կը յաջո-
ղին . բայց երբ ժողովուրդն այս իշխանութեան
լուծը փշրէ , ոչ թէ խաղաղութիւնը կը վրդովէ ,
այլ զայն կը հաստատէ եւ Աստուծոյ գործը միշտ
արդար կամքը կը կատարէ :



Ը .

Ո՛վ դուք ճանրարեկ վաստակօք եւ ցաւօք , որ
դր'լեալ էք այս բարերեր եւ դեղեցիկ երկրիս պար-
դեւներէն , ինչո՞ւ մինչդեռ բնութիւնն առաւօտ-
եան կը դարթնու եւ կը ժպտի , մինչդեռ նորածին
թռչունք իրենց ցօղաթուրմ թիւերը կը շարժեն
եւ ոստոց վրայ օրհնութեան երգեր կը ճռուողեն ,
ինչո՞ւ ձեր աչքերն արտասուաթոր եւ ձեր շրթուն-
քը մունջ են : Ինչո՞ւ արեւեկքին ոսկեղօծ դռներէն
բղխած անոյշ լոյսը ձեր ճակտին արամութիւնն չը
փարատեր :

Մեղուակն փեթակ ունի , իսկ դուք բնակարան
չունիք . աքաղաղը ցրտէն պաշտպանուելու համար
մետաքսեայ զգեստ ունի , իսկ դուք մերկանդամ
էք : Ամենաչնչին որդը ծննդեան բուսոյն վրայ թէ
ապաստան եւ թէ սնունդ կը գանէ , իսկ դուք
ոչ մէկն եւ ոչ միւսն ունիք :

Այ թէ նախասխանամութիւնք զձեզ մտացեր, այլ
Սատուածոյ պարգեւները մարդիկ ձեզմէ կը յափշտա-
կեն: Իր առատ տուրքերէն ինչ թողուցեր են ձե-
զի. ծովէն կաթիլ մ'ալ անգամ առնել կ'արգելուն
ձեզ, վասն զի ոչ ձերն է այլ անբութեան:

Ձեր աղէտքն ընկերութեան ախտերէն յառաջ
կուգան, վասն զի ընկերութիւնն ոմանց շահախորհու-
րութեամբ բնական վախճանէն շեղեր է եւ քանի
որ օրէնքը մէկ քանի անձանց ձեռքն են, ձեր վի-
ճակը չի փոխուիր: Եթէ այս անձինքներէն ակրն-
կալութիւն մը ունենայիք եւ եթէ ըստ արդարու-
թեան ընդհանուրին մեծագոյն բարիքը փնտռէին
միթէ բարձր աստիճաններու կը փափաքէին եւ մի-
թէ ընդհանուրին գործոց անօրինութիւնն իրենց
միայն կը պահէին. միթէ իբրեւ նախանձաւորք
ձեր շահուց թոյլ չեն տար ձեզ հօգ տանիլ ձեր
գործոց. միթէ ձեզի թէ իրենց համար, միթէ ձեր
օգտին թէ իրենց օգտին համար տիրապետել կու-
ղեն: Եթէ իրենց օգտին համար, ինչ իրաւամբ եւ
ուստի ստացեր են այս առանձնաշնորհութիւնը: Եթէ
ձեր օգտին համար, անկարող կը դատեն ուրեմն զձեզ
դանազանել ինչ որ բարի եւ չար է ձեր շահուն հա-
մար. ըստ իրենց ուրեմն անբան անասուններ էք:

Ամէնքս ալ որդիք եմք մէկ հօր որ է Սատուած
եւ Հայրն ամենեցուն ոչ երբեք եղբարք եղբարց
հպատակեց: Չրօւ մէկուն, Հրամայէ, եւ միւսին
Հնազանդէ: Փոխփոխակի օգնութիւն, ձեռնտուու-
թիւն արդարութիւն եւ ողորմածութիւն պարտիմք
եւ այլ ոչինչ. եւ ընկերութիւնը որ յիմար եւ անկարգ
ախտերովն, հպարտութեամբ եւ շահախորհութեամ-

բըն մարդկայինն ցեղինն տաժանելի բեր մը եղած է, ընկերութիւնն իրօք զօրութեանց եւ կամաց միութիւնն է եւ պէտք էր ըլլալ կենաց նպատակին անվրէպ հասնելու համար. մէկ խօսքով ընկերութիւնն եղբայրսիրութեան կարգադրութիւնն է :

Միթէ ժողովրդոց ձեւանալէն առաջ կային թագաւորք, աղնուականք, սեպուհ եւ ռամիկ : Եւ եթէ անփոփոխ եւ ազատ ժողովուրդը նախագոյ է ամէն պատուոյ, ապա ուրեմն ամէն պատիւ եթէ բռնութեան եւ յափշտակութեան արդասիք չէ, կը բխէ ժողովրդէն, իր անկախ կամքէն եւ անջնջելի իշխանութենէն : Հայրապետութիւն, աղնուականութիւն թագաւորութիւն եւ ամէն նախիշխանութիւն որ պարծի ինքն իրմէ ծագիլ եւ ոչ ժողովրդեան կամքէն եւ իշխանութենէն . ընկերութեան դէմ նենգաւորութիւն յեղափոխական յափշտակութիւն եւ բռնութեան սերմն է :

Ժողովուրդը ոչ դասեր՝ եւ ոչ առանձնաշնորհութիւններ կը կարգէ, այլ պաշտօններ կը շնորհէ : Ս. յաինչ խնամքը ասոր կը յանձնէ, եւ այս ինչն անոր, պարտաւորելով զիրենք կատարել ինչ որ վճռէ, ինչ որ հասարակաց բարւոյն համար սահմանադրէ այլ եւ այլ հանգամանօք զոր փոփոխել եւ որոց տարբեր ձեւեր տալ կարող է միշտ :


Կեղծաւորք որ քրիստոնեայք կոչիք, բացէք քրիստոնէական օրէնքը եւ կարդացէք « թագաւորք ազգաց տիրեն նոցա եւ որ իշխենն նոցա բարեբարք կոչին . այլ դուք ոչ այնպէս, այլ որ մեծն է 'ի ձեզ եղիցի իբրեւ զկրտսերն եւ առաջնորդն իբրեւ զսպասաւորն : »

Աւստի ո՛վ որ յանդգնի ձեր տէրը կոչիլ, ոչ պատասխանեցէք. մի՛ ժուժայք որ մարդիկ բռնութեամբ նուաճեն զձեզ, մի՛ խարուիք երբ յանուն Աստուծոյ ծառայութիւն քարոզելով, կը ճգնին ապշութեան եւ տգիտութեան մէջ ընկղմել զձեզ եւ ապա կըսեն. ժողովուրդը տխմար եւ անխելք է. չէ կարող ինքըղինքը կառավարել. ալէտք է իր շահուն համար իրեն առաջնորդել:

Ընդհակառակն ձեր իրաւունքը կը պահանջէ որ ոչ ոք զձեզ կառավարէ, ոչ ոք ուղած օրինացը զձեզ ենթակայ ընէ, դուք պարտիք հաստատել զօրէնքը. իսկ հասարակաց իշխանութեան աւանդապահ պարզապէս վերընտրելի պաշտօնատէր մը ձեր ՅՍՈՍՅՆ ալէտք է ըլլայ եւ ոչ ինչ աւելի:

Երբ ձեր իրաւունքն ստանալով, իմաստութեամբ տնօրինէք, աշխարհս կերպարանափոխ պիտի ըլլայ. արտասուք պիտի նուազին եւ ոչ այսքան դառն պիտի ըլլան. Քիչ Քիչ չափազանց հարստութիւնն եւ չափազանց չքաւորութիւնն անհետանալով ոչ եւս մարդկութիւնը պիտի չարչարեն: Տժգոյն եւ թախծադէմ քաղցը ոչ եւս ձեր յարկին ներքեւ պիտի նստի: Ամէնքը մարմնոյ եւ հոգւոյ անունդներ պիտի դանեն: Նախախնամութեան պարզեւած բարիքներն եղբայրապէս բաժնուելով բաժանամբ իսկ պիտի բազմապատկեն: Երբ հայր մը վաստակաբեկ երեկոյեան տուն դառնայ, ոչ եւս մանկունքն արտասուելով պիտի խընդրեն յորմէ զուրկ են: Աչ եւս իրենց մանտրիկ ձեռքերը յերկինս պիտի բարձրացընեն բայց միայն նախախնամութիւնը օրհնելու համար: Մայրական շըր-

Թանց վրայ ծիծաղը պիտի ծագի : եւ ալեւոր ծերը
դիտելով աշնան արեւն՝ որ ամպոց ետեւէն խոնար-
հելով վերջին ճառագայթներովն դեղնեալ տերեւ-
ները եւ խամրեալ խոտոց թելերը կոսկեզօծէ , ներ-
քին եւ խորհրդաւոր ուրախութիւն մը պիտի դգայ
նոր դարուն եւ նոր արշալոյս մը երազելով :



Թ .

Բաւական չէ ճանչնալ ձեր իրաւունքը , պէտք
է նաեւ ճանչնաք ձեր պարտաւորութիւնը . վասն
դի ինչպէս իրաւանց պահպանութիւնը , նոյնպէս
պարտուց գործադրութիւնը կարեւոր է Աստուա-
ծային կարգադրութեան , յորմէ դուրս բնաւ ա-
կրնկալութիւն մը չունիք երկրիս վրայ :

Իրաւունք են ձեր կենաց եւ ազատութեան ա-
պահովութիւնը , ձեր բուն ազատութիւնն , իրա-
ւամբ է որ մարդ էք եւ ոչ նիւթ , զոր ամէնքն ըստ
բաղդի կը գործածեն իբրեւ տէր :

Բայց ինչ շահ՝ կեալ միայն , ինչ շահ՝ ազատ ըլ-
լալ : Ո՞վ տիեզերաց մէջ ինքնիրեն կապրի , ինքն
իր վրայ կը յենու եւ ինքն իրեն կը սնանի . տա-
լով ընդունել կը պահանջեմք եւ ընդունելով տալ
կը պարտաւորիմք , եթէ ոչ ամբողջն անհատին եւ
անհատն ամբողջին փոփոխակի տան եւ ընդունին ,
ամէն կողմ կեանքը կը ցամաքի :

Կայ մէկը որ բնաւ ուրիշի մը օղնութեան եւ
ձեռնտուութեան կարօտ չըլլայ , կարօտ եմք . ու-

շիշի մը մանկութեան մէջ կարօտ եմք, հիւանդութեան մէջ, կարօտ եմք միշտ եւ ամէն բանի մէջ: Արնաք երեւակայել մարդ մը մենակեացը որ նրմանեացը հետ յարաբերութիւն չունենայ, ոչ ինչ տայ եւ ոչ ինչ ընդունի. լաւագոյն է անտառաց մէջ բնակող վայրենին. վասն զի վայրենի մարդը ընտանիք ունի եւ ընկերութեամբ կապրի, լաւագոյն են անտառնք՝ որ էդ մը եւ ձագեր ունին զորս կը խնամեն, եւ շատ անգամ իրենց ցեղէն անհատից հետ ընկերանալով փոփոխակի զիրար կը պաշտպանեն կամ միարան կաշխատին: Մարդս ընկերներէն դատուելով անբարբառ, անմիտ, եւ անզգայ կըլլայ, տեսակ մը հրէշ կը դառնայ արարչագործութեան մէջ չունենալով ոչ սկիզբն, ոչ կապ, ոչ անուն, հրէշ մը որ սարսափ կը շնչէ եւ զոր բառերով չեմ կարող նկարագրել:

Արդ եթէ անտառնք համակրութեամբ եւ բնածին ազդմամբ կը միանան ըստ իրենց յատուկ օրինաց, պարտաւորութիւնն ալ ազատ արարածներն իրարու հետ կը կապէ եւ կը դողէ. պարտաւորութիւնն՝ ընկերութեան հիմն եւ կենաց անհրաժեշտ պայմանն է:

Իրաւունք՝ զամէն անհատ իր վրայ կը կեդրոնացընէ, վասն զի միմիայն նպատակն անհատական պահպանութիւնն է, հետեւաբար ամէն իրաւունք իրօք անհատական է, եւ այս դրութեամբ ժողովուրդը հաւաքական անհատ մ'է: Իրաւունք պահանջելն իր անձին համար բան մը խնդրելն է: Բուն իրաւունքը պարտաւորութենէ դատուելով, կըլլայ բուն անձնասիրութիւն կամ լաւ եւս ըսելով անի-

բաւութիւն: Եւ ինչ է յիրաւի անիրաւութիւնն եւ
թէ ոչ իր անձին բացարձակ նախամեծարութիւնն
ուրիշներուն վրայ կամ զուրիշներն իր անձին զոն
ընելը: Այս է ահա մարդասպանութիւն, գողութիւն
եւ որ եւ է սճիր, այսինքն զոնել զուրիշ մը իր
կրից, տենջանաց եւ անհատական շահուն:

Ընդհակառակն պարտաւորութիւնը զամէն ան-
հատ իրմէ զուրս կը հանէ վասն զի պարտաւորու-
թեան նպատակն է ամէնուն պահպանութիւնն եւ
բարիքը:

Պարտք մը կատարելով ուրիշի օգտակար բան
մը կընեմք: Բուն պարտաւորութիւնը բուն անձ-
նանուիրութիւն մ'է, այսինքն արդարութիւն եւ
սէր: Եւ յիրաւի ինչ է արդարութիւնն եթէ ոչ ու-
րիշներուն նախամեծարութիւնն իր անձին վրայ
կամ զանձը ուրիշներուն զոն ընելն:

Իրաւունք սրբազան են, վասն զի անհատական
պահպանութեան սկզբունքն ընկերութեան սկզբ-
նական տարրն ու արմատն են:

Պարտաւորութիւնն եւս սրբազան է, վասն զի
ընկերական պահպանութեան սկզբունքն է, յորմէ
զուրս անհատ մը չէ կարող ոչ զարգանալ եւ ոչ
ըլլալ:

Ո՛հ քանի աշխարհս երջանիկ կըլլար եւ ինչպէս
արագ կը դիմէր մարդկային ցեղը յառաջադիմու-
թեան շաւղին մէջ, եթէ իրաւունք միշտ յարգը-
ւած եւ պարտաւորութիւնք միշտ լցուած ըլլային:

Ինչո՞ւ բնութեան սքանչելի կարգը, գեղեցիկ
եւ սրտառուչ ներդաշնակութիւնները կը զմայլեցը-
նեն շրեղ: Վասն զի ամէն բան իր տեղն է եւ հոն

անխախտելի կը մնայ . վասն զի ամէն արարած
ընդհանուր եւ մասնաւոր օրինաց կէտ առ կէտ հը-
նազանդելով , Արարչին սահմանած պաշտօնը հա-
ւատարմութեամբ կը կատարէ : Արեւէն սկսեալ՝ որ
լուսոյ եւ կենաց մշտաբուխ հեղեղներ կը ղեղու ,
մինչեւ յաղբիւրակն որ կաթիլ կաթիլ ժայռերէն
կը վազէ , վերին հրամանաւ զանազան եւ անթիւ
միջոցներով մի եւ նոյն վախճանին կը ծառայեն , զոր
որչափ աւելի դիտեմք այնչափ աւելի կը զարմա-
նամք : Տիեզերաց մէջ ամենանուրբ շարժում մը ,
կամաց կամաց խոտի մը բուսնելու գործակից կըլ-
լայ , եւ աշխարհներն երբ այն խոտին պէս իրենց
դարդացման վերջին ծայրը հասնին , խոտին պէս
քայքայելով ուրիշ աշխարհներու պատրաստ սնունդ
կըլլան :

Չկայ արարած մը որոյ էութիւնն ուրիշ արա-
րածէ մը կախումն չունենայ : Արպէս զի արարածք
գոյանան , պէտք է որ իրենց էութիւնն իրարու ե-
րակաց մէջ հեղուի :

Ի՞նչ է աղբիլն՝ ընդունիլ : Ի՞նչ է մեռնիլն՝ տալ ,
կենաց նախնական սկզբունքն են , մշտենջանաւոր
եւ համաշխարհական հաղորդութիւն :

Ինչ որ նիւթք , բոյսք եւ անբանք 'ի հարկէ
անհրաժեշտ բաղդէն մղեալ կուրօրէն կը գործեն ,
մարդս պարտի ազատաբար գործել : Պարտի հպա-
տակելով ամբողջին որոյ անդամ է , սիրել զեղբայր-
ներս իր անձին պէս , իրենց բարիքը կամիլ ինչպէս
իր անձին բարիքը կամի , իրենց ուրախութեամբը
ուրախանալ , իրենց վշտօքը ցաւիլ , օգնել , ծառայել ,
անձը նուիրել իրենց եւ աշխատիլ , այսպէս միշտ ա-

Ճեշուէն անհատից եւ ժողովրդոց դաշնակցութեամբ ,
մարդկային ցեղին սուրբ միութիւնը 'ի գլուխ հանել :



Ժ.

Պարտաւորութիւնը ամէն արարածոց կը վերաբերի , վասն զի ամէնքը իրենց տեղն ունին տիեզերաց մէջ , վասն զի ամէնքը գերագոյն խմատութեան դիտաւորութեանը համեմատ պաշտօններ կատարեն զորս խանգարել արգելու , վասն զի ամէնքը վայելեն սատուածային պարգեւն եւ իրաւունք ունին վայելելու : Եթէ ոք կամայ արարած մը ջնջէ կամ 'ի դուր տանջանաց մատնէ , չար դործէ եւ կարդադրութեան օրինաց հակառակ :

Յարգեցէք Աստուծոյ ամենալիտքը արարածներն անգամ , եւ իրեն պէս սիրով պատուեցէք այն ամէնը որ կը շնչէ եւ կապրի :

Աստուած մարդուս խնայականութիւն շնորհելով ուղեց որ բնութեան թաղաւորն ըլլայ բայց ոչ բռնաւորը : Ինքն ամենատես է , եւ հայրական ակնարկ մը կուտայ ճնճդուկին՝ որ ձեռացդ մէջ կը դողդոջէ :

Առանց պարտաւորութեան անկարելի է ընկերութիւն մը ըլլայ , վասն զի առանց պարտաւորութեան մարդոց մէջ յարաբերութիւն չըլլար : Արդարութիւնը եւ ողորմածութիւնը , ինչպէս արդէն ըսի , պարտաւորութեան մէջ ամփոփեալ են :

Ձրնել ուրիշի՝ ինչ որ չենք ուղեր որ ուրիշը մեզի ընէ , ահաւասիկ արդարութիւնը :

Ընել ուրիշի, ամէն պարագայից մէջ, ինչ որ կուզենք ուրիշը մեզի ընէ, ահաւասիկ ողորմածութիւնը:

Մարդ մը աշխատանքը կապրէր եւ կը պահէր իր կիներ եւ մանկուկքը. եւ ինչպէս առողջ կազմուած եւ ուժեղ բազուկներ ունէր, դիւրութեամբ գործ կը դանէր եւ կրնար քիչ յոգնութեամբ իր եւ ընտանեաց պիտոյքը հոգալ:

Բայց ժամանակ եկաւ որ այն երկրին մէջ ներդութիւն վրայ հասաւ, աշխատանքը շահ չի բերելով նուազեցաւ, եւ միանգամայն կենաց կարեւոր նիւթերը սղեցին:

Ուստի աշխատաւորն ընտանեօք սկսաւ շատ նեղուիլ: Խնայողութեամբ պահած փոքրիկ գումարն սպառելէն յետոյ, սախալուեցաւ նախ կարասիները կտոր կտոր ծախել ապա հագուստներուն մէկ մասը. եւ այսպէս ամէն բանէն մերկանալով անողորմ քաղցին հետ 'ի դուր կը մաքրուէր. բայց քաղցին հետ միասին հիւանդութիւնն իր բնակարանին մէջ մտեր էր:

Սրդ այս մարդը երկու դրացի ունէր, մէկը հարուստ, միւսը ոչ այնչափ:

Գնաց հարստին եւ ըսաւ. «Ս.մէն բանէ զըրկուելով, պատառ մը հացի կարօտ եմ, ես, կինս եւ որդիքս. ողորմէ մեզի:»

Հարուստն իրեն պատասխանեց. «Ես ինչ ընեմ. երբ ինձի համար կաշխատէիր, ոչ միթէ վարձդ ճշդիւ վճարեցի. ոչ քեզի եւ ոչ ուրիշի երբէք մնաս գործեցի. ձեռքերս անիրաւութենէ անարատ են: Քշուտութեանդ վրայ կը ցաւիմ, բայց ամէն

մարդ ինքրդինքը միայն կը մտածէ այս նեղ ժամանակին որ ո՛վ գիտէ գեռ որչափ պիտի տեւէ » :

Խեղճ հայրը լուց եւ ողին դառնութեամբ լեցուած, մինչդեռ դանդաղ քայլերով տուն կը դառնար, միւս դրացին դիմաւորեց՝ որ շատ հարուստ էր :

Այս վերջինը տեսնելով աշխատաւորին տխուր եւ յուսահատ դէմքը, հարցուց իրեն. « Ինչո՞ւ ճակատիդ վրայ տրամութիւն եւ աչացդ մէջ արտասուք կը տեսնեմ » :

Եւ հայրը դողդոջ ձայնիւ իր ճակտորդութիւնը պատմեց :

Երբ լմացուց. « Ինչո՞ւ, ըսաւ իրեն միւսը, այսպէս կը յուսահատիս. ո՛չ մի՛թէ եղբարք եմք, եւ կրնամ վշտացեալ եղբայրս երեսի վրայ թողուլ. եկու եւ Աստուծոյ տուած պարգեւները 'ի միասին քածնենք » :


Այսպէս ահա այս ընտանիքը նեղութենէ ազատեցաւ մինչեւ որ ինքն իրեն կարողացաւ իր պիտոյքը հոգալ :

Շատ տարիներ անցնելէն յետոյ երկու հարուստքն Երկնից Թաղաւորին առջեւը եկան՝ որ կը դատէ մարդկան դորձերը :

Եւ դատաւորն ըսաւ առաջնոյն. « Երկրիս վրայ աչքս դքեզ տեսաւ. յիրաւի ոչ ուրիշի մնասցիր եւ ոչ ուրիշի իրաւունքը յախշտակեցիր. յիրաւի արդարութեան օրէնքը խստիւ պահեցիր, բայց այս օրինաց հետեւելով միայն, քեզի համար միայն ապրեցար. զամաք եւ կարծր ողիդ ոչ սիրոյ օրէնքն ըմբռնեց : Եւ հիմա այս նոր աշխարհիս մէջ ուր

կը մտնես աղքատ եւ մերկ, այնպէս պիտի լնես
 քեզի, ինչպէս դու ուրիշներու ըրիր: Քեզի բաշ-
 խուած բարիքներն անձիդ միայն սեպհականելով,
 եղբարցդ մաս չի հանեցիր, դու ալ հիմա ինձմէ
 մաս չունիս, ինքըղինքդ միայն մտածելով, ինքը-
 ղինքդ միայն սիրեցիր, դնա եւ հիմա ինքնիրենդ
 ապրէ »:

Եւ երկրորդին դառնալով, դատաւորն ըսաւ .
 « Որովհետեւ դու ոչ միայն արդարութիւնը գոր-
 ծեցիր, այլ եւ սիրտդ գթութեան բացիր, որով-
 հետեւ քեզի աւանդած բարիքներս առատապէս
 թշուառ եղբարցդ վրայ սփռեցիր եւ իրենց ար-
 տասուքները ջնջեցիր, քեզի պահած եմ մեծագոյն
 բարիքներ: Գնա եւ վարձդ ընդունէ դու որ պար-
 տաւորութիւններդ, այսինքն արդարութեան եւ
 սիրոյ օրէնքները լիովին կատարեցիր »:



ԺԱ.

Շատ տեսակ պարտաւորութիւնք կան, ընդ-
 հանաւր պարտաւորութիւնք եւ մասնաւոր պար-
 տաւորութիւնք: Առջինները զմարդիկ համաշխար-
 հական կապով կը միացնեն. վերջինները՝ բնու-
 թեան եւ ընկերութեան մարդոց մէջ հաստատած
 զանազան յարաբերութիւններէն յառաջ կուգան:

Հարցուցէք եւ քննեցէք այն ամէն որոյ ոչ անձանց
 միտքը ստիպարաչարեալ՝ ոչ խիղճը շահով եւ կրիւք
 ապականեալ է. այս է իրենց պատասխանը թէ

մարդ մարդոյ համար սրբազան է . թէ ո՛վ որ մնա-
սէ իր ընկերոջ անձին, ազատութեան եւ ստա-
ցուածոյն՝ կը կործանէ Խեղերաց կարգադրութեան
հիմն, կը պղծէ բարոյականի օրէնքն որ մարդկու-
թեան ցեղը կը պահպանեն, եւ մէկ խօսքով այնպի-
սի գործ մը կը գործէ՝ որոյ ամէն դարուց մէջ ամէն
ժողովուրդք ե՛րեւն սարսափելի անուէր տուեր են :

Անխօփօխ եւ յաւիտենական ձայն մը կայ ձեզմէ
դուրս, ձայն մը եւս կայ ձեր ներսը . այս երկու
ձայները կը սեն ձեզի :

— Բնաւ մի սպաններ, մի գողանար բնաւ, եւ
մի բնաւ արատեր ամուսնական առաքինութիւնն
եւ երիտասարդութեան կուսական ամօթխածու-
թիւնը . միտքդ անդամ սուրբ պահէ այս դարչու-
թիւններէն :

Ո՛վ որ իր եղբօրը արիւնը թափէ, անիծեալ է
երկրիս վրայ եւ անիծեալ յերկինս :

Անիծեալ է նաեւ ո՛վ որ խարդաւանօք կամ
բռնութեամբ եղբօրը ազատութիւնը կամ օրինա-
ւոր ստացուածոյն մէկ մասը կողոպտէ . ո՛վ որ ըն-
տանեաց մէջ խռովութիւն ցանէ եւ անոր հետ ա-
մօթ, դժտութիւն, սրտի անձկութիւն, կասկած,
ատելութիւն որ շատ անդամ տուն կաւրեն :

Գաշտաց բոյսերը մէկ մարդէն միւսը կը տա-
րածեն իրենց արմատները հողոյն մէջ՝ որ դամէն-
քը կը սնուցանէ եւ ուր ամէնքը խաղաղութեամբ
կաճին : Ոչ մէկը միւսին հիւթը կը ծծէ, ոչ մէկը
միւսին ծաղիկը կը խամրեցընէ կամ անուշահոտու-
թիւնը կապականէ . ինչո՞ւ մարդս ոչ այսպէս կը
վարուի իր ընկերին հետ :

Մերժեցէք ձեր սրտէն չար փափաքք եւ չար խորհուրդք վասն զի ո՛վ որ չար փափաք եւ չար խորհուրդ մը որոճէ, ապաքէն չար գործէ:

Խօսքեր կան որ կը սպաննեն. դսպեցէք ուրեմն ձեր լեզուն եւ մի արատէք բամբասանօք եւ զըրպարտութեամբ:

Նախանձ, բարկութիւն, վրէժխնդրութիւն եւ ատելութիւն կրծեն զողին, ուր ծածկուած են եւ այն ողին չարչարուելով կը ճգնի անդադար սպաննութիւն գործել:

Նթէ թշնամանեն զձեզ, ներեցէք որպէս զի ձեզի ալ ներեն: Ո՞վ թողութեան չէ կարօտ. եւ ո՛վ կրնայ ըսել, ոչ ոք կրնայ արդարապէս դանդատիլ ինձի գէմ:

Հեռացէք մոլար ճանապարհէ, եւ միշտ ճշմարտութիւնը սիրեցէք: Մի այնպիսի խօսքեր ընէք որ կը խտրեցունեն պարկեշտութիւնը եւ կը վերաւորեն պատիւը:

Պէտք է նաեւ խորշիլ այն ամէն բանէն՝ որ ըզմարդն նուաստացընելով եւ վատացընելով անասնոց կը մերձեցընէ, ինչպէս զգայարանաց չափազանց հաճոյքը, աղետալից սովորութիւններն որ զմարմինը կը հիւժեն եւ միտքը կը թանձրացընեն եւ այսպէս կը կերպարանափոխեն բանաւոր որրանը յորմէ աչքերնիս զգուանօք յետս կը դարձնեմք:

Մարդս երկու էակէ կը բաղկանայ, որոյ մէկը անասուն՝ միւսը հրեշտակ է. իր ջանքը պիտի ըլլայ միշտ մէկին հետ մաքառիլ որպէս զի միւսը տիրէ միայն, մինչեւ որ այս կոշտ կեղեւը մերկանալով դէպ ՚ի դերագոյն եւ անմահ գաւառները ճախր առնու:

Այսպէս ընելով ոչ մէկուն կը մնասէք եւ կըլլաք՝ արդար, բայց դեռ աւելի մեծ եւ սրբազան պարտքեր ունիք կատարելու :

Միթէ այն որ պարզապէս չարէն խորշելով, իր եղբօրը ոչ մնաս կընէ եւ ոչ բարիք, պարտքը կատարանձ կըլլայ առ ընկերն եւ առ Աստուած : միթէ ոչ երկնաւ որ Հայրը մեր սրտին մէջ սիրոյ եւ դժուրեան սերմն ցանելով, գերադոյն եւ աւելի արդիւնաւոր առաքինութիւններ պատուիրեց մեզ :

Տեսեք այն խեղճ մարդկային արարածն որ վողոցին մէջ անկեալ կը հեծէ եւ կարեւոր պիտոյքէն դրկեալ թերեւս յանկարծահաս ձախողութեամբ : Մարդ մը կը տեսնայ զինքը, կը ցաւի եւ կանցնի, ըսելով. միթէ ես եմ իր թշուառութեան պատճառը, եւ ո՞վ ուրիշի հոգը ինձի յանձնեց, բաւական է իմ հոգս ինձի : Աւրիշ մը եւս կը տեսնայ զինքը եւ սիրտը կը շարժի : Ար մերձենայ, բազկացը մէջ կառնու եւ տունը սանելով իւր անկողնոյն մէջ կը պառկեցընէ, կը հսկէ իր վրայ եւ կը խնամէ զինքը, ինչպէս եղբայր մը գեղրայրը եւ բարեկամ մը դբարեկամը կը խնամէ :

Այս երկուքէն մըր ճշմարտապէս իր պարտքը կատարեց :

Եթէ երկրիս վրայ միշտ չարիք պիտի ըլլան, մենք ալ միշտ պարտինք զանոնք ամսքել :

Եթէ ձեր եղբայրը անօթի է, պարտիք զինքը սնուցանել. եթէ մերկ է եւ առանց բնակարանի, պարտիք իրեն հաղուստ եւ ապաստան մը գտնել. եթէ հիւանդ, պարտիք օգնել իրեն : Նա ձեր միտ եւ ոսկորն է, վասն զի ամէնքդ մէկ մարմնոյ ան-

դամք էք դոր եւ մէկ հոգի պէտք է կենդանացնէ
հոգացէք ուրեմն զինքը ինչպէս ձեր իսկ միտք :

Շատ կերպ խեղճութիւն եւ շատ տեսակ զըր-
կանք կան . ամէն խեղճութիւն պաշտպանութեան
եւ ամէն գրկանք օգնութեան կարօտ են : Եթէ ոչ
այսպէս, ինչ կըլլար կը հարցնեմ ձեզի, մարդկա-
ցին ցեղը . ինչ կըլլար աշխարհք . ինչ կըլլային ա-
նոնք որ անկարող, աղքատ, անօք, ձեր, տկարա-
միտ եւ ազէտ ըլլալով չարագործին որոգայթից
կը մատնուին դիւրութեամբ :

Ուրիշի եղած անիրաւութիւնն անյողողող քա-
ջութեամբ վանեցէք ինչպէս թէ ձեզի եղած ըլլար,
կարկառեցէք ձեր բազուկը հարստահարչին եւ հա-
րրատահարելոյն մէջ : Ձեր եղբայրը ձեր անձն է, եւ
երբ զինքը ընկճեն միթէ ոչ զձեզ կընկճեն :

Հայր եղէք որբին, նեղուկ այրւոյն եւ ծերուն-
ւոյն, հիւրընկալ եւ ձեռնտու սրանդխտին, աչք
կուրին եւ ոտն կաղին :

Թափեցէք վշտացելոյն ծոցը այն սրտարուխ
խօսքերն՝ որ արտասուաց զառնութիւնը կամօքեն :
Սմէն վիշտ համակրութեամբ կը թեթեւնայ : Եղ-
բայրական սիրոյ ճառագայթները՝ կենաց արտմու-
թիւնները կը փարատեն, ինչպէս արեւը ծագելով
կը հալեցընէ աշնան սառոյցները :

Բարի խրատ, խմաստուն խորհուրդ եւ շահա-
ւէտ ուսումն տալ, ոսկի տալէն աւելի է . եւ ով
որ իր դիտցածը ուրիշին հազորդելով գիտութիւն-
ները ծաւալէ, ապագայ ազդերը անուցանելու հունտ
կը ցանէ :


Ձեր ջանքը բաշխողատկեցէք խաղաղութիւնը

միշտ հաստատ պահելու համար . խաղաղութիւնն
ամէն բարեաց խարխիս եւ պսակն է : Հանդուրժե-
ցէք ուրիշներուն՝ որպէս զի ուրիշներն ալ ձեզի
հանդուրժեն : Ամէնքս ալ տկարութիւններ , պա-
կասութիւններ եւ գէշ վայրկեաններ ունիմք : Համ-
բերութիւնը կամաց կամաց կը կակղացընէ ամէ-
նակարծի սիրտը , չըլլայ որ բարկացայտ խօսքերն
եւ կեղեքիչ սպառնալիք ցամաքեցուցանեն ձեր
համբերութիւնը : Նմանեցէք որթին՝ որոյ հիւթն
այնչափ աւելի քաղցր կըլլայ որքան քարախառն հո-
ղոյ մէջ աճի :

Յարգեցէք ուրիշի կեանքը , ազատութիւնն եւ
ստացուածը :

Օգնեցէք ուրիշի որպէս զի պահպանէ եւ զար-
գացընէ կեանքը ազատութիւնն եւ ստացուածը ,

Այս երկու պատուիրանաց մէջ պարունակեալ
են արդարութեան եւ ողորմածութեան պարտուց
սկզբունք : Թէեւ պարտաւորութիւնք յանձուն մա-
սունս կը բաժնուին , վասնզի մարդկային ամէն մտած-
մունք , ամէն զղացմունք եւ ամէն գործերը կամփո-
փեն , բայց մէկ պատուիրանի մէջ կը բովանդակին ,
այն է Աստուածային սիրոյ պատուիրանը : Սիրեցէք
եւ ըրէք ինչ որ կամիք , վասն զի արդար եւ բարին
միայն կամիք : Սիրեցէք , ըսաւ երկնաւոր Տէրը , եւ
կատարելապէս պիտի լեցընէք օրէնքը :



ԺԲ .

Ընդհանուր պարտքերէն դատ, մասնաւոր պարտքեր ալ կան եւ գլխաւորապէս ընտանեկան պարտքեր :

Ընտանիքն՝ ընկերութեան պէս մշտնջենաւոր եւ անոր սկզբնական տարերքն են որ ընտանեաց յարարերութիւնք հիմնած են ընութեան իսկ օրինաց վրայ որ յառաջագոյն են արդի օրինաց : Այն արարածը որ չէ կարող արդիւնաւորիլ, անկատար արարած մ'է : Ուստի կիներ մարդու լրումն է, Զիրար կը խնդրեն, յիրար կը փոխանակին, երկու մարմին մի կազմեն եւ իրենց յաջորդած դաւակներն իրենց էութեան ծաւալումն եւ շարունակութիւնն են . ծնողք վերստին կենդանանան յորդիս եւ ապագայ սերունդներով յանսահմանս կը մշտնջենաւորեն :

Այսպէս ամուսնութիւնը ոչ ինքնակամ կարգ մ'է, այլ մարմնաւոր եւ մտաւոր միութիւնը մէկ մարդոյ մէկ կնոջ հետ միայն, որ մէկ մէկով կամբողջանան . եւ ո՛վ որ ամուսնութեան միութիւնը եւ արբութիւնը պղծէ, ընութեան օրէնքը կը խանգարէ Արարչին դէմ կապտտամբի եւ անթիւ չարեաց եւ անկարգութեանց պատճառ կըլլայ :

Շատ անգամ լիրք եւ անարգ վարդապետութիւններ տարածուեցան աշխարհիս մէջ ամուսնական կապը ջնջել ճգնելով : Սարսափելով եւ գղութելով մերժեցէք ապականեալ մտաց այդ ժանտալից ուսումներն որք կը ջանան մարդս նուաստացընել քան դանասուն եւ աւելի եւս, վասն զի շատ անաս

նոց մէջ կը տեսնանք այն զգացման թեթեւ ստուերը, որ ազնուանալով կըլլայ սուրբ միութիւնը, հիմըն մարդկային ցեղին մշանջենաւորութեան :

Կարմրելու տեղի մի ունենաք հաւատարիմ եւ ամօթխած աղաւնին դիտելով, եւ մի անարգէք Աստուածային մատամբ ձեր ճակատին վրայ գրոշմեալ սուրբ նշանը :

Մարդոյ եւ կնոջ, փեսին եւ հարսին իրաւունք հաւասար, բայց կարողութիւնքն եւ պաշտօնք տարբեր են :

Կինը մարդու աղախինը չէ եւ ոչ իսկ գերին . այլ իր ընկերն եւ օգնական է, ոսկր ոսկերացն եւ մարմին մարմնոցն : Ժողովրդեան բարոյական ըմբռնողութիւնը որչափ աւելի վարդանայ, այնչափ աւելի կինը պատիւ եւ ազատութիւն կըստանայ . բայց ազատութիւն ըսելով ոչ պարտուց եւ կանոնաց թոյլտուութիւն կիմանամք՝ այլ ստրկային հըպատակութենէն ապահարկ :

Այր՝ յարգանք, պաշտպանութիւն եւ սէր պարտիս կնոջդ . կին՝ հնազանդութիւն, սէր եւ պատկառանք պարտիս ամուսնոյդ : Աստուած իրեն ոյծ տալով ծանրախոստակ աշխատանաց ենթակայ ըրաւ դինքը, իսկ քեզի վայելչութիւն, գութ, եւ հեզութիւն պարգեւեց, որպէս զի իր բերը թեթեւցընեա, որով աշխատութիւնն անարատ ուրախութեանց աղբիւր մը կըլլայ :

Երբ ձեռօք սրբեա քրտամբ ողողեալ դէմքը մէ միթէ անմիջապէս ամէն յողնութիւն կը մտնայ : Երբ ողին արտում եւ միաքը յուզեալ է, մէ միթէ դու մէկխօսքով, մէկակնարկով, խաղաղու-

Թիւնը սրտին մէջ եւ ժպիտը շրթանցը վրայ կը
ծագեցրնես :

Առանձին մարդը կը նմանի եղեգին՝ զոր զանա-
զան հողմեր շարժելով փարաշուռնչ ձայներ միայն
կը քաղեն :

Կրնաք բնութենէ շատ ուսումներ ստանալ .
բացէք աչքերնիդ որպէս զի ամենաջնջին արա-
րածք կը թեն դձեզ : Երբ ձմերային հողմունք շըն-
չելով ալիք փրփրադեզ մռնչեն , ծովային թռչունն
ու խր ընկերը ապառաժի մը խորշը ապաստանեալ
իրարու փարելով զիրար կը պաշտպանեն եւ փո-
փոխակի կը տաքցրնեն : Ահնաց մէջ ալ շատ մըը-
րիկներ կը պատահին . օրինակ առէք ծովային թռչ-
նէն , եւ մի վախնաք ոչ զրտաշուռնչ հողմերէն եւ ոչ
խոռվայոյզ ալիքներէն :

Սակայն ամուսնութեան վախճանը չէ միայն
կեանքը դիւրացրնել՝ դառնութիւնն ամօքելով : Ա-
մուսնութեան առաջին նպատակն է անհատներ ար-
դիւնաւորելով , մարդկային մեծ ընտանիքը մշտըն-
ջենաւորել :

Հարք , մարք , սիլ կրնայ ձեր զգացած անպա-
տում բերկրութիւնը բացատրել երբ ձեր սիրոյ
անդրանիկ պատեղը ողջագութելով , համարէիք նո-
րէն յաշխարհ դալ նորածին մանկան հետ :

Հոս նոր պարտաւորութիւնք տեղի կունենան
եւ կուգան յարիլ ամուսնութեան սկզբնական պար-
տաւորութեանց : Ապա թէ ոչ՝ ինչ կըլլան այն տը-
կար արարածներն որ նոր կեանք կընդունին : Մայրը
պարտաւոր է կաթովն սնուցանելով փութաջան
խնամօք եւ անխոնջ անձնանուիրութեամբ հսկել

զաւակը դեռալիթիթ հասակին մէջ : Հայրը պարտաւոր է գուրգուրանօք եւ եռանդեամբ պաշտպանելով հայն ու հաղուսար ճարել եւ ամէն պիտոյքը հոգալ մինչեւ որ կարող ըլլայ ինքնիրեն հոգալ :

Արդ ինչպէս կարող է հայր մը հոգալ իր որդիքը եթէ թուլացած է դատարկութեամբ կամ ապականեալ կրիւք դորս յագեցնելու համար օրական վաստակն ամբողջ կը վատնէ :

Այն հայրը որ չար սովորութեամբ այսպիսի անկարգ ընթացք մը կը վարէ, ինչ է . եթէ ոչ իր ընտանեաց սպաննողը : Գիտէք թէ ինչ կը խմէ այն բաժակով որ արբեցութեամբ դողդոջուն ձեռացը մէջ կերերայ : Եր կնոջ եւ որդւոց արտասուքը արիւնը եւ կեանքը կը խմէ :

Անասունք իրենց ձագուքը հոգալու համար իրենք դիրենք կը մոռնան . միթէ կուղէք անտառաց դազաններէն անգամ անարգ ըլլալ :

Ձեր զաւակաց մարմնաւոր սնունդը հայթաթելով մի կարծէք թէ ձեր պարտաւորութիւնները լիովին կատարած էք : Պէտք է նաեւ դիրենք մարդ ընէք, եւ ինչ է մարդս եթէ ոչ բարոյական եւ մտաւոր արարած մը : Թող սորվին ուրեմն ձեզմէ, դանադանել բարին չարէն, սիրել եւ կատարել դառաջինը, մերժել եւ ատել դերկրորդը :

Աշտամբեցէք իրենց յանցանքը ոչ բարկութեամբ եւ ոչ բռնութեամբ, այլ խանդաղատանօք եւ հանդարտութեամբ : Չանայէք որ դառնութիւնը միայն դաննն ախտից ճանապարհին վրայ :

Իրենց մանուկ հասակէն սկսելով մշակեցէք եւ

ընդարձակեցէք մեր բնութեան գերադոյն ճիւղերն որոյ վրայ հիմնեալ են ընկերութեան էութիւնը, արդարութեան, գթութեան եւ ողորմածութեան զգացմունքն:

Սօր մը ծնողանց վրայ արուած ուսումն եւ հայրական դասերը, ընտանեկան քաղցր եւ դորովաւիր յիշատակաց հետ խառնուելով մեր սրտէն բոլորովին ջեն ջնջուիր: Թերեւս կարծէք թէ խրատներ բաւական են. ոչ, առանց օրինակի խրատներն ոչինչ են: Ամէն յորդոր, ամէն խորհուրդ անպրատու կը մնան եթէ ձեր գործոց համաձայն չըլլան: Ձեր որդիք ձեզի նման ապականեալ կըլլան եթէ դուք ինքնին ապականեալ էք, առաքինի՝ եթէ դուք ինքնին առաքինի:

Ի՞նչպէս կարելի է որ անթերի, դորովագութ եւ մարդասէր ըլլան՝ եթէ դուք պակասաւոր էք եւ եթէ դուք դութ չէք զգար ձեր եղբարց վրայ: Ի՞նչպէս կարելի է որ զօպեն իրենց անասնական ախորժակը եթէ դուք անժուժկալութեամբ կապրիրք: Ի՞նչպէս կուզէք որ իրենց բնածին անմեղութիւնը պահեն՝ եթէ դուք չէք խորշիր իրենց ներկայութեան ամօթխածութիւնը վիրաւորել՝ անվաճելուչ գործով եւ անպարկեշտ խօսքով:

Դուք պէտք է ըլլաք կենդանի օրինակ, վասն զի ձեր վրայ կը ձեւանայ իրենց ձկուն բնութիւնը: Ձեզմէ կը կախուի զիրենք մարդ կամ անբան ընել:

Եւ այս եւս լաւ ըմբռնեցէք: Ամէնքս տգէտ կը ծնանիմք եւ տգիտութեան հետեւանք են թըշուառութիւն եւ անարդութիւն: Այն որ բան մը չգիտեր, ինչ է այս աշխարհիս մէջ եւ ինչ կրնայ

ըլլալ: Եւնչ բանի կարող է: Բազուկներ ունի մի-
այն, պարզ եւ նիւթական գործիքներ, որ շատ ան-
դամ ապարդիւն են. վասն զի մտաւոր ոյժը կը կա-
ռավարէ մարմնաւոր ոյժը: Աւտի ազէտ մարդը
սոսկ մեքենայ մ'է անոնց ձեռքը՝ որ կը գործածեն
զինքը իրենց շահուն համար: Արդ միթէ կուզէք
որ այսպէս ըլլայ ձեր որդւոց վ' ճակը, կուզէք որ
միշտ մարդկային ազնիւ աստիճանէն ինկած, կոյր
եւ անպտուղ աշխատութեան մէջ աճին, ինչպէս
կովը ախոսներ պեղէ իր ատիրոջ օգտին համար որ
զինքը դրդելով յառաջ մղէ:

Եւ դարձեալ կովը դաշտէն դառնալով, ապա-
հով է սնունդ մը գտնել. եւ ունին դու այս ապա-
հովութիւնը, ո՞վ ժողովուրդ, որ աշխատանացդ
անստոյգ օրականաւը կապրիս:

Ձեր որդւոց ուրեմն պարտիք կրթութիւն տալ
ինչպէս պարտիք հաց տալ, մտաւոր սնունդ տալ
ինչպէս մարմնաւոր սնունդն: Յիրաւի, ընկերու-
թեան արդի ատուր վիճակին պատճառաւ, ժողու-
րին է ձեզ այս պարտաւորութիւնը կատարել: Նիւ-
թական հոգք այնպէս կը նեղեն զձեզ որ անկարելի
է ձեզ ուրիշ մտածութիւն ունենալ, եւ շատ մար-
դիկ իրենց շահուն համար, զձեզ եւ ձեր որդիքը
կը դրկեն գիտութեան լուսաւորութենէ՝ որոյ օգ-
նութեամբ կարող չըլլաք իրենց լուծը խորտակել.
ուստի որչափ կարելի է կը ճգնին որպէս զի այդ
լուսոյ աղբիւրին չի մերձենաք:

Բայց սահման մը կայ ձեր պարտաւորութիւն-
ները կատարելու, եւ հաստատուն կամօք ամէն
դժուարութեանց կրնաք յաղթել: Մեծ զօրութիւն

մ'է պարտաւորութեանց քաջ ծանօթութիւնը :

Հարք, մարք, ասոնք են Աստուծոյ պատուիրած պարտաւորութիւնք առ որդիս ձեր : Որդեակք դուք ալ հապա ճանչցէք ձեր պարտքերն առ ծնողս . վասն զի չէք կարող ըլլալ երջանիկ եւ օրհնեալ՝ եթէ ձեր պարտուց հաւատարիմ չըլլաք :

Պատուեցէք եւ սիրեցէք ձեր հայրը որ իր կեանքը ձեզի հաղորդեց եւ ձեր մայրը, որ դձեղ արդանդին մէջ սնոյց եւ իր ստեանց կաթովը ջամբեց : Չկայ աւելի անիծեալ արարած քան դայն որ կը փշրէ իր եւ ծնողացը մէջ Աստուծոյ դրած սիրոյ եւ պատկառանաց կապը :

Ձեր ծնողաց մեծամեծ տաղնապանաց առիթէք : Ո՞չ միթէ անդադար ձեր հանապաղօրեայ պիտոյքը կը մտածեն . եւ ո՞չ միթէ անդադար կը տրքնին դանոնք հայթայթել : Յերեկը, ձեզի համար կաշխատին . եւ յաճախ դիշերը, մինչդեռ դուք կը հանդչիք, իրենք կը հսկեն որպէս զի երբ առաւօտուն արթննալով հաց խնդրէք, չի հարկադրին ձեզ այս պատասխանը տալ . « հաց չունիմք » :

Եթէ տակաւին չէք կարող ձեր ծնողաց վատակոց մասնակից ըլլալ՝ ջանացէք դէթ իրենց բերը թեթեւցընել որդիական գորովանօք հաճելի եւ ձեռնտու ըլլալով որչափ ներէ ձեր տարիքը :

Տակաւին անսորձ եւ տկարամիտ էք, պէտք է ուրեմն որ առաջնորդեն ձեզ իրենց փորձառութեամբ եւ իմաստութեամբ . եւ այսպէս ըստ բրնական օրինաց եւ Աստուածային կամաց, պարտիք իրենց հնազանդիլ եւ հեղութեամբ ունին մատուցանել իրենց խրատից եւ պատուիրանաց . ո՞չ

միթէ անասնոց ճաղուքն իրենց հարց եւ մարց
կ'անասն, եւ ոչ միթէ անմիջապէս կը հնազանդին
երբ զիրենք կանչեն, կամ ուղղեն եւ կամ ազգ
առնեն ինչ որ իրենց փաստակար է :

Անասնոց բնածին զգացմամբ բրածը, ըրէք դուք
եւս պարտքերնիդ ըմբռնելով: Եթէ Սատուած ձեզի
եղբայր եւ քոյր տայ, խաղաղութեամբ փոխադարձ
սիրով ապրեցէք: Մի եւ նոյն արգանդը եւ մի եւ
նոյն կաթը անուցեր է. միթէ կայ զօրաւորացոյն
եւ սրբազնագոյն կապ մը: Զանայցէք որ ձեր հա-
սակն աճելով այս կասն ալ ամբանայ: Երկրիս վը-
րայ մեր ճանապարհը դժուարին է. որպէս զի հա-
մարձակ ընթանաք եւ որպէս զի ոտքերնիդ չսահի
մէկ մէկու նեցուկ եղէք:

Շատերը կը խօսորին թեթեւամիտ բարեկամներ
ընտրելով իսկ դուք՝ անոնց հետ միայն ընկերացէք
որ արդարութեան ճանապարհին մէջ կը քալեն եւ
որոց վարքը բարի է: Ուրիշները չար խորհրդով եւս
օրինակաւ կը պղտորեն ձեր միտքը եւ կը խամբե-
ցնեն այն անմեղութեան փափուկ ծաղիկը՝ որ ման-
կութեան վրայ անոյշ հոտ մը կը սփռէ:

Զբօսանք եւ հաճոյք հրապուրելով կը զրդուեն
ձեր կրքերը, որոց հետ պէտք է մաքառիք եւ զորս
պէտք է սանձէք. վասն զի յանցանքէն վերջը կուգան
դառն կակիծ եւ տագնապ խղճի: Ո՛չ միթէ չարը
դործելէն յետոյ դադանի անձկութիւն եւ ներքին
տրամութիւն մը կը զգաք: Աչտաց սերմն կայ ա-
մէն անկարգութեան մէջ եւ ամէն չար ուրախու-
թեան խորը ծածուկ ցաւ մը: Խաղաղութիւնը,
ընդհակառակն եւ հանդարտութիւնը մաքուր խղճի

բաժին են: Մաքուր սիրտը կը նմանի ճնճղուկին՝ որ
հանդարտ ննջէ բուռին մէջ մինչդեռ դուրսը շրջ-
կալից հողմը անտառաց ծառերը արմատախիլ կընէ:

Ժամանակ կուգայ՝ որ կեանքը կը խոնարհի,
մարմինը կը տկարանայ եւ այն խնամքները դորս
ընդունեցաք ձեր մանուկ հասակին մէջ: Ով որ իր
հայրը եւ մայրը կարօտութեան մէջ թողու, ով որ
իր ծնողաց թշուառութեան եւ վշտաց ականատես
ըլլալով անդդայ եւ խստասիրտ ըլլայ, յիրաւի կը
սեմ ձեզի թէ այնպիսւոյն անունը գրեալ է դատա-
ւորին մատենին մէջ հայրասպանից կարգը:

Եւ այս վերջին խօսքն իմ լաւ դրոշմեցէք ձեր
մտաց մէջ, դուք ամէնքդ ալ հարք, մարք, եղ-
բարք եւ քորք: Եթէ կայ երկրիս վրայ սուրբ ու-
րախութիւն մը, ճշմարիտ երջանկութիւն մը, այս
ուրախութիւնն եւ երջանկութիւնը կը ճաշակեն
միայն բարեկարգեալ ընտանիք՝ որոյ անդամք սար-
տաւորութեամբ սերտ միացեալ են: Վասն զի եր-
ջանկութիւնն ոչ թէ նիւթական ստացուածոց վայել-
մունն է, այլ ամիսփեալ է փոխադարձ սիրոյ օրինաց
մէջ՝ որ մեր էութեան հետ կապուած հարիքները
կամօքեն, ամիսփեալ է սպառաց եւ խորհրդաւոր
երանութեան անդատում զգացմանց մէջ:



Ղնկերական վիճակը մարդուս բնական է եւ
այս վիճակը ընտանեաց մէջ այսպիսի յարաբերու-

Թիւններ կը հաստատէ յորմէ նոր շարք սլարտա-
ւորութեանց կը ծնի, սլարտաւորութիւնք առ Հայ-
րենիս :

Հայրենիք ամէնուս մայրն է, եւ այն ամբող-
ջութիւնն է յոր առանձին անհատք յիրար խառնուին .
Հայրենեաց Սրբազան անուը կը նշանակէ ամէն
շահուց 'ի մի շահ, եւ ամէն կենաց 'ի մի մշտատեւ
կեանս ինքնակամ ձուլութիւն :

Եւ այս ձուլումն է առատաբուխ ազրիւր՝ անըս-
պառ բարեաց, առանց որոյ կոչնչանան ամեն ըս-
կզբունք տեւողական յառաջադիմութեան, որ կը
բազմապատկէ սլահականութեան եւ դարգացման կա-
րողութիւնը, արդիւնատու դորութիւնը, ապա-
հովութիւնը եւ երջանկութիւնը . բայց ինչ է ա-
սոր դործադրութեան պայմանը . այն է իւրաքան-
չիւրին իր անձն ամէնուն նուիրել եւ դո՛ն ընել,
մէկ խօսքով սէրն է՝ որ անձնասիրութիւնը խեղդե-
լով, կատարելապէս կը միացընէ ընկերական մար-
մնոց անդամները :

Սրդ, ինչպէս առաջ բացատրեցի, բնական հա-
ւասարութեան վրայ հիմնեալ ճշմարիտ ընկերու-
թիւնը պէտք է ըլլայ եւ է իրօք եղբայրասիրութեան
կարգադրութիւնը : Աւրիշ որ եւ է եղանակաւ որ եւ
է քաղաքական կարգադրութիւն ապօրինաւոր եւ
մնասարեր է . ապօրինաւոր՝ վասն զի հարկաւ ան-
բռնաբարելի իրաւունք մը ոտնակոխ կընէ . մնա-
սարեր՝ վասնզի այդ իրաւունքը բռնաբարելով ճշմար-
իտ կարգադրութիւնը հիմնայատակ կընէ եւ կա-
նուխ կամ ուշ ներքին կռիւներ եւ սոսկալի սլա-
տերազմներ կը յարուցանէ :

Պարտիք ուրեմն Հայրենեաց համար անձանձ-
րոյթ եռանդով աշխատիլ, որպէս զի կարող ըլլաք
անարատ պահել իրաւանց բացարձակ հաւասարու-
թեան փրկարար սկզբունքն՝ որ է ազրիւր հասարա-
կաց եւ մասնաւորաց ազատութեան, պարտիք դարձ-
եալ քաջութեամբ կռուիլ առանձնաշնորհութիւն-
ները բոլորովին ջնջելու համար :

Եթէ հանդուժէք որ ժողովրդեան օրինաւոր իշ-
խանութիւնը բռնաբարելով տիրապետութիւնն ա-
զատ ընկերութեան փոխանակեն, եթէ ստրկաբար
զլուխնիդ ծռէք, մարդկութեան սրբազան իրա-
ւունքը կը մասնէք եւ Հայրենեաց անունը կուրա-
նաք : Ո՛չ, ախոր ուր անասունք կուտեն եւ կը
պառկին, ոչ Հայրենիք մ'է :

Եթէ որ եւ է նկատմամբ թոյլ տաք որ 'ի բաց
առնելով ժողովրդեան մեծագոյն մասը, ընկերու-
թեան իրօք հաւասար անդամներուն մէջ աստի-
ճաններ եւ մասնաւոր արտօնութիւն ունեցող դա-
սեր կազմեն, ահա ժողովրդոց իշխանութեան անօ-
րէն յափշտակութիւնը կը վաւերացնէք, որով այս-
պիսի աստիճաններ եւ դասեր հաստատելու իրա-
ւունքն իրենց կըստանձնեն. ահա ձեր իսկ եւ ձեր
եղբարց իրաւունքը վատարար կը դոհէք, կը ժրխ-
տէք ձեր եւ իրենց մարդկային յատկութիւնը, եւ
ահա 'ի ծունր կիյնաք ճշմարիտ ընկերութեան ա-
ւերակաց վրայ, բռնակալութեան ոտից առջեւ :

Եւս է 'ի բնէ անկախ ընտանեաց միութեան
նպատակը, եթէ ոչ հաւասարութեան եւ ազա-
տութեան ասպահովութիւնը, արդարութեան ճշ-
մարիտ թաղաւորութիւնը, բարօրութեան ծաւա-

Դուքն հասարակաց աշխատութեան արդեամբ, ճանչ-
նալու եւ գործելու անսահման գորութեան դար-
գացմամբ, գորութեան՝ որոյ սերմն մարդկութեան
մէջ ամփոփեալ է: Արդ ինչ պէտք է այս նպատա-
կին հասնելու համար: Արդար օրէնքներ: Թէ ինչ
են օրէնք, տեսք թէ օրէնսդիրք որոնք են: Եթէ
ոմանք միայն դնեն օրէնքներ, անտարակոյս իրենց
անձնական շահուն կը ծառայեն իսկ եթէ ամէնքը
քնականապէս այնպիսի օրէնքներ կը հաստատեն որ
ամէնուն օգտուէտ ըլլան, համաձայն յաւիտենա-
կան սկզբանց, համաձայն դերագոյն զգացմանց սի-
րոյ, եւ համաձայն սրբազան շահուց՝ որ ընկերու-
թեան հիմն կը հաստատեն: Արնաք միայն հան-
դարտ ըլլալ եթէ ամէնքն օրինաց կազմութեան
գործակից ըլլան օրէնսդիրներն ընտրելով:

Այն ժամանակ ոչ եւս հասարակաց գործոց մա-
տակարարութենէ պիտի զրկուիք, ոչ եւս անպաշտ-
պան անձնատուր պիտի ըլլաք անոնց՝ որք զձեզ
իրենց օգտին կը գործածեն, ոչ եւս պիտի ար-
տաքսեն զձեզ այն ժողովներէն, ուր ձեր կենաց
պայմանները կորոչեն, ինչպէս կարտաքսեն մարդ-
կային ընկերութեան մէջ գաղտագողի սպրդող ա-
նարդ անատունը, եւ ոչ եւս ըստ քաղաքական օ-
րինաց տարադիր դաս մը պիտի կազմէք. արդա-
րեւ այն ժամանակ Հայրենիք մը պիտի ունենաք:

Եւ Հայրենիքը՝ որ զանազան ընտանիքները
կը յիացընէ, պէտք է ամէն ընտանիքէ աւելի սի-
ւէք. ապա թէ ոչ այս միութեան կապը կը քայ-
քայէք, ամբողջ մարմինը մէկ անդամոյն հպատա-
կեցընելով, կը ջնջէք ընկերութիւնը անձնասիրու-

Թեան ազգեցութեանը ներքեւ ձգելով, անձնասիրութեան կըսեմ որ ամեն ընկերութիւն հիմնադրատակ կընէ :

Հայրենեաց նուիրեցէք ուրեմն զձեզ, ձեր սիրտը ձեր բազուկը, ձեր վաստակը, ձեր ստացուածքը ու ձեր կեանքը: Ա՛վ որ Հայրենեաց համար մեռնիլ վարանի, այնպիսին յաւիտեանս վատանուն մ'է :

Բայց սակայն կը յիշեցընեմ ձեզ թէ՛ պէտք է մարդկութիւնը նախամեծար համարիք քան զՀայրենիս . վասն զի ազգ ազգաց հետ նոյն յարաբերութեամբ կապուած են ինչպէս ընտանիք ընտանեաց հետ եւ մի եւ նոյն պարտաւորութեանց են թակայ են : Իսկապէս մարդկային ցեղը մի է, եւ այն ժամանակ միայն բարեկարգութիւնը կրնայ հաստատուիլ, այն ժամանակ միայն աշխարհիս երեսէն չարիք կը վերնան, երբ բաժանեալ ազգերն իրենց պատուարները կործանելով, մէկ եւ դորաւոր ընկերութիւն մը կազմեն :

Մասնական Հայրենասիրութիւնն որ է ըսել ազգաց անձնասիրութիւնը, ազեռալից հետեւանքներունի ինչպէս անհատական անձնասիրութիւնը . կը դատէ, կը բաժնէ այլ եւ այլ գաւառաց բնակիչները, կը դրդուէ զիրենք, փոխանակ օգնելու իրարու միասել, եւ է հայր արիւնհարբու եւ ժանտաբուխ հրէշին դոր պատերազմ կոչեն :

Միթէ կան բնութեան եւ իր օրինաց այնպիսի հակառակ բան մը ինչպէս ՕՏԱՐԱՅԱՆԻ անունը : Ա՛չ միթէ ամէնքս եղբարք եմք եւ ինչպէս կրնայ եղբայր եղբոր օտար ըլլալ :

Ազգ ազգաց արգարութիւն եւ ողորմածութիւն

պարտին • փոխադարձաբար յարդել պարտին իրա-
ւունքը եւ հարկը պահանջելով օգնել պաշտպա-
նել ուրիշ ազգի մը իրաւունքը եթէ վտանգի մէջ է,
վերստանալ եթէ կողոպտեալ է : Ազգաց ճակատա-
գիրք համակերպ երաշխաւորութեամբ կապուած
են : Ազգ մը որ անտարբեր աչօք կը դիտէ մերձա-
կայ ազգի մը նուաճիլն, իր ազատութեան փոսը
կը փորէ :

Ճգնեցէք ուրեմն հանապազ զազգերը միացընե-
լով ջնջել ամեն նախապաշարմունք որ իրենց բա-
ժանման պատճառք են : Ամէն ազգ նախախնամու-
թենէ մասնաւոր պաշտօն մը ստացած է, իր հանձա-
րոյն, բնական դաւառին եւ կլիմայի համեմատ ձե-
ռնատու ըլլալ մարդկային յառաջագիմութեան եւ
կատարելութեան : Փոխանակ արդելքներ յարուցա-
նելու, պարտին մարդկութեան օգնել, վասն զի,
իւրաքանչիւր ազգ իրեն համար աշխատելով՝ ամ-
մէն ազգաց համար կաշխատի : Ազգերը իրենք ի-
րենց չեն կարող յարատեւել եւ զարգանալ եթէ ոչ
փոխանակի մէկ մէկու ձեռք կարկառեն : Քարերայք
են որք ազգերը իրենց ծառայեցընելու համար կրսեն
թէ ազգաց շահերը իրարու հակառակ են, այն հա-
կառակ են պատահամբ վասն զի իրենց բնական
համբերութիւնք խանդարած են : Նորոգեցէք այդ
յարաբերութիւնները եւ ահա մէկուն բարիքը միւ-
սին բարիքն է, ինչպէս բարեկարգեալ ընտանեաց
մը մէջ, մէկ անդամոյ բարիքը եւ բարօրութիւնը
միւս անդամոյ բարիք եւ բարօրութիւն են :

Արբ յորդ անձրեւօք ողողի այն դաւառը ուր
է նեղոսի ազրիւրը, գետը աճելով կը բարձրանայ

եւ կամաց կամաց հովիտները ծածկելով կը պըտ-
 դարերէ : Բայց ոչ մի՞թէ այդ բարերէր ջուրերը
 հեռաւոր դաշտաց մէջ ծաւալելէ առաջ, իրենց
 ամուրները կոռոզեն :

Անձնասիրութիւնը կայ միշտ եւ պիտի մնայ
 այս ինչ կամ այն ինչ ձեւով . բայց ոչ ոք կարող
 է, առանց որոշ նպատակի հասու ըլլալ յառաջա-
 դիմութեան որոյ ճանապարհը ընդմիջեալ է, եթէ
 ոչ ամէն շահէ, ամէն անձէ եւ ամէն ազգէ վեր
 դասէ ընդհանուր մարդկութեան սրբազան շահե-
 րը : Այն սէրը եւ անձնասիրութիւն, որոյ նպա-
 տակը մարդկային ցեղը չէ, կոյր, խարխուլ եւ
 անկատար են եւ շուտով կը սպառին . ինչ են ան-
 հատք, ընտանիք եւ ազգք եթէ ոչ ամբողջին մա-
 սուները առանց որոյ ոչինչ են : Աւերջին եւ կատա-
 րեալ միութիւնը յորում ամէն յարաբերութիւնք
 սերտ կապով պնդեալ, յորում ամէն իրաւունք
 կենդրոնացեալ, յորում ամէն պարտաւորութիւնք
 դաշնակելով յարմարեալ են, մարդու անեղծ է-
 րութեան լրումն է :



ԺԳ.

Պարտաւորութեանց բովանդակութիւնն որ կե-
 նաց աղբիւրն է, ինչպէս նաեւ այն ճշմարտու-
 թեանց բովանդակութիւնը որ պարտաւորութեանց
 անխախտելի հիմունքն են, կազմեն կրօնքը որ
 կապ մ'է ոչ միայն մարդոց, այլ եւ ամէն արարա-
 ծոց մէջ :

Ուստի եթէ ոք կրօնքն ուրանայ, պարտքը կուրանայ. վասն զի եթէ ճշմարիտ պարտքեր կան, ապա ուրեմն կայ եւ ճշմարիտ կրօնք մը, եւ որովհետեւ պարտաւորութիւնք իսկապէս անայլայլելի են եւ տիեզերական, ապա ուրեմն կրօնք եւս իսկապէս անայլայլելի են եւ տիեզերական:

Որպէս զի պարտքերն իս կատարեմք, պէտք է նախ հաւատամք այն ամէն ճշմարտութեանց որոց վրայ կառուցեալ են: Ուստի կրօնից սկզբնական հիմն հաւատք են. հաւատք են անհրաժեշտ պայման մտաւորական կենաց, ընկերութեան եւ մարդկային ցեղին յարատեւութեան:

Եւ անա այսպէս մարդկութիւնը, բնութեան ազդեցութեամբ, 'ի սկզբանէ, 'ի հարկէ կը հաւատայ:

Կը հաւատայ թէ կայ գերազոյն, արարիչ եւ անսահման էակ մը. եւ թէ Աստուծոյ անունը, տիեզերական Հօր եռապատիկ սուրբ անունը մարդկային ամէն լեզուաց մէջ կը դանուի:

Կը հաւատայ թէ կայ բարեաց նախախնամութիւն մը որ զամէն բան կարգադրէ ծածուկ վախճանաւ, ըստ օրինաց յաւիտենական իմաստութեան եւ յաւիտենական սիրոյ:

Կը հաւատայ թէ նախախնամութիւնը կը հսկէ մասնաւորապէս մարդուս վրայ, եւ զինքը կը թելով կառաջնորդէ իր քայլերը որ պէս զի կարող ըլլայ բարձր եւ վսեմ ճակատագիրն լեցնել:

Կը հաւատայ բարւոյն եւ չարին էական դանադանութեան, կը հաւատայ թէ մարդ ազատ է ընտրել բարին եւ չարը եւ ըրած ընտրութեանը համե-

մատ իր դործոց անհրաժեշտ վարձ կամ պատիժը
ընդունիլ :

Կը հաւատայ հուսկ ուրեմն թէ այս աշխարհիս
համառօտ եւ ծանրատաղտուկ կեանքէն վերջը,
մարդուս առջեւ կատարելագոյն կեանք մը բաց-
ուելով, յանսահմանս կը ծաւալի 'ի խորս յաւիտե-
նակեանութեան :

Հաւատացէք դուք եւս որոց մարդկային ցեղը
կը հաւատայ : Առանց հաւատոյ ինչ են պարտք եւ
ինչպէս կարող եմք ըմբռնել . եւ ինչ է միութիւ-
նը եթէ ոչ ամենուն 'ի մի կեդրոն դիմելն . եւ ինչ
է այս ամէն արարածոց կեդրոնը եթէ ոչ անսահ-
ման էակը անհրաժեշտ մի, յորմէ ամէն բան բխէ
եւ յորում ամէն բան վերադառնայ, որ ստեղծէ
պահպանէ եւ կենդանացընէ զամէնը . ինչ է այս
եթէ ոչ Աստուած :

Վայ եւ ասիտոս ուրեմն անաստուածին որ ա-
նօթի եւ ծառա կը խնդրէ այն կաղդուբիչ կաթը
որով ամէն արարածք անանին, բայց խաւարային
ոչնչութեան մէջ ընկղմեալ մահուն ցամաք ստինք-
ները կը ծծէ միայն :

Առ Աստուած դիմելով անձկամք իրեն միանալ
եւ իրեն միանալով միանալ ամէն արարածոց՝ որք
իրեն կը դիմեն . առ Աստուած դիմելով դարձեալ
ցանկամք դերագոյն բարւոյ դերագոյն կատարե-
լութեան եւ անձկամք աշխատելով անդադար կա-
տարելանալ :

Այս է նաեւ Քրիստոսի վարդապետութեան
սկզբունքը : «Եղբրուք կատարեալք որպէս եւ Հայրն
ձեր երկնաւոր կատարեալ է » :

Ի՞նչ ըսել կուզէ: Միթէ կարո՞ղ է մարդ Աստուածային անասման կատարելութեան հասնիլ . ո՞չ, բայց ըստ բաւականին պէտք է միշտ մերձեանայ, միշտ եւ եւս: Եւ այսպէս իր ջանքերը վախճան մը կուենենան եւ այս վախճանին հասու կըլլայ, եւ իր կեանքը, ինչպէս ընդհանուր մարդկութեան կեանքը, այն օրինաց համեմատ, որ կը սահմանեն կենաց պաշտօնը եւ կը տնօրինեն զարգացումն, իր կեանքը կըսեմ մշտնջենապէս կը համբառնայ դէպի անդրդուելի պատճառ ամէն կենաց մշտնջենապէս կաճի յԱստուած:

Ասանց սիրոյ չիք միութիւն, վասն զի սէրն է միութեան դօրութիւնը: Սիրեցէք ուրեմն զՏէր Աստուած ձեր բոլոր դօրութեամբ ողւոյ եւ մտաց: Այս է ահա առաջին եւ գերագոյն պատուիրանը:

Երկրորդ պատուիրանը առաջինէն կը ծագի եւ անոր նման է: Սիրեցէք եղբայրնիդ ձեր անձին պէս:

Ա՛յլ որ զԱստուած չսիրէ ամէն բանէն աւելի, իր անձը միայն կը սիրէ . վասն զի իր անձէն զատ ուրիշ նպատակ եւ ուրիշ վախճանն ոչ ունի եւ ոչ կրնայ ունենալ:

Ա՛յլ որ իր եղբայրը չսիրէ իր անձին պէս, ոչ զԱստուած սիրէ եւ ոչ կրնայ սիրել վասն զի ամէն բան ՚ի սէր Աստուծոյ, Աստուծոյ կատարեալ միութեան մէջ կը հալի:

Սրդ սիրելով զԱստուած, Աստուծոյ կը փափաքիմք . եւ աղօթքը հողւոյն փափաքն է, այն շարժումն է որ կը մղէ զհոգին առ առարկայն սիրոյն, անձկալով վայելել զայն: Այսպէս ահա աղօթք սիրոյ զգացումն է եւ իրարմէ անբաժան են:

ՉԱստուած սիրելով անձերնիս իրեն կը նուիրեմք, իր էութեան մէջ կընկզմիմք, մեր մարմնէն կը հեռանամք եւ կանջատիմք. Աստուծոյ հետ մէկ ըլլալու համար զԱստուած սիրելով կամիմք ինչ որ ինքը կամի, եւ կը զոհեմք մեր կամքը իր կամաց. եւ այս զոհը որ կընեմք, ճանչնալով իր իմաստութիւնը, արդարութիւնը եւ գերադոյն քրութիւնը, համոզուելով թէ մեք ոչինչ եմք եւ ինքն է այնչափ, այս զոհն է կատարեալ պաշտօն զոր ամէն բանաւոր արարածք պարտին իրեն մասուցանել. այս զոհն է մտաւոր եւ ճշմարիտ երկպառութիւն:

Եւ ոչ միթէ սիրել զընկերը զոհ եւ անձնանուիրութիւն մ'է: Զոհ կամաւոր լի անպատում ուրախութեամբ. վասն զի սիրելով մեր ընկերոջ սիրոյն մէջ կապրինք մեր կեանքը կենացն հետ կը խառնեմք, վշտաց եւ հաճոյիցն հազորդ կըլլամք որով մեր էութիւնը անդադար ընդարձակելով ամէն մարդիկ 'ի մի Աստուածազան մարդ կը վերածին մշտածաւալ եւ սերտ միութեամբ ընդ Աստուծոյ:

Եւ որպէս զի այս միութիւնը կատարուի, Աստուած ինքնին կօղնէ մարդուս որոյ վրայ առատապէս կը հեղու իր զօրութիւնը, լոյսը եւ սէրը որոնք կըլլան մարդուս սէրը, լոյսը եւ զօրութիւնը: Առանց Աստուծոյ մարդ ինչ բանի կարող է:

Մի շփոթէք կրօնքը որ էապէս մի եւ այլայլելի է իր զգեցած զանազան եւ արտաքին ձեւոց հետ: Արտաքին ձեւերը անկատար եւ տկար են, կը հնանան եւ կանհետանան. մարդոց գործ ըլլա-

լով մարդոյ պէս կանցնին : Ճամանակը կը մաշէ
Սատուածային սկզբունքը : Ուստի երբ կրօնքը ծած-
կող պատեանը քակակո՞վ փոշի դառնայ, ուրիշ
կատարելագոյն պատեան մը կը բողբոջէ առաջնայն
չառա իղներէն :

Օրհնեցէք զՍատուած որ քրիստոնեայ ծնած
էք : Կամ չկայ ճշմարիտ կրօնք՝ որ զմարդիկ յա-
ւիտենից Սրարչին հետ կապելով միացնէ, եւ կամ
Քրիստոնէութիւնն որ է կրօնք սիրոյ, եղբայրու-
թեան հաւասարութեան, յորմէ բխեն պարտք եւ
իրաւունք, Քրիստոնէութիւնը կըսեմ ճշմարիտ կր-
օնքն է : Բազդատեցէք ուրիշ ազգերը քրիստո-
նեայ ազգաց հետ եւ տեսէք թէ որչափ մարդ-
կութիւնը քրիստոնէութեան երախտապարտ է :

Քրիստոնէութեան արդասիք են դերութեան եւ
ատրկութեան հետզհետէ ջնջուիլն, մտաւորական
զարգացումն որոյ ազդեցութեամբ բարուց եւ օրի-
նաց նախնի խստութիւնը կամաց կամաց ամոքելով
արդարութեան դրոշմն կը կրեն . մարդուս բնու-
թեան վրայ տարած զարմանալի յաղթանակներն որ
դիտութեան եւ ճգանց արդիւնք են անհատական
եւ ընդհանրական բարօրութեան աճումն, եւ վեր-
ջապէս այն ամէն բարեաց բովանդակութիւնն ո-
րով արդի քաղաքակրթութիւնը կը դերազանցէ
նախնեաց քաղաքակրթութիւնն եւ այն ազգաց
որոց վրայ տակաւին Աւետարանի լոյսը ծաղած չէ :

Սյա անթիւ բարեաց հետ անտարակոյս չարիք
ալ խառնուած են, բայց Քրիստոնէութիւնն առատ
բարեաց աղբիւրն է, իսկ չարեաց պատճառք անոնք
են որ Քրիստոսի վարդապետութիւնը թիւրած կամ

արքայան պատուիրանքը բռնադատած են . չարիք
 դարձեալ հետեւանք են անկատար եւ արտաքին
 ձեւոյ՝ դորս մարդիկ հնարած եւ ժամանակին յար-
 մարչուցած են . վասն զի մարդիկ իրենց երկրաւոր
 շահերն այդ փոխփոխելի ձեւոյ հետ կապած հետ-
 դհետէ քրիստոնէական սկզբանց համաձայնած են ,
 այլայլելի եւ մահկանացու մարմինն անփոփոխ եւ
 անմահ հոգւոյ հոգատակեցընելով :


Արսեմ ձեզի թէ այս անկարողութիւնը չի կըր-
 նար յարատուել եւ մերձ է իր օրհասը . եւ քրիս-
 տոնէութիւնն որ մեռելադարդ հողային քողով պա-
 տատեալ եւ թաղեալ է , պիտի ծաղէ վերասին
 անթառամ եւ մշտափայլ պայծառութեամբ :

Չատելով մահկանացուաց դորձերէն , որոց մի-
 ահամուռ խառնուած է , Քրիստոնէութիւնը մարդ-
 կութեան առաջին եւ վերջին օրէնքն է , վասն զի
 մարդս Սատուձմէ զատ ուրիշ վախճան չկրնար ունե-
 նայ . վասն զի սիրով միայն կարող եմք Սատուձոյ դի-
 վել եւ իրեն հետ միանալ , վասն զի սիրոյ գերադոյն
 պատուիրանը չկրնար սպառիլ , ոչ երկրիս վրայ
 ուր զամէն անհատ , զամէն ընտանիք , զամէն ազգ
 ի մի ընդհանուր ժողովուրդ պիտի վերածէ , եւ ոչ
 յերկիւս՝ ուր զարարածներն Սրարչին հետ կատա-
 բելազոյ՝ մրութեամբ պիտի կապէ :

Եւ այսպէս Քրիստոսի ըսածը ճշմարիտ է եւ
 միշտ պիտի ըլլայ : « Եկէք առ իս վաստակեալք եւ
 բեռնաւորք եւ ես հանդուցից դձեզ » :

Եւ օր մը ամէնքն իրեն պիտի դիմեն , եւ այն
 օրը հետեւ չէ եւ ապագային խորը կը տատանի :
 Հիմա արշաղուսոյ նուազ նշոյլը մեր քոյղերը կա-

աաջնորդէ . եւ երբ արեւը ծագէ , աշխարհիս ան-
մահ լուսով ողողեալ , յուսով , հաւատով եւ սիրով
կենդանացեալ , զինքը սխալի սղջունէ երգօք եւ
օրհնութեամբ :



ԺԵ .

Մի մտնաք բնաւ թէ առանց պարտաւորու-
թեանց չկայ ընկերու թիւն եւ ոչ կեանք , եւ թէ
կրօնից պատուիրանք եւ պարտաւորութիւնք մի
եւ նոյն են , մի եւ նոյն են 'նաեւ' կրօնից վարդա-
պետութիւնն եւ այն աւէն ստուգու թեանց բովան-
դակու թիւնն որ պարտաւորութեանց անփոփոխ եւ
հաստատուն հիմն է :

Ո՛վ որ կրօնքը մերժէ , կը մերժէ պարտքը , մարդ-
կային եւ ասկեղերական բնածին զղացումն եւ հա-
մողումն , կու բանայ մարդկային բանականութիւնը
եւ խիղճը , կու բանայ իր բնութիւնը եւ բնութեան
օրէնքը , կու բանայ ընկերութիւնը եւ իր անձը ,
վասն զի առանց ընկերութեան ինչպէս կրնայ գո-
յանայ եւ ըլլալ :

Եթէ իւրաքանչիւր սք պարտաւորեալ չըլլայ
ու բիշ մարդոց , ուրիշներն ալ իրեն պարտաւորեալ
չեն : Արով թէ մարդոց եւ թէ ամէն արարածոց
հետ անդադար կու ելով , անյագ կրից եւ անսահ-
ման անկարողութեան սլծգալի խառնուրդը կը ներ-
կայացնէ ասկեղերաց մէջ :

Միթէ կոնց թշու առութիւնն մը այս թշուառու-

Թեան հաւասար : Նոյն հակառակն պարտաւորու-
 թեանց եւ դանոնք լեցնելու ճգանց պտուղը բա-
 րորու թեան իրական վայելումն է ամէն բարիքներէ
 աւելի, մտաց հանդարտութիւն եւ ներքին խաղա-
 զութիւնն է, եւ այս մաքուր ուրախութիւնը կե-
 նաց վշտերը ամոքելով, կընդարձակէ զհողին եւ
 յերջանիկ աշխարհ մը կը փոխադրէ :

Առաքինու թիւնը յինքն ունի իւր վարձն : Իսկ
 մոլոր թիւնն իր անվրէպ պատուհասը հետը կը կրէ,
 վասն զի անձկու թեան, տաղնապոյ եւ ամէն տե-
 սակ չարեաց աղբիւրն է : Տեսնը էք երբէք անօրէն
 մը երջանիկ : Թերեւս հարուստ եւ դօրաւոր ըլլայ,
 բայց հարատու թիւնն ու դօրութիւնը՝ երջանկու թիւն
 չեն, եւ եթէ դիանաք թէ ընդհանրապէս մետաք-
 սեաց եւ ոսկեզարդ հազուսանները մրպիսի սոսկալի
 վէրքեր կը ծածկեն, եթէ յանկարծ իրենց քողը
 մերկանան, դարհուրանօք յետս կը փախչիք :

Արտաքին երևույթներէն մի խարուիք, կան
 թուհաւոր բոյսեր՝ որ փտտութեան մէջ աճելովը
 շատ անգամ վառվռուն եւ գեղեցիկ գոյներով կը
 փայլին . բայցէք եւ տեսէք թէ ինչ կայ ծոցը, ժան-
 տահոտ եւ սեւ փոշի ո՞ր :

Քրիստոնէական հաւատոյ հակառակ, եւ չոր
 ընկերութեան մէջ յորում կայրիք, բարոյականի
 օրինաց համեմատ դօրծելով, չեմք կարող յաջողիլ
 միշտ : Եւ սակայն աստուածային օրինաց հնազան-
 դելով պտուղն անմիջապէս կը քաղեմք : Աչքեր-
 նիդ այս կողմ դարձուցէք եւ տեսէք այն ընտա-
 նիքն որոյ անգամք հաւատարմու թեամբ պարտքեր-
 նին կը կատարեն, ուր աշխատութեան արդիւնքը

ա Ռենուս պիտոյից սեփնակ անեալ է ևւ ոչ ամօթ աչից
հաճոյից . ուր հայրը բարի օրինակ կուտայ միայն .
ուր կինը ընտանեկան հոգերով զբաղեալ , մութե-
զան անձնանու թութեա կը ամուսնոյն ևւ դաւակաւց
աէրը կը գրաւէ : Այս ընտանիքը թերեւս չքաւա-
րութեան ենթակայ է , բայց իր բազմը չի փոփոխեց
այն ընտանեկաց վիճակին հետ որ թէպէտ հարուստ
բայց անառակտ թեամբ ևւ անկարգութեամբ ա-
պականեալ է , ուր ա Ռէն օր ամէն ժամ ներքին կը
ոխներ , առելութիւն ևւ նախաձ կը ծագին ևւ
իրաւունք փոփոխալի ասնակոն կըլլան : Յար-
դենք դառաջինն որ քաղցր ևւ խանդազակաթ ըզ-
գայումներ կը շնջէ մեզ . արհա հարհելով դերկորդը
փախչիմք՝ ինչպէս գարշելի օձ մը տեսնելով կը
փոխչիմք :

Ա՛հ եթէ ոչ բարի մարդոյն սրաին խորը քննէ ,
որ Աստուծոյ ևւ եզրարց սիրովը վառեալ է , այն-
պիսի մարտը ևւ կենդանի ա բախութիւններ կը
դանէ հոն՝ որոյ նկատմամբ ուրիշ ամէն ա բախու-
թիւններ զգուելի կը թաին :

Այսպէս ահա պարտաւորութեանց առաջին այ-
դիւնքն է կենաց չարիքները նուազեցրնելով՝ դառ-
նութիւնն ամոքել ևւ այնպիսի ամպասում ուրա-
խութիւններ խառնել՝ զորս ոչ կրնան երբէք ճա-
շակել , որք չար կը'ց ներքեւ նուաճեալ ևւ անձ-
նասիրութեամբ իրենք իրենց վայ կեդրոնացած
են : Համարելով թէ այս է միայն անանց փարձքը
որք պարտքերնին կը լեցնեն , կը հարցնեմ ձեզ
ոչ ապարէն իսկ մեծ է :

Բայց պարտք հաւատարմութեա կը կատարելով

ուրիշ արդիւնք եւս յառաջ կը բերեն կարգադրու-
 թեան հիմնական օրինաց դարձանալի կապակցու-
 թեամբ : Այսինքն իրաւունքը կարդիւնաւորեն :
 Այն ժողովուրդ, պարտաւորութեանց արդեամբ
 միայն կարող եւ ձեռք բերել անիրաւարար յաւիւրչ-
 առակեալ իրաւունքդ : Միթէ կրնայ ձեզմէ մէկը ա-
 սանձինն՝ հարստահարչաց զօրութեան դէմ կռուիլ .
 կը փշրեն դինքը իրբեւ անօթ հողաշէն : Արպէս ՚ի
 յաղթէք՝ պէտք է միանաք . եւ միթէ կրնա՞ք մի-
 աթիւն կադ նւ եթէ ոչ սիրով կապեալ էք, եթէ
 ոչ իւրաքանչիւր ոք օրինաց պարտուց լիովին հը-
 պատակելով, իր կեանքը եւ շունչը եղբարցը կե-
 նաց եւ շնչոյն խառնելով եղբարցը համար մեանիլ
 եւս յանձն առնու :

Այտք է նախ ձեռք բերէք ձեր պատիւը եւ ձեր
 անփոխադրելի իշխանութեան ազատ դորձածու-
 թիւնը : Եւ ինչ պէտք է այս բանիս համար :

Այտք է ըստք համակամ համաշնն եւ սյսինքն
 ուրիշի իրաւունքը ձեր իրաւունքը ճանչնաք եւ
 ձեր շահերը ՚ի մի շահ ձուլէք : Աստ թէ ոչ ա-
 սանձնաշնորհութիւն մը պահանջած կըլլաք եւ ոչ
 իրաւունք, որով ձեր թշնամիք կըլլան թէ անոք
 որ ասանձնաշնորհութեանց դէմ կը մարտաիս եւ
 թէ անոնք՝ որ ասանձնաշնորհութիւններ կը վայե-
 լեն : Աւտի եթէ չսիրէք ձեր եղբարքը ձեր ան-
 ձանց պէս, բնաւ ազատութեան չիկայ յոյս . այլ
 արկու թեան բեռը սլախի կրէք միշտ, ուրիշ ա-
 կընկալութիւն մը չունիք :

Կսկ եթէ սիրէք ձեր եղբարքը ձեր անձանց
 պէս, չհանդուրժելով որ դիրկնք բռնարարեն եւ

առէն պարագայից մէջ իրենց հեցուկ եւ ձեռնառե-
լլալով, անիրաւին դորութիւնը կը վանէք եւ հա-
մաշխարհական ողորմածութեամբ համաշխարհական
բռնութեան դէմ կը դնէք:

Անիրաւութեան դէմ պատերազմողը՝ կանուխ
կամ ուշ կը յաղթանակէ: Որպէս զի ձեր յաղթու-
թիւնն ապահով ըլլայ, արդարութիւնը միայն կա-
մեցէք: Յարգեցէք անոնց իրաւունքն անգամ որ
ձեր իրաւունքն սանակոխ կրնեն: Յարգեցէք ա-
ռանց բացառութեան ամենուն անձնական ապա-
հովութիւնը, ազատութիւնը եւ ստացուածքը,
շնան զի պարտաւորութիւնը ամենուն վրայ հա-
ւասարապէս կը տարածուի: Եթէ իրաւունքը բռ-
նաբարէք՝ ուր կերթայ այդ բռնաբարութեան վեր-
ջը: Ոչ անկարգութեանը անկարգութեան դար-
ման կըլլայ: Ձեր թշնամիք կախատաննն զձեզ
թէ կուզէք իրենց տիրապետութիւնը ձեր տիրապե-
տութեամբ փոխանակել եւ խարդաւանել ինչպէս
իրենք կը խարդաւանեն, կամբաստաննն զձեզ թէ
վրէժխնդրութեան խորհուրդներ եւ բռնաւորու-
թեան դադափարներ կը սնուցանէք, որպէս զի տը-
կար մտքերը սարսափով պատեն եւ ձեր գերու-
թիւնն ապահովցնելով երկարեն:

Փարատեցէք այդ ցնորքները որով վատ խա-
բեւայք պարզաճասց երեւակայութիւնը գրգռե-
լով երկիւղ կը շնջեն եւ ազգային ճանապարհէն
կը հեռացնեն: Հոչակելով հրատարակեցէք ձեր
պարտքը եւ իրաւունքը, սասնց իրարմէ զատելու,
պարտք եւ իրաւունք միշտ լծակից ըլլալով ձեր
խղճին եւ դործոց առաջնորդեն: Այն ժամանակ

ամէն խոչ եւ արդէք վերնալով ձեր վախաքնե
կը համնիք :

Պարտիք նաեւ ձեր դասն եւ մութացածոյ նիւ-
թական կեանքը բարւոքել . քաղցին հետ կռուելով
պարտիք ապահովցրնել ձեր կնոջ եւ որդւոց սնուն-
դը յորմէ մարդիկ միայն : Աստուծոյ ամէն արարածոց
մէջ յաճախ գրկուած են : Եւ ինչո՞ւ գրկուած էք .
վասն զի ուրիշները ձեր վաստակոց պտուղը լախե-
լով կը պարտաւանան : Եւ ինչ է այս հարեաց պատ-
ճառը : Վասն զի իւրաքանչիւր ոք դատ դատ ապ-
րելով հունի միջոց դրամադրուխ մը հաստատելով
աշխատութեան հետ մրցիլ , ուստի անպաշտպան
անձնատուր կըլլայ մեծամեծաց շահասիրութեան :
Ե՞նչպէս կրնաք այս աղետալից վիճակէն ազատիլ :
Միանալով եւ ընկերանալով , մէկ հողւոց չկրցածք
տասը հողի կարող են , իսկ հազար հողի լաւ եւս :

Կուրք մը առանձին շատ նեղութեամբ կապրի-
պեաներ մօտ խորշի մը մէջ . բայց ուրիշ կղբոց
հետ ընկերանալով յորձանահոս ալեաց մէջ ընդար-
ձակ եւ հեշտ բնակութիւններ կը կանդնէ ուր ա-
մէնքը առատութեան մէջ կապրին :

Բայց որ եւ է ընկերութիւնը չէ կարող յաջողիլ
եւ յարատեւել եթէ ոչ փոփոխակի վատահութեան ,
ուղղամտութեան , անդամոց զգտտա վարուց եւ
խոհմ խնայողութեան վրայ հիմնեալ է : Անիրա-
ւութիւն եւ նենգութիւն , ծուլութիւն եւ ան-
կարգութիւն անմիջապէս կը քայքայեն դոյն : Փո-
խանակ միութեան՝ դժտութեանց եւ հակառակու-
թեանց ազրիւր մը կըլլայ : Ուստի պարտաւորու-
թեանց ճշգրիտ գործադրութիւնն ընկերութեան

մը տեւողոյ թեան անհրաժեշտ պայմանն է նա մա-
նաւանդ արդիւնաբեր սկզբունքն է, ընկերոյ թիւնը
անմիջապէս պարտաւորութենէ կը ծնանի. ինչ է
արդարեւ ընկերոյ թիւնը եթէ ոչ եղբայրութիւն մը
որոյ կազմութեան պատճառն է լիովին եւ անվրէպ
հասնիլ նպատակին: Այլ զանձը միայն սիրէ եւ ին-
քը զինքը միայն հողայ, ում հետ կրնայ ընկերա-
նալ, եւ ինչպէս կրնանք ըմբռնել թէ զատուղք
կրնայ միանալ: Բառերն անգամ ներհակական են:

Պիտի ըսէք թէ ընկերութիւնը յիրաւի մեր չար-
եաց դօրաւոր դարմանն է. բայց միթէ անոնք որ
մեր չարիքներէն օգուտ կը քաղեն, կը հաւանին
թոյլ տալ որ դարման տանիւք: Նրենց օրինօք մեր
թեւերը պիտի կապեն եւ 'ի դուր պիտի ճզնիւք
միաբանիլ, եւ նորանոր բռնութեանց ենթարկու-
ելով մեր թշուառութեան լուծը պիտի ծանրացը-
նեմք:

Եւ ես կըսեմ ձեզի կամեցէք միայն, եւ անի-
բաւ օրէնքները հիմնադրապէս կը կործանին, եւ ամ-
պարչտաց բռնութիւնը ձեր անյողողող արութեան
դէմ խորտակելով կը փշրի: Աչ ոք կրնայ պարտուց
եւ իրաւանց միութեան ընդդիմանալ:

Յիշեցէք կուղքերը. դէտին ասիանց վրայ ցըր-
ուեալ էք. եթէ ընկերանալով միաբանիք, երա-
դրնիթաց եւ խորայօրձան կոհակաց դէմ անսասան
թումեր շուտով կը բարձրացընէք:



Մարդկու թեան ճշմարիտ օրէնքները կը ճանչնաք հիմա, դիտէք թէ մարդկու թեան յառաջագիմու թիւնը, ձեր եւ ժողովրդեան ներկայ եւ ապագայ երջանկու թիւնն այս օրէնքներէն կախու մտնին. վասն զի, դարձեալ կը կրկնեմ, ժողովուրդը՝ զոր հպարտք նուաճելով կարճամարհեն, բանի տեղ չեն դնիր, զոր իրենց անյագ շահասիրու թեան գործի բրած են, զոր իբրեւ դաշտ կը հնձեն եւ իբրեւ ձի կը թամբեն եւ կը սանձեն վրան հեծնալու համար, ժողովուրդը մարդկային ցեղն է :

Եթէ կարող ըլլաք ձեր իրաւունքը պաշտպանել եւ ձեր պարտքը կատարել, այս սարսափելի աղէտները կը հալածին : Մարդկային ցեղը իբր դարեւոր թշուառութենէ ազատելով, ոչ եւս մէկ քանի խտասիրտ անիրապետաց ստացուածը կըլլայ, որոց հիմա երկիրս յատուկ ժառանգութիւնն է : Այլ եւս ոմանց քրափնքը, վաստակը, քաղցը, արտասուքը, վիշաքը եւ անձկութիւնը միւսներուն յղփութիւնը, յիմար գեղխութիւնը, կրքերը, անսովոր հաճոյքները կը յագեցընեն. Այլ ամէնքը մասնակից կըլլան նախախնամութեան պարդեւաց :

Եւ սակայն մի խարտիք ոչ ժամանակին եւ ոչ իրաց ընթացքին : Մի երազէք ինչ որ անկարելի է եւ ինչ որ չի կրնար երբէք գործադրուիլ : Ասանկի փոխանակ աշխարհս պատու անհամար չարեաց գարման տանելու, բազմապատկելով կը ծանրացընէք զանոնք :

Մարդու աշխատել հանդամանաց եւ այս հան-
դամանքներէն յառաջ եկած օգտոց կատարեալ եւ
բացարձակ հաւասարութիւնը ոչ բնութեան օրի-
նաց մէջ է, վասն զի բնութեան տուրքերը, մարմ-
նոց եւ մտաց կարողութիւններն անհաւասարապէս
բաժնուած են մարդոց: Ապա թէ ոչ ինչ կըլլայ
ընկերութիւնը: Միթէ կարող է դոյանալ, դար-
գանալ, եթէ ոչ զանազան մասւոր տաղանդք եւ
տարրեր բնական ձիրք յարմար եւ պատշաճ ըլլան
աշխատանց, ստորագունէն սկսելով մին-
չեւ բարձրագոյնը: Ամանք դաշտերը կը հերկեն,
ամանք դիտութիւնները կը մշակեն, եւ ամէնքը
ըստ իրենց կարեաց ընդհանուրին բարօրութեան
մասնակից կըլլան:

Ընկերական կենաց ընթացքը արդէն իսկ ան-
գիմադրելի արդելք մ'է ընչից հաւասարութեան
դէմ. զոր եթէ առաւօտուն հաստատենք՝ երեկոց-
եան ինքնին կը ջնջուի, մարդոց ճարտարութեան
ընդունակութիւնն աւելի կամ պակաս, խնայողու-
թիւնը խոհեմ կամ վատ ըլլալով: Գայց պէտք է
ասոր վրայ դանդաղիլ քանզի երբ իւրաքանչիւր
որ անընդհատ ջանիւք եւ բնածին գրգմամբ կը
յուզնի անձնական բարօրութիւնը ապահովցնել,
ընդհանուրին բարօրութեան ձեռնառու կըլլայ:

Մի յուսաք նաեւ թէ ձեր թշուառ միճակը կրնայ
բողորոմին եւ անմիջապէս փոխուիլ. ինչ որ ալ ընէք
կատարեալ՝ եւ յանկարծակի փոփոխութիւն մը ան-
կարելի է, վասն զի այնպիսի բոնութիւն մը կը պա-
հանջէ որ փոխանակ ընկերութիւնը բարեկարգելու,
ընկերութեան զսպանակները կը խորտակէ:

Երբ յաջողիք քաղաքական կարողություն թիւ-
 նը քրիստոնէական հասարակութեան իրաւանց վը-
 րայ հիմնել . ձեր խնդրած եւ Սատուծոյ հրամա-
 յած վերանորոգութիւնն ինքնին պիտի կատարուի
 երևք յանրածան ճիւղս , որք են նիւթական կարգ ,
 մատարական կարգ եւ բարոյական կարգ :

Վ^ոնչ է նիւթական անկարգութեան պատճա-
 րը : Միթէ ոմանց գիւրութիւնը , ոչ , այլ միւսնե-
 րուն չքաւորութիւնն եւ այն օրէնքն է զորս հա-
 րուսար իր սեպհական շահուն համար յօրինելով ,
 աղքատին աշխատութեան արդիւնքը գրեթէ ինքը
 միայն կը քաղէ , ուստի աշխատութեան պտուղն
 ալ երթալով կը նուազի : Վ^ոնչ պէտք է ընել ու-
 ղեմն : Սպահովցընել աշխատութեան բաժինը աշ-
 խատութեան իսկ արդեամբը : Հարկ չէ մերկացը-
 նել անոնք՝ որ արդէն ստացուած մը ունին , այլ
 ստացուած մը ձարել անոր որ ստացուած չունի :

Արդ ինչպէս կրնաք այս վախճանին համարի .
 երկու միջոցով : Առանձնաշնորհութիւններն եւ մե-
 նախաճառութիւնը ջնջելով . դրամադրուիս կամ աշ-
 խատութեան կարեւոր դիւրածեան դործիներ բաշ-
 խելով :

Այս երկու միջոցներն ընկերական անչափ կա-
 րողութեան հետ զուգելով կրնան հարստութեանց
 ընական ընթացքը նորոգել , որ խորամանկութեամբ
 ոմանց ձեռքը կեդրոնացեր են . կրնան բարիքնե-
 րը հաւասարապէս եւ արդարապէս բաժնելով յան-
 հունս բազմասրաակել :

Վնչ որ տեւողական է ժամանակի կարօտ է եւ
 արդիւնաբեր դորութեամբ դանդաղ՝ բայց ստոյգ

ազգեցութեամբը զլուխ կելլայ : Նթէ ցամաքի
 առուակը , հեռեւաբար կը գեղնի եւ կը խամբի այն
 մարդագեղանը զոր կուողէր . եւ որպէս զի վերստին
 կանաչանայ պէտք է նոր ջուր մը բերել հոն որ
 ծաւալելով մակերեւոյթին վրայ եւ մինչեւ խո-
 տոց արմատը թափանցելով ամէն մէկ թելին նը-
 շաղեալ կեանքը կազդուրէ :

Նթէ աշխատութիւնը ազատ ըլլայ՝ աշխարհիս
 կը տիրէ . վասն զի աշխատութեամբ մարդս 'ի գը-
 լուխ կը հանէ Սրարչին իրեն յանձնած դորձը եւ երկը :

Քաջալերեցէք ով աշխատաւորք : Մի լքանիք
 բնաւ , վասն զի Սատուած ձեզի հետ է : Ձեր ջան-
 քերն անպտուղ չեն մնար , ձեր վիճակը բարւոքե-
 լով հետզհետէ մեծամեծ բարիքներ եւս պիտի ար-
 դիւնաւորեն մինչեւ այն օրը՝ երբ երկիրս բոլո-
 րովին նորոգելով ընդարձակ դաշտի մը նմանի ո-
 րոյ հունձը խաղաղութեամբ կը ժողովէ եւ կը բաժ-
 նէ մէկ ընտանիք միայն :

Եւ քանի ձեր կեանքը դիւրանան եւ մարմնա-
 ւոր պիտոյից զբաղմունքն նուազին՝ մտաւոր պի-
 տոյքներ պիտի զգաք եւ դանտնք յագեցընելու ե-
 սանդն եւ վափաղ : Աւսանիլ պիտի կամիք եւ պի-
 տի ուսանիք . վասն զի մտքերնիդ մշակելու եւ գի-
 տութիւնն ստանալու ամէն առիթ եւ միջոց ան-
 պակաս պիտի ըլլան : Ամէնքը պիտի յագեցընեն
 իրենց ծարաւը դիտութեան աղբիւրէն՝ որ աշխա-
 տութեան պտուղը բազմապատկելով՝ բարգաւա-
 ճութեան եւ երջանկութեան դաները պիտի բա-
 նայ ձեզ :

Սոսկ մարմնաւոր պիտոյքն հողալով մարդս ա-

նաանոց կարգը կանցնի, վասն զի անասունք իրենք
 իրենց վրայ կեդրոնացած են միօջն: Արդ՝ ձեր ար-
 գի վիճակին մէջ շարաթուն վեց օրը մարմնոց կը
 նուիրէք. հարիւ եօթներորդ օրը կը մնայ ձեզ
 մտաւորական կեանքով ապրիլ՝ որ մարդու ճշ-
 մարիտ կեանքն է: Յայց հետզհետէ փոխանակ մէկ
 աւուր՝ երկու օր, երեք օր եւ ալ աւելի պիտի
 վայելէք. վասն զի յառաջագիւմութեան միակ նպա-
 տակն է ընդարձակել եւս քան զեւս մարդուս միտ-
 քը եւ բնութեան անգործ դորութիւնը իր կամայ
 ներքեւ հպատակելով՝ փոխանակել մարմնաւոր
 զօրութեան հետ եւ նիւթական աշխատութեանց
 դարձածել:

Այն ժամանակ ձեր դադանի դորութիւնը սք-
 արդ թմրեալ է՝ պիտի դարդանայ, ինչպէս նոր
 ճշութիւն մը մշտածաւալ ծանօթութեամբ աճելով,
 Աւանոր հետ պիտի ծագին ձեր սրտից մէջ արուեա-
 տից զգացումն եւ քաղցր ուրախութիւններ, ու-
 յախութիւններ ներքին եւ անսպառ ճաշակելով
 ինչ որ ճշմարիտ եւ զեղեցիկ է:

Այս երկու նիւթական եւ մտաւորական կատա-
 բելութեանց պէտք է երրորդ մ'ալ յաւելուլ ա-
 սանց որոյ առաջինները ապարդիւն կը մնան. վասն
 զի ամեն կատարելութեան արմատը բարոյական
 կատարելութիւնն է եւ երեքն ալ իրարու հիւս-
 տած մէկ մէկու նպաստամատոց կըլլան:

Այ եւս ձեր պարտքերը պիտի դրժէք, վասն զի
 հետզհետէ վշտերը նուազելով՝ որք են պտածառ
 զանցառութեան պարտք եւս դիւրագործագրելի
 պիտի ըլլան: Յրեթէ ամեն սնտակ եղերք դորս օրէնք

կը պատժեն՝ քաղցէն կը ծնանին, եւ եղերք կան-
հետանան՝ երբ մարդիկ ոչ քաղցէն նեղեալ՝ աղե-
տարեր թելադրութեանց են թակայ չըլլան:

Հաւասարութեան, աղատութեան եւ եղբայր-
աիրութեան սուրբ եւ անսխալ սկզբունք ընկե-
րական կարգը պիտի հաստատեն: Մասնաւոր շա-
հերը քիչ քիչ ՚ի մի ընդհանուր շահ ձուլելով եւ ա-
մէնքը ցուրտ եւ ամուլ անձնասիրութեան ազդե-
ցութենէն ճողոտրելով, պիտի դղան եւ ըմբռնեն
սիրոյ կեանքը եւ անձնասիրութեան շնչած ող-
ւոյ խաղաղութիւնը: Նման աղաւնոյն որ բունին
միայ կը հանդէի, մարդուս ընտ թեան խորը ծած-
կուած աստուածային սերմն անոյշ ջերմութեամբ
փթթելով՝ իբրեւ նոր աշխարհ մը պիտի ծնանի:

Այս աշխարհիս մէջ որ երկնից թաղաւորին
պայծառութեամբ լուսաւորեալ է, մարդիկ յայտ-
նապէս պիտի տեսնան արարածոց եւ Արարչին մէջ
դանուած միութեան սուրբ կապը. եւ կրօնք մեր-
կանալով իր հնացեալ հանդերձը, տկար եւ մաշած
տարեւոր մարմինը՝ յորում վակեալ է իբրեւ ՚ի դե-
րեղման, վերստին պիտի ծագի յաւիտենական ա-
նարատութեամբ եւ սրբութեամբ: Քրիստոսի Աւե-
տարանը որ ժամանակէ մը ՚ի վեր կնքեալ էր, վե-
րըստին պիտի բացուի ազգաց առջեւ՝ ուր ամենքը
պիտի դիմեն օրէնքը կարգալով կենաց ջուրն ըմպել:

Հիմա ողիք յերկիր խոնարհած, խաւարի եւ ո-
չընչութեան խորը թաղուած անձնակարօտ են լու-
սոյ, անսխալ եւ անսահման բարւոյ. ծարաւի են
Աստուծոյ: Բայց երբ իրենց ճանապարհը դանեն,
բունն դօրութեամբ պիտի սլանան յերկինս, ինչ-

պէս տօթակէզ խորշակահար անապատի մէջ, ճա-
նապարհորդք շապելով դիմեն յաղբերակն՝ որոյ
վճիտ ջրովն կը դովանան :

Ընկերու թեան ճշմարիտ հոգատակն ըմբռնելով,
զանազան շահերու հանապազօրեայ կօխները պի-
տի դադրին եւ անաչառ արդարութիւնն ամենուն
իրաւունքն հաւասարապէս պիտի պաշտպանէ : Ո՞ր
իրաւամբ կրնայ դօրաւորը տկարին իրաւունքը յա-
փըշտակել կամ արդելուլ որ տկարը իր իրաւունքը
բանեցընէ : Ինչ որ Աստուած մէկուն տուած է
միւսին ալ տուած է : Միթէ երկնաւոր Հայրը իր
որդւոյ մէկ քանին մերժելով դատապարտած է :
Իսկ որ պահանջէք աստուածային պարգեւները
ձեզի յատկացընելով միայն վայելել, ցըցուցէք կը-
տակը՝ որով Աստուած ձեր կողբարքը ժառանգու-
թեւէ դրիած է :

Ազորմածութիւնը արթուն պիտի հսկէ որպէս
զի աղէաները ամօքելով՝ օրէնքները մեղմացնէ .
փոյթով եւ ձեռնառու թեամբ օրէնքները պիտի
ջանան փոխարինել այն ամեն վնասուց՝ որ բնական
անհաւասարութեան, ծննդեան եւ այլ յաջող պա-
րագայից անհրաժեշտ հետեւանքն են :

Արդի մարդոյ կըսէր «Ազուխուց որջք դոն, եւ
թռչնոց երկնից բոյն, այլ որդւոյ մարդոյ ոչ գոյ
ուր դիցէ զգլուխ իւր » :

Ոչ եւս պատուհաս պիտի կրեն այն թշուառնե-
րը որ իբրեւ Արդին մարդոյ ծանր ճակատագրոյ
ներքեւ ընկճեալ են, եւ ոչ եւս յանցաւոր պիտի
համարուին, վասն զի անոնք են միայն յանցաւոր
որ զիրենք ել ետի վրայ կը թողուն :

Ճշմարիտ ոճիրները խեղդելու համար հաստատուած օրէնսդրութիւնն անդամ պիտի վախուի . եւ փոխանակ վրէժխնդրութեան ուլոյ՝ զթաթիւնը եւ անոյշ վշտակցութիւնը պիտի տիրեն : Աճրագործը մոլորեալ եղբայր մը ճանչնալով պիտի ցաւի իր վրայ , յորդորէ եւ լուսաւորէ . եւ ինչպէս հիւանդ մը պիտի ջանայ բժշկել զինքը եթէ բժշկելի է , եւ եթէ անբժշկելի՛ն՝ արդելու զինքը որպէս զի կարող չըլլայ մնասել : Պատժոյ նպատակը պիտի ըլլայ յանցաւորին ուղղուիլը : Այլա թէ ոչ ինչպէս կրնայ իր տանջանքը ընկերութեան հատուցում ըլլալ :

Կեանքը Աստուծոյ պարզեւն է եւ անոր համար գրեալ է « բնաւ մի սպանաներ » ուստի երբ օրէնք մարդոյ կեանքը բառնան , ոչ պատուհաս մը կը սահմանեն այլ սպանութիւն կը դործեն :

Կրնանք արդարութիւն կոչել այն վճիռը՝ որ ըստ ինքեան ապօրինի է , որ մարդոյ մը ամէն իրաւունքները կողոպտէ եւ ոչ միայն իրաւունքները այլ եւ իրաւունք ըստանձնելու կարողութիւնը : Երբ այն կենդանի էակը ափ մը մոխիր դարձրնէք , միթէ այդ մոխիրը երկրիս վրայ հողմավար ցրուելով կրնայ երջանկութեան հունա եւ առաքինութեան սերմն ըլլալ :

Մ'նչ պէտք է աւելի եթէ աէրը արդարութեան առաջնորդէ , վասն զի սիրոյ յատկութիւնն է նուիրել եւ կամաւորապէս զոհել զանձն սիրած անձին : Բնաւ եղբայր մը ջրսեր եղբօրը . Տուր ինձի կեանքդ . այլ իր կեանքը անոր կուտայ . մահուան պատիժը ասան եւ ութը դար առաջ Բրիտանոյ խաչին վրայ ջնջուեցաւ :

Պարտաւորութիւնն որ կը միացընէ անհատները
 եւ ընտանիքները, ազգերը եւս պիտի միացընէ հա-
 շաարապէս: Ամպարիչտ վարդապետութիւնք որ
 դազգերը կանջատեն եւ որոյ յարաբերութիւնները
 յաճախ բարոյականի ճակատակ եւ օտար սկզբանց
 վրայ հիմնելով իրարու դէմ բնականապէս թշնամի-
 կը ձեւացընեն, այն բարբարոս վարդապետութիւն-
 ները սարսափ շնչելով պիտի մերժուին:

Արդէն իսկ ազգերն սկսան ըմբռնել թէ ոչ մի-
 այն իրարու հակառակորդ չեն, ինչպէս խարերայք
 կը ջանան հաւատացընել, որպէս զի զիրենք բաժնեն
 եւ բաժնելով զիրենք նուաճեն, այլ թէ իրենց շա-
 հերը մի եւ նոյն են արդէն իսկ դազանի կռանդուե-
 լողձով իրարու մերձենալով զիրար եղբարք կը ճանչ-
 նան: Քիչ ժամանակէն իրարու նեցուկ եւ փոխօխակի
 ձեռնտու պիտի ըլլան: Զիրենք դատող արգելքը
 խորտակելով պիտի կործանի, եւ հեռաւորութիւն-
 ներն անդամ անհեռ պիտի ըլլան: Հեռաւոր դա-
 րուց մէջ կրնանք նշմարել այն երջանիկ օրը՝ յորում
 երկիրս մէկ քաղաք մը ձեւանալով մէկ օրէնքով
 պիտի կառավարուի, օրէնք արդարութեան, դժու-
 թեան, հաւասարութեան եւ կըրայրասիրութեան,
 ապագայ կրօնք ընդհանուր մարդկային ցեղին որ
 պիտի ողջունէ ի Քրիստոս իր դերադոյն եւ վերջին
 օրէնագիրն:

Բիւրաւոր չարիքներն որ կառավարութեանց
 թերութիւններէ յառաջ կուգան, պիտի նուազին
 երբ ընդհանուրին ողջամտութիւնը նախապաշար-
 մանց եւ շահուց պատուարը տապալելով տիրապե-
 տութեան սկզբունքը ջնջելով ազատ ընկերութիւնք

կանդէն, որ ժողովրդեան իշխանութեան անմիջա-
 կան հետեւանքն է, իշխանութիւն միայն ճշմարիտ,
 որոյ հաստատ եւ անդրդուելի հիմունքն միայն ի-
 բաւանց վրայ կայացած են:

Այս փոփոխութեամբ որ կանուխ կամ ուշ պիտի
 ստուգուի, պատերազմի համօրէն պատճառները
 պիտի ջնջուին: Յիրաւի ինչպէս կրնայ խաղաղու-
 թիւնը վրդովիլ եթէ աշխարհակալութեան պա-
 տերազմներ, յաջորդութեան պատերազմներ եւ
 վաճառականութեան պատերազմներ չըլլան:

Չօրութեան եւ հորատութեան ծարաւի իշխանի
 ճշմարտախիբութիւնն աշխարհակալութեան պատե-
 րազմներ կը յարուցանէ, որ թէ յաղթողաց եւ թէ
 յաղթելոց մահաբեր են: Սրբ որ եւ է իշխան մը ե-
 թէ փոխանակ հրամայելու, հնապանդի ժողովրդեան
 որոյ ըստ օրինի պարզ պատուիրակն է, աշխար-
 հակալութեան պատերազմներն եւ անախ ծագած
 արկածք եւ արէւք անմիջապէս կը դադրին եւ ոչ
 եւս մարդկութիւնը կը չարչարեն, վասն զի ժողո-
 վուրդ մը որ ուրիշ ժողովրդեան ազատութեան,
 իրաւանց եւ էտութեան վնաս հասցնէ, իր յատուկ
 ազատութիւնը եւ իրաւունքը կուրանայ, եւ ինքը
 դինքն ՚ի մահ կը դատապարտէ:

Յաջորդութեան պատերազմներն ինչպէս տեղի
 կուեննան եւ ինչ են եթէ ոչ անհեթեթ իրաւանց
 հետեւանք, որով երկիր մը, ազգ մը մասնաւոր մէկ
 ընտանոյ ժողովուրդաւոր ստացուածը կը համարուի:
 Այս իրաւանց հետ ուրեմն այս տեսակ պատերազմ-
 ներն ալ կանհետանան:

Այն արդեւքներն որ կը խափանեն ազգաց հաւ-

դորդակցութիւնները եւ արուեստագործութեան
 ծաւալումն ընական օրինաց համեմատ որ ոչ լուկ
 մէկ ազգի, այլ ամէն ազգաց բերոց եւ պիտոյից հա-
 շատարակչութիւնը հաստատ կը պահեն, այն կա-
 մածին արդելքներն որ 'ի մնաս ժողովրդեան ակ-
 բութեան միայն շահաւոր են, յաճախ արդի ժա-
 մանակիս վաճառականութեան պատերազմներու
 պատճառ կուտան եւ այս պատճառը անյայտ կը լ-
 լայ, երբ վաճառականութեան կատարեալ ազատու-
 թիւնը միւս ազատութեանց պնակն ըլլայ:

Պատերազմի ժանտախտէն ազտակշով որոյ նախ
 անցաւ որ մրցումներ պիտի յաջորդեն, ազգերը ի-
 բեւոց շահը ըմբռնելով պիտի համոզուին թէ իրենց
 ջանքերը միայն ընելով եւ աշխատանքը կանոնադրե-
 լով կարող պիտի ըլլան քաղել ընդհանրական ժա-
 ռանդութենէն ինչ որ կարեւոր է մարդուս կարիքը
 լեցընել եւ ուրախութիւնները կրկնապատկել. եւ
 այս համալսիւման աշխատանաց միութեամբ եւ գի-
 տութեան դարդանալովն օգտակար բերոց թիւը
 յանձուռն պիտի բազմապատկի, դորս բարոյական
 դարդացումն ալ արդարապէս պիտի բաժնէ:


Եւ այսպէս քիչ քիչ ամենուր բարօրութիւնը
 պիտի աճի, եւ այսպէս կամաց կամաց յառաջադի-
 մութեան ասպարէզը եւս քան զեւս ընդարձակե-
 լով չարիք պիտի հուազին բայց ոչ բոլորովին պի-
 տի ջնջուին, ոչ չարչարանք պիտի ըլլան միշտ երկ-
 թիս վրայ, եւ այս պէտք է գիտնաք թէ այսպէս է
 վասն զի ամէն բան երկրիս վրայ չի լմըննար. պէտք
 է գիտնաք թէ ինչպէս սոսկ անհատին որ կոչուած
 է ծանրատաղաուկ բայց մեծ եւ սուրբ պաշտօն մը

ճատարեւ, նոյնպէս մարդկային զեղին ներկայ կեանքը՝ ապագայ կատարեալ կենաց պատրաստութիւնն է :

Մի ուրեմն սիվ ժողովուրդ մի անմահ յոյակերդ թալեր զեկտին մէջ որ ուսից կոխան կըլայ : Այս կենաց վաղանցիկ ճանապարհորդութեանդ մէջ զընորք եւ անուրջք պաշարեն դքեդ : Ճշմարտութիւն ներք քեդ անակս են դոր մարմնաւոր աչք ոչ զօրեն նշմարել : Բայց Աստուած սրտիդ խորը դրած է անշագթ ըղձոցդ հետ ճշմարտութեան հասնելու անվրէպ նախազգացումն :

Ահր սո ճակատդ . հոս ունիա կրել աշխատանք եւ վաստակ . աշուր է հանդիսա , ճշմարիտ ուրախութիւն եւ պարտուց ճշդիա կատարման վարձատրութիւն :

Յերեկուան յողնութենէն վերջը մշակը երեկոյեան մօտ սիրտը հանդարտ հիւզը կը դառնայ , մասձելով արտին մէջ պահուած հնձոց՝ դոր ամպերը ամօքախառն զօղով կտռող են եւ արեւը ջերմութեամբը կեփէ , վասն զի դիտէ թէ զիշերը ոչ յաւխուանա կը աւել :



ՉԱՅՆ

Ի ԲԱՆՏԷ



Ա.

Գնան եւ՝ պատմէ իրենց ինչ որ աչքերդ տեսան :

Տէր, մի՛թէ պիտի լսեն ինձ :

Ի՞նչ փոյթ որ լսեն : Բարիները պիտի լսեն քեզ, եւ միւսներուն սրտին մէջ խօսքդ անտեսարար դրոշմուելով, կենդանի պիտի յայանու ի՛ երբ քարկուծեանս բոցը թափանցէ դիրենք :

Գիտես, Տէր, թէ ապաքէն ծերացեալ եմ եւ ձայն չունիմ : Թող ծառայիդ հանդէվ յաշխարհէս մեկնելէն յառաջ : Գեռ մէկ քանի վայրկեան եւ ահա կեանքս կը վերջանայ :

Աչ այդպէս, ոչ, մի՛ յապաղեր եւ ՚ի օրը խոնարհելու մերձ է, փութան, աճապարէ : Մի ի դուր հանդիստ փնտռեր ուր ոչ է. հանդստեան ժամանակն ալ կուգայ : Յիշէ՛ դանձնք որ դերեզմանին մէջ ննջելով՝ սուրն իրենց գլխոյն ներքեւ դրին, սուրը քաջաց յարձն է :

Կերթամ, Տէր, ուր հրամայես ինձ երթալ. ինչ որ պատուիրես՝ պիտի կատարեմ. մինչեւ վերջին շունջս արդարութեանդ համար պիտի պատերազմիմ :

Յնա ուրեմն եւ մի վախնար: Ես զօրութեամբս
քեզի հետ եմ եւ շրթան: ցդ վրայ պիտի դնեմ ինչ
որ պէտք է ծանուցանեալ:

Մեզայ մատախուղը երկիրս ծածկած է. մերկի-
կը պիտի դրկեմ զայն ցրուելու համար:

Ուրախ են ամբարիշտք իրենց գործոց մէջ,
կարծեն թէ իրենց իշխանութիւնն անխախտելի է:
Պիտի հրամայեմ որդան կրծել այդ իշխանութեան
արմատը եւ վողը ծառը պիտի ցահարի մինչեւ 'ի
գաղաթն:

Հասեալ է օրն իմ եւ մերձ է ահա:

Խօսէ բռնաւորաց. թափէ սպառնալիքս իրենց
ականջաց մէջ. ցարս սարախով պատէ իրենց ու-
ղին. եւ այս բոլոր իրենց առաջին տանջանքը:

Յաւացին թէ սչ էի եւ թող գիանան թէ եմ:
Խօսէ հարստահարողաց. իրենց զոճ գայտնե-
րուն ողբը. կածը եւ հեծեծանքը պաշարեն զիրենք,
խաւկեն զիրենք երբ քուն են, խռովեն զիրենք
երբ արթուն են: Թալկաղէմ ուրուականք, գու-
նաթափ սառելք՝ թախասին իրենց չորս կազմը.
աճասոր ցնարք հեանելով ամէն ակզ, ցերեկ եւ
գիշեր իրենց գարշապարէն չի դատուին, եւ երբ
երեկոյեան մութը կօխելով՝ իրենց ամպարիշտ խը-
րախճանաց երթան, ճիւղաք իրենց մարմնոյն վա-
րին, եւ երակացը մէջ աճ եւ սարսուս խաղան:

Խօսէ հարստահարելոց. ըսէ թէ աչքերս կը
հսկեն իրենց վրայ, իրենց չարչարանաց աղաղա-
կը բարձրացաւ մինչեւ առ իս, ըսէ թէ 'ի ցնծու-
թիւն պիտի փոխեմ իրենց սուղը:

Թէպէտ չար մարդոց ձեռքը մաանուած են, մատ-

հուած են մարդոց անձնասիրութեան եւ ատելութեան, ըսէ իրենց թէ արդարութեամբ եւ սիրով պիտի յաղթանակեն:

Նթէ չարիք կործանեն զաիւզերը, արդարոյն արատաւաց մէկ կաթիլը բաւական է վերստին կանդնել զայն:

Խօսէ անոնց որք արատաւ են, անոնց՝ որ բարւոյն անձկան, որ ջերմ աղօթիւք այս սուրբ իղձը կուզեն ինձ. «Նկեցէ արքայութիւն քս»:

Սրբայութիւնս պիտի դայ, խոստացայ եւ երդուայ յանձն իմ: Յրդիք ապագայի, պսակներ բուշորեցէք եւ օրհնութեան երգեր պատրաստեցէք իր գալուստը աւետելու համար: Նւ ահա մանկուք կը ժպտին յօրորոցի, վասն զի կը տեսնան զարքայութիւնն իմ մարդարեւեան երազոց մէջ: Նոկ Պատանան խաւարին խօրը անբարբառ սարսափով կը դողայ, դիտելով յարեւելս՝ յօրմէ կեանք ծաւալին, սպառնալի նշան մը, նշան լուսապայծառ եւ ահա որ իբրեւ զստուեր ձեռացն իմ:



Բ.

Սրերը շողշողուն ծաղկելով՝ ոսկի նշոյններովե աղօղէր բլուրները եւ ձորերը, թափանձէր անտաւաց մթին ստուերը, հրէար ցօղոց կաթիլներուն մէջ՝ որ լուսաւոր փոշւոյ նման շարուած էին խոտոց թելերուն վրայ, դաշտաց եւ մարդաց մէջ ափուած շարժուն եւ անշօշափելի հիւսուածոց

Վրայ, զով եւ անոց հասեր իբրեւ շունջն հրեշ-
տակաց բուրէին հանդարտ օգոյն մէջ. խորհրդա-
ւոր ձայներ հետուէն հնչելով՝ անձանօթ բարբառ-
ներ մրմնջէին իբրեւ գիշերային երազոց վերջն.
արձադանք :

Մեծ ես, Տէր, ստեղծուածոցդ մէջ :

Եւ ահա տեսայ որ բլրոց վրայ եւ հովտաց մէջ
աստ եւ անդ զբուռեալ տնակներէն դուրս կեղւային
ալեւոր մարդիկ եւ այլք երխտասարդք, տժգոյն եւ
հիհար, հողադործութեան դործիներու ներքեւ ընկ-
ճեալ : Գանդաղ ոտիւք քաշելով կարծես ներքին
քեւ մը կրէին : Երբեմն կանդ առնելով՝ ակնարկ
մը տային աստուածագարդ հրաշալեաց :

Եւ արտում էին :

Առատ հիւթով ուռուցեալ ծառերը կրսէին ի-
րենց : Տեսէք այս ծաղկունքը, քիչ ժամանակէն
պտուղ ըլլալով պիտի հասունանան ձեզի համար :

Եւ արտում էին :

Այդին կրսէր : Երակներուս մէջ կազդու քիչ նեկ-
տար մը կեփեմ գաղանապէս, որ դձեղ պիտի կեն-
դանայրնէ եւ ձմեռը ձեր սառուցեալ անդամները
պիտի տաքողրնէ :

Եւ արտում էին :

Մարգերը կրսէին : Չեր ոչխարաց, կովուց եւ
եղանց սեղան կը պատրաստենք, բերէք հոս որպէս
դի հարիւր դանազան կերպով փոխարինեն ձեզի ի-
րենց հարակածը :

Եւ արտում էին :

Սրտերն ալ կրսէին : Պատրաստեցէք ձեր շակ-
մարանները դուրս լեցընելու համար գիշեր ցերեկ

կաշխատինք : Մի անձկանօք հոգայք ոչ դձեղ , ոչ
ձեր կանայք եւ ոչ ձեր մանկուքը : Սատուած մեզի
յանձնեց մատակարարել առատաբար իրենց պի-
տոյքը :

Եւ արտում էին :

Հաւօրէն բնութիւնը կաղաղակէր իրենց : Եւ
ձեր մայրն եմ . եկէք , եկէք մշտաբուխ ստինքներու
դձեղ ամէնքդ ալ կշտայրնէ :

Եւ արտում էին , իրենց կուրծքը կելար եւ կիջ-
նար , եւ աչքերնէն արատաւք ոլոռն ոլոռն վա-
զէին :

Ի՞նչ կը նշանակէ այս , Տէր . եւ ի՞նչ կայ մար-
դուս սրտին խորը : Տրտում են , վասն զի պատուները
ոչ իրենց համար պիտի հասուննան . վասն զի որ-
դոյն հիւթը ոչ ձմեռը դիրենք պիտի տաքցընէ .
վասն զի ոչ իրենց ոչխարաց բուրդէն , ոչ իրենց
կովերուն կաթէն եւ ոչ իրենց եղանց մսէն բաժին
պիտի ունենան . վասն զի իրենց քրտամբ եւ վաս-
տակօք սերմանած ատեն հունձքը ուրիշները պիտի
քաղեն . վասն զի արդէն կը լսեն իրենց զաւակաց
ձայնը , որ արտատուելով կը դռչեն . Մնօթի ենք , եւ
կը տեսնան իրենց կանայքը յուսահատ եւ սրտա-
բեկ . վասն զի բռնաբարու եւ անգութ ցեղ մը թոյլ
չի տար իրենց , որ բնութեան մշտաբուխ ստեանց
շրթունքնին մերձեցընեն :

Եւ ուր է Տէր , արդարութիւնդ :

Մի տարակուսիր , պիտի ծագէ արդարութեան
խոօրը : Եւ այն երկնից մէջ սուրբ օր մը պիտի ըլլայ
եւ երկրիս վրայ մեծ ցնձութեան օր մը :



Սատուած իմ, գթան խեղճ տնամակիս :

Հայրս մեռած էր երբ յաշխարհ եկայ : Օր մը այն դուռնաթափ ճիւղաղը դոր թշուառութիւն կոչեն իր բնակարանը մտաւ : Հայրս իրեն հետ բաղուկ առ բաղուկ կուռեցաւ . եւ շատ երկար կուռելէն յետոյ վերջապէս ոյժը սպառեցաւ : Ս. յն ժամանակ ազատարար հրեշտակն իջաւ եւ անկողնոյն վրայ խոնարհելով ըսաւ իրեն : Նրկրիս վրայ ծանր պարտքը վճարեցիր, եկ հիմայ վայելել երանելեաց կեանքը :

Մայրս ձեռօքը պատեց եւ թաղեց զինքը, վերջը մինակ մնաց . ինչ կըսեմ մինակ, ոչ . ճիւղաղ միասուղ էր :

Ժամանակը եկաւ եւ մեծամեծ դաւօք ծնաւ զիս արտասուելով : Վարտասուէր մայրիկս վասն զի չուէր խանձարուրք պատատելու իր անդրանիկ որդին :

Յետոյ օղ աւելի արտասուեց տեսնելով որ սընդնդեան պակասութեամբ կաթը ցամաքեր եւ իր կրծոյն ջերմութիւնը եւ իր տկար շունջը, հազիւ հիշար անգամներս տաքցընէին :

Սիրոյ դօրութեամբ իր կեանքը ինձի տալով իմ կեանքս պահպանեց : Աշխատելով ցերեկ եւ գիշեր, ձմեռը առանց կրակի, ամառը հրատապ յարկին ներքեւ, կը ձգնէր երկար ժամերով կրած նեղութեան զիս մտնակից ջընել եւ կը խնդար միայն երբ ես ժպտէի : Սակայն կը մեծնայի ես : Նւ ինքը ջանքերը կրկնապատկէր ու պէս զի կրթութիւն տա-

չով ինձ՝ ապագայ կենաց ճանապարհն իմ դիւրացնելը
 Ա՛հ, ինչպէս բերկրութեամբ սիրտը կը բարախէր
 երբ ուրախ գուարթ դպրոցէն կը դառնայի բաճկո-
 նակ մը հագած եւ կաշեաց դօտի մը մէջքս պատած,
 փոքրիկ գլխարկ մը դեղին մազերուս վրայ եւ գրոց
 մախաղս ուսէս կախած հուրք թելով ՚ր :

Վերջը արուեստաւորի մը քով աշակերտ եղայ :
 Ուրախ էի մտածելով թէ քիչ ժամանակէն կարող
 պիտի ըլլայի իր մշտաբուխ սիրով տուածներուն
 փոխարէն մը ընել : Եւ յաճախ կերպով աշխատա-
 հացս առաջին պատուը իրեն ընծայել : Ըսելով ասկէ
 վերջը մայրիկ ես աշխատիմ եւ դու հանդիստ ըրէ :
 Բայց ախանս, քիչ տարուան մէջ ամբողջ կեանքն
 ապառած էր :

Սատուած որ յերկնից իր հետցո՛ւ կ եւ միտիթարիչն
 էր՝ զինքն իրեն կը կանչէր : Տկարութիւնը հետըզ-
 հետէ տիրեց եւ վերջապէս բազկացս մէջ ողին ա-
 ւանդեց : Մահուան ժպիտը տալով հուազ աչօք
 օրհնեց զիս վերջին անգամ :

Երբ մարմնսը գերեզմանին բոսը իջեցուցին եւ
 հողը վրան գոցելով տխուր եւ խորին ճայն մը հնչեց,
 դու միայն Սատուած իմ, դու միայն գիտես թէ ինչ
 կրեց իմ խեղճ սիրտս :

Ս, յուհեանեւ աշխարհիս մէջ միայնակ էի եւ
 իբր թէ բնաւ չէի, յիշատակօք զնորիւք եւ սեւ
 յոյսով սնանէի : Բայց օր մը խաւարատուս ողւոյս
 անոյշ լոյս մը ծագեցաւ : Նախախնամութիւնն ինձի
 պէս որք աղջիկ մը առաջնորդեց տխուր ճանապար-
 հիս վրայ : Մարտը էր իր սիրտը դարնան յօղոյն
 պէս : Զիրար գիտելով նախ աչքերնիս յերկիր խա-

Կարճեցան ապա անբարբառ իրարու հետ խօսեցանք :
Հողիք մեր յիրար խառնուելով այն վայրկենէն
յաւիտեանս միացան :

Ոչ երկնային սուրբ ուրախութիւնները մեր խօ-
սակցութեան հեշտ ժամերէն աւելի անոյշ կրնան
ըլլալ : Իրեն կըսէի ես : Ոչ ոք հոգ տանի քեզ եւ ոչ
ոք հոգ տանի ինձ . աշխարհ մեզի համար անապաս-
մ'է : Խեղճ տատրակ անտառաց , երթամ քեզի սը-
նունդ ճարեմ եւ դրօշն եւ մրրկէն պաշտպանելու
համար բոյն մը շինեմ քեզ ուր կարող ըլլաս զլու խո-
ղնել :

Ինքն ալ պատասխանէր : Եւ ես յերեկը ընտա-
նեկան հողերով դրաղեալ , երեկոյեան դարձիդ դքեզ
դգուելով յողնու թիւնդ պիտի վարատեմ : Բայց մի
սիրելիդ իմ , շուտով դարձիր :

Անշէջ կրակով մաշէի ես . ինքն ինձմէ զդասա-
խմ եռանդս սանձէր , ըսելով : Պէտք է նախ քիչ մը
խնայութիւն ընենք մտածելով մեզմէ վերջը եկող-
ներուն :


Եւ ահա երբ այս երկար ակնկալու թեան վախ-
ճանը մօտեցաւ , աշխատանք նուազեցան : Թոշակ-
ները պակսեցուցին եւ կտրեցին , առ այսչափս
ըսելով ապա թէ ոչ մեռիր անօթի : Բազուկներէ
դաս ուրիշ բան չունինք , բայց դոնէ մեր բաղկաց-
տէրն ենք , պատասխանէին անանկ աշխատուօրք ,
եւ մինչդեռ ապրուստ ճարելու համար խորհուրդ-
ներ կազմէին , բանտարկեցին դիրենք :

Ո՛վ արդարու թիւն մարդոց , ս՛հ , ինչպէս ահաբեկ
պիտի սարսափիս երբ ծաղէ Աստուծոյ արդարու-
թիւնք :

Մնացած կեանքս սեւ երանգ մ'է: Շատ օրեր
 քանափ մէջ արդիւեայ մնացի եւ երկու կամ թեր-
 եւս երեք անգամ միայն սիրուհիս տեսայ պատու-
 հանիս վանդակէն: Աերջին անգամուն աչքերը
 փորուած էին եւ անսովոր կրակով փայլէին, ծուն-
 գերը կտրտէին եւ հազիւ կարող էր քայլ մը առ-
 նուլ: Սակէ ետքը մէյմալ դինքը հտեսայ:

Ո՛վ մայր իմ, ո՛վ սիրուհիս, միթէ դո՛ւք էք որ
 կերեւիք ինձ յերկինս պայծառ լուսոյ մէջ: Ո՛վ
 կանչէ դիս: Միթէ դո՛ւք էք, մի թողուք դիս, ո՛ն
 մի թողուք: Կրղզամ թէ շղթայքս խորտակին, վայ-
 րիկ մի եւս եւ. ահա փութամ միանալ ձեզի հետ:

Սատուած իմ, դժիւ խեղճ անանկիս:



Դ.

Մթին եւ ընդարձակ սրահի մը մէջ, սեւաքիծ
 զանաչ օթոցով ծածկեալ սեղանի մը առաջ, մար-
 դիկներ հասած էին բաւական հեռաւորութեամբ
 ուրիշէ մը՝ որ անշուշտ իրենց առաջնորդն էր:

Այս վերջնոյն դեղնեալ եւ հողադուճակ այտերը
 կապոյտ լուսով ցոլային, խարտեաչ աչքերն, հա-
 յեցուածն շեղ՝ սարսափ սփռէին: Աերկ ճակատը
 դէպի հերս քաշուած էր, եւ նմանէր անգեղ մը
 դլխոյն:

Եւ. Անգղը կրսէր, ինչպէս ընենք: Դիւրին չէ
 նուաճել դիրենք, վասն զի ըստ ինքեան յանցաւոր
 չեն, բայց մեր տէրը անխտահ է, եւ սցսպէս ըսաւ

մեզի : Եւ նչ պէտք է զեռ աւելի : Մնացածը ձեր
դիմնալու բանն է :

Միւսներէն մէկը պատասխանեց : Այս է միայն ,
էհ ուրեմն կը ստենք :

Ես ալ այդպէս կը մտածեմ , ըսաւ Անդղը : Ասկէ
դատ Հնդկահասա ալ կայ , որ կարկաչելով կը ցաս-
նու :

Սակայն եթէ չի հաւատան մեզի : Մեր վրայ բը-
նու վատահաթիւն չունին , եւ իրենց խիղճը օրէ
օր կը խտտնայ մեր ձայնին դէմ :


Երեք հոգի միայն հաւտան , ըսաւ առաջինը ,
բաւական է մեզ :

Այն : ըսաւ Անդղը , ըսոյ մի թէ պիտի ուզեն հա-
ւատալ : Հեռու չերթանք եւ նախ ստուգենք դի-
րենք հոս բերել ապով : Մնանք ալ անմիջապէս ե-
կան : Այն որ յառաջադէմն էր՝ կարծես դիմակ կրէր
եւ երբ կը խօսէր բիրտ եւ անողոր բարբառը մե-
տադեայ անօթի մը սուր եւ խեղդուկ ձայնին կը
համանէր :

Անդղը ըսաւ իրեն : Խօսքս դադարուկ է : Ամէն
մէկերնիդ դիտէք ինչ բանի կը բաղձաք , եւ դի-
տէք թէ որչափ կարող եմ ես : Պիտի հաւատանք :

Ամէնքս ալ պիտի հաւատանք , ըսաւ մետադեայ
ձայնը , ասկէ դատ , առանց աչառութեան ուրիշ
տանտերկու անձանց ալ պիտի հաւատայրնեմ :

Հաւ , ըսաւ Անդղը : Մի ճակատնիդ , այլ երես-
նիդ կարծրի . վատահեղէք :



Ե .

Աշխան երեկոյ մը արեւմտքէն փշէր մեզմ հովիկը
 շունջ թեթեւ մրտիմալ ծովուն եւ արեւը հորիզո-
 նին վրայ գոլորշային թափանցիկ ալեաց մէջ լո-
 դար : Կապուտակ ամպերը, օդապար ծաղկունք,
 պսակներ տիտելով հազար ձեւով հազար գունով
 սակերու խ դեպի մը մէջ խառնու էին : Ծովային թըռ-
 շունը ալեաց վրայ սահելով կանցնէր, իսկ եղերքին
 վրայ ծիծառնիկին տխրաշունչ երգը միայն կը բուէր
 եւ ալեաց մանչիւնը որ ժայռից դէմ փշրէին : Եւ
 քիչ մը հետո, բանտին սեւադոյն դանդուածը
 հսկայածեւ շուք մը սկսէր :

Եւ կամաց կամաց օդը յորձանաւոր ջրոյ նման
 խռովիլ սկսաւ, եւ դիշերային նսեմ քօղը լիռան
 դադաթան վրայ տարածուիլ :

Ալեաց խորէն անորոշ, անհուն ձայն մը բարձ-
 բանար նման անդնդային եւ խորին քարանձաւաց
 Ողւոյն հառաչանաց . ուրիշ ձայն մը եւս այս ձայ-
 նին խառնուելով եւ դիշերուն լաւթիւնը խռովե-
 լով ամայի ափանց վրայ կը մարէր :

Եւ այս ձայնը կըսէր :

Թէպէտ մարմինս չդթայիւք կապեցին, բայց հո-
 դիս ազատ է եւ խնդայ իրենց վրայ :

Որովհետեւ սիրեցի գթեզ, ով Հայրենիքդ իմ
 որովհետեւ ուղեցի որ մեծ եւ երջանիկ ըլլաւ
 մասնիչներդ դիս այս բանար նետեցին : Թէպէտ
 մարմինս չդթայիւք կապեցին, բայց հողիս ազատ
 է եւ խնդայ իրենց վրայ :

Ազատ է եւ խնդայ իրենց վրայ որ ցած դերիք
են անարդանայ, դձաւէր սարուկք երկիւղի, սը-
տութեան մէջ թաղուած եւ մեղաց մէջ ծեփած :

Ենչ է այս մարմինս որ իրենց դորութեան ներ-
քեւ ընկճեալ է, ոչ ինչ : Այսօր կտոր մը միս է, վաղը
ափ մը մոխիր :

Միթէ այս բանալին վանդակները կարող են
դասել միտքս եւ սէրս . կարող են միթէ արդելու
դիս առ ձեզ դալ, ով եղբարք իմ . ոչ միթէ ձեր
կեանքը իմ կեանքս է :

Եթէ չարչարիք դուք, ձեզի հետ չարչարիմ եւ
ես, եթէ կռուիք դուք, ձեզի հետ կռուիմ եւ ես .
անտեսանելի շունջ մը ձեզմէ առ իս կանցնի, եւ
ինձմէ առ ձեզ : Եթէ կարող են թող յափշտակեն
եւ դայս :

Թէպէտ մարմինս շղթայիւք կապեցին բայց հո-
դիս ազատ է եւ խնդայ իրենց վրայ : Քանի մը
վայրկեան լսեց ձայնը եւ ազա կրկին հնչեց :

Գուրսը ամէն բան խաղաղ, ամէն բան հան-
դարտ է : Աւշադրութեամբ ականջ կախելով լու-
թեան մէջ շշուկ մը կը լսեմ . միթէ ձայն մ'է թէ
երազ :

Մինչդեռ երկիրս, ջուր եւ օդ թմբեալ եւ ըն-
կրդմեալ են յանուրջս, մինչդեռ արարածոց կեանքը
կազդուրի քնոյ թեւոց եւ վափուկ դդուանայ մէջ,
իմ յիշատակներս արթննալով 'ի ցոյց բերին ինձ
այն օրերը որ անցան եւ ոչ եւս դառնան :

Ինչպէս արեւը գեղեցիկ եւ բնութիւնը դու-
արթ էր, ինչպէս կենդանի, անոյշ եւ մաքուր ու-
րախութեամբ սիրտս լեցուած էր կրք դեռ մանու-

անուշահոտ վարդենեաց եւ թփոց ցանկին մօտ
նստած ունին դնէի ալեծածան եւ շարժուն տե-
քեւոց շշնջման եւ նուրբ սատոց՝ որ մերթ խոնար-
հէին մերթ բարձրանային, կամ երբ թաւ անտա-
ռաց մէջ թափառելով մորենւոյ փուշերն մատներս
խոցէին, կամ երբ ձեռքս կարկառելով, դողդողա-
լով եւ շունջս բռնելով՝ թափանցիկ եւ ոսկեթեւ
թիթաան ետեւէն վազէի լճակին եղեղնազար ա-
փանց վրայ:

Ոչ անցելոյն վրայ ցաւէի եւ ոչ ապագայն հո-
գայի. եւ եթէ պայծառ հորիզոնն իմ երբեմն թե-
թեւ ամպեր պատէին, քաղցրաբոյր հովերը անմի-
ջապէս ցրուէին:

Յիշեա, քոյր իմ, երբ առաւօտեան ցօղաթուրմ
խոտոց վրայ ընթանայինք, երբ անտառաց մէջ խա-
ղայինք, յիշեա թռչնոց բոյները որոց մերձենալ ար-
դելուիր ինձ եւ արտասուէիր դժալով խեղճ մօ-
րերնուն վրայ:

Օրերը տարիները սահէին, եւ հողիս յուզեալ
անձանօթ արտմութեամբ եւ ուրախութեամբ,
խորհրդաւոր թեւերն տարածէր նոր կենաց մը վրայ
որ մերձ էր բողբոջել:

Եւ երիտասարդութեան դեղեցիկ երազոց, ե-
ռանդուն զգացմանց եւ անոյշ խանդաղատանաց
յաջորդեցին մարդկային անաչառ պարտաւորու-
թիւնք եւ պատերազմ սուրբ եւ մեծ ուր անկումն
յաղթանակ եւ մահ՝ կեանք է:

Եւ անկան եւ յաղթեցին անոնք. դոր դեանա-
տարած տեսի հրացանի հարուածով խոչկալ կամ
վատաց սուսերով պատառեալ:

Եւ անկան եւ յաղթեցին անոնք եւս որ կիսա-
հաղաղ ձայնով հայրենեաց անուշը մրմնջելով, եր-
կար տանջանքներ կրելէ յետոյ բանտին խշտեակին
վրայ զողիս փշեցին :

Փառաւոր դուռներ քաջաց անա շրջապատելով
դիս կրսէք ինձ, լսես, եզբայր, հիճաւուրց մարտի-
րոսք որ յերկնից կանչեն դմեղ եւ լուսաւոր պը-
սակներով իբրեւ աստուածային պատգամաւորք,
երթան յաստեղէ աստղ երգելով օրհնութիւն ա-
պագայի :

Իրենց առաքինութիւնն աշխարհիս վրայ տա-
քածուելով կը թափանցէ ժողովրդեան սիրտը որ
ուժդին բարախէ եւս քան զեւս. անա երկին եւ
երկիր թունդ տան, անա աստեղունք անսահմա-
նութեան մէջ փաղելով կրսեն մէկմէկու : Ահաւոր
արդարութեան օրը ծագելու մօտ է : Ո՞չ միթէ զդա-
ցիք Աստուծոյ շունչը որ անա անցաւ :

Չայնն վերստին լսեց ամայի ընդարձակութեան
մէջ կորսուելով : Եւ յետոյ դարձեալ դօրաւոր
դռչեց :

Մարմինս չղթայիւք կապեցին բայց հողիս ա-
զատ է եւ խնդայ իրենց վրայ :



2.

Ո՞վ կարող է, Տէր, մճիռներդ թափանցել : Ո՞վ
կարող է արդարութեանդ խտը եւ խորհրդոցդ
անդունդը չափել :

Իմաստութեանդ դադանիք ծածկուած են 'ի
խորս անմահ լուսոյն որ միայն դքեղ լուսաւորէ
իսկ գերադոյնն յարարած քո նմանի փոքրիկ թըռչ-
նոյն որ անսահման Ալկիանու ասիանց վրայ կը
թռչրաի :

Եւ սակայն , նոյ Տէր , հայրական գթութեամբ
եւ ներդաճութեամբ թոյլ տուր ծառայիդ պա-
ղատիլ քեզ . նոյ Տէր փարատէ կասկածն որ պա-
շարէ դիս եւ զածն սրտիս խռովութիւնը : Միգա-
պատ օրերը եւ բուռն մրրիկները անցեր էին , եր-
կիրս կանաչագեղ եւ ծառերը ծաղկապսակ դար-
գարէին եւ յոյսը դաշտաց աղօտաց մէջ բողբոջէր :
Եւ ամէն կողմ բերկրալի ձայներ միայն հնչէին ը-
սելով : Սրբեցէք ոյլ տառապեալք ձեր աչքերը ,
հուսկ ուրեմն արտասուաց աղբիւրը պիտի զամա-
քի : Ամէնքս եղբարք եմք . եւ հնձոց ժամանակ ոչ
ոք ետ պիտի դառնայ երեկոյեան ձեռքերը պարսպ
եւ հողին տրտում :

Հայրենիք հզօր եւ ճոխ 'ի վեր պիտի բառնայ
խոնարհեալ ճակատը . օրէնք պիտի տիրեն փառօք
եւ անդրժեյի իշխանութեամբ , եւ ազատութիւնը
պիտի ծաղկի ամպարիչս կառավարութեանց աւե-
րակաց վրայ :

Միթէ ոչ այսպէս կըսէին , Տէր :

Բայց խորհուրդք քո տարբեր էին :


Այս է ահա , Տէր , որ խռովէ դիս եւ խռովէ շա-
տերը : Աղղք դարմանալով յիրար հային եւ հարցը-

հեն թէ ուր է արդարու թիւնդ , եւ ուր է նախախ-
նամու թիւնդ :

Թո՛ղ հարցընեն նախ թէ պատրանս էին , թէ
պատրանս էր աշխարհ ճանչնալ բարիքներն՝ որոց
անձկան եւ զորս պահած եմ իրենց :

Ի՞նչ է իրաւունքը . գիտեն արդեօք : Գիտեն թէ
ինչ են պարտք : Աւնին դարձաւն իրենց սրտին մէջ :
Ազատութիւն խնդրեն , եւ չեն գիտեր թէ ազա-
տութիւնն ինքրդինքր մտնալով՝ փոխադարձ անձ-
նանու իրութիւն մ'է . չեն գիտեր թէ ազատութիւ-
նը ո՛չին է : Չեն գիտեր ոչ՝ եւ անոր համար դեռ
կը հարչարուին :

Որդի ժամանակի , ամէն բան երկար թուի քեզ .
դնու եւ պատմէ ազգաց ինչ որ լսեցիր :



է .

Արեւուն մէկ քանի ճառագայթները՝ նեղ պա-
տուհանին դուրսը շարուած ծաղկանց թաղարներ-
բուն մէջէն սահելով՝ փերմայարկի փոքրիկ սենեակի
մը մէջ թափանցէին եւ պատերը զարդարող դեզ-
նապոյն թղթոց վրայ ցոլալով՝ հոն դանուած նիւ-
թերը թաւիշանման ոսկեկարմիր անոյշ լուսով ո-
ղողէին :

Քնքուշ աղջիկ մը , հագուստները պարզ եւ դալ-

դարուած միայն վէտ վէտ սահուն մաղերով ինչպէս
 ժայռից քովէն կախուած բոյսերը՝ զոր հողմիկը ծա-
 ծանէ, նուրբ կտաւի մը վրայ ծրագրեալ զարդեր
 ասղենագործէր: Նէ՛մքը տեղոյն էր, եւ թէպէտ
 ինքը տխուր չէր, բայց արամութեան թեթեւ
 հետք մը կար սեւ աչացը մէջ, իսկ ճակատը երկ-
 նային ամբո՛ւթեամբ կը փայլէր:

Երբեմն իր ձեռակերտիկը թողլով՝ կուսական
 գլուխն՝ ի վեր բառնար ինչպէս շուշան մը ճկուն
 բնին վրայ, եւ իր հայեցուածքն, արտաքին օտար
 բաները արհամարհելով, ինքն իր ոգւոյն խորը թա-
 փանցէր ուր նշմարէին ամբողջ աշխարհ մը իրեն
 միայն տեսանելի:


Աչքերն ապա հեռաւոր տեսարաններու վրայ
 դարձընելով, հորիզոնին անորիչ լուսոյն եւ ան-
 սահման ընդարձակութեան մէջ թափառէր: Չնաչ-
 խարհիկ բնութիւն մը բացուած տեսնար ճոխ գոյ-
 ներով եւ զմայլելի պատկերներով՝ որոյ ծոցէն ա-
 նայչ եւ մաքուր կենսաբեր շունչ մը բուրէր զոր
 անհամար արարածք ախորժիւք ծըծէին:

Օղը այս արարածոց մրմնջիւք կեդանանալով
 թռթռար, ծովերէն, լճերէն, գետերէն, մայրինե-
 րէն, ժայռերէն եւ անտառներէն բխր եւ հազար
 ձայներ բարձրանալով յիրար խառնուէին եւ կաղ-
 մէին Տիեզերական ձայն մը՝ որ անմահական ներ-
 դաշնակութեամբ անհուն ալիքներն եթերային
 դաշտաց մէջ զեղոյր եւ ծաւալէր:

Եւ մատաղ կուսան երեւակայութեամբն յափըշ-
 տակիալ, ոգւոյն ծածուկ խորերէն խորհրդաւոր
 ձայներ եւ բարբառներ լսէր մարդկային լեզուաց

անձանօթ : Այն ժամանակ ամէն բան թանձր քօ-
 դով ծածկուէր եւ մաօքն յառեալ պաշտէր անե-
 բեւոյթ գեղեցիկ էակ մը զոր սիրովն ամփոփէր , սէր
 հրահասան որ շիջանի եւ բորբօքի , որ հեաղհեաէ
 ծախելով եւ նորոգելով կեանքը , կենաց անեղծ
 էութիւնը կազմէ :

Եւ վաղանցիկ օրերը սահէին որոց արագ ըն-
 թացքը չափէ ժամանակս , եւ հողին ընկղմեալ
 յԱյնմ՝ յորմէ ամէն բան բղխէ եւ ուր ամէն բան
 վերադառնայ , յաղենար սառաապէս անվրդով եւ
 անպատում զմայլման մէջ :



Ը .

Յո մը Ստղայէլ հոյատակներն հաւաքելով այս-
 պէս ըսաւ . թէպէտ հազար հնարքներով կը ճգնիք
 փորձել զմարդիկ եւ վանել 'ի գորն' ուր արագ
 արագ դլորին , բայց եւ այնպէս մեր վաստակը յա-
 ճախ ապօրդիւն կը մնայ եւ ինչ որ մէկ կողմէն
 կը շահինք , միւս կողմէն կը տուժենք . ինչ է ա-
 սոր պատճառը :

Դժոխային պետութեանց իւրաքանչիւրն ինքն
 իր վրայ պարծելով , ամբաստանէր միւսներ , եւ
 երթալով իրենց բարկութիւնը եւ ատելութիւնը
 այն աստիճանի բորբօքեց՝ որ խառնիխուռն դժ-
 չիւններով , սայրատուր ճչերով , բողաչունչ շչում-
 ներով , կատաղի սպանալիք եւ հայհոյանք սկսան
 տեղալ : Ահաւոր պատերազմ մը ծաղկելու մօտ էր

խաւարային անդնդոց մէջ, երբ յանկարծ գահա-
վիժեալ Աղէնից թագաւորը վեր կանգնելով,
ձայն արձակեց ահեղ եւ տխուր՝ նման սանդարա-
մետական որուման:

Հառթիւն գոչեց, եւ լառթիւն եղաւ:

Ինչ որ դուք չգիտէք, ես քաջ գիտեմ, կըրկ-
նեց Սաղայէլ: Մեր ճգունքը մասամբ անպատեղ
մեացին, վասն զի կարգ եւ միաբանութիւն չու-
նէինք: Եւրաքանչիւր ոք ըստ հաճոցից առանց հաշ-
ւոյ եւ նախատեսութեան հոս եւ հոն ՚ի գիպոց
սերմանած ըլլալով, հնձոց ժամանակ փոխանակ
ցորենոց տատակ քողեցինք: Աթէ այս այսպէս
չարունակէ՛ լաւ է ինձ հրաժարիլ միշխանութենէ,
բայց միթէ յուսմք որ հաւանիմ. ոչ, յաւիտեանա-
ոչ:

Պիտի կանգնեմ չարեաց քաղաքը՝ հիմնելով այն
երկրին վրայ՝ ուր հակառակորդ գորտ թիւն մը ինձ
դէմ մաքառի: Այս նպատակիս հասնելու համար
ցիրաւի յանդգնութիւն պէտք է, բայց խոհեմա-
թիւն ալ պէտք է, ուստի չչտապենք: Մեր թոյ-
ները հաստատ կեդրոնէ մը բխելով՝ կամաց կամաց
տարածուին եւ դանազան հազար միջոցներով թա-
փանցեն այն մեծ մարմնոյն երակները՝ զոր ընկե-
րութիւն կոչեն: Մեր ծնած բոցը բորբոքենք իրեն
ընդերաց մէջ՝ որպէս զի սպառէ եւ ծախէ զինքը
անդդաշարար:

Սաղայէլի այս խօսքերը մոլեգին կատաղու-
թեամբ ծափահարեցին:

Եւ երկիրս յանկարծադէպ ցնցմամբ սարսելով,
արեւը սքողէր եւ օդը նսեմանար. կապուտակ, մոխ-

բազոյն եւ կարմրերանոց շողիներ դերեղմաններէն
թանձր թանձր բարձրանային, եւ հետուէն մեռե-
լոց զանգակի դանդախներ հնչէին:

Եւ ահա ընդարձակ քաղաքի մը տեսակ մը ստու-
քերկեաց դարչահոտ կոյանոցի մէջ խառն իճաղանձ
մը տեսայ, որոց ժանտաժուտ դէմքերը թէպէտ
մարդոց գծագրու թիւն՝ բայց ոչ մարդոյ կերպարանքն
ունէին, իրենց տախակ ճակատը եւ կարծիր խորչե-
րով մանիչակագոյն բծերով ծածկուած հողագունակ
այտերը, վատ եղեռանց եւ նախանական մոլու-
թեան սոսկալի դրոշմն կրէին: Արիւնացայտ կամ
բիւրեղանման աչաց եւ խտտորնակի հայեցուածոց
մէջ վայրագ գաղանաց ինչպէս օձի եւ բորենւոց
կրքերը փայլէին, ցած չարու թիւն, խորամանկու-
թիւն եւ նենգամտութիւն:

Ամէն տեսակէ եւ ամէն կերպարանքէ կային օ
ցնցոտիքներով պատեալ աղճատէն սկսեալ մինչեւ
չաացուցիչ զգեստին վրայ կեղծ փառաց եւ վատա-
համբաւ սրտուոց պոռնիական նշաններ կրողը:

Ասոնցմէ մին բարձր գահոյից վրայ բաղմած,
եւ շրջապատեալ դժսխային աշխատութեամբ խտտա-
ցած ստորագոյն առաջնորդներէ, հրամաններ տար
ամբոխին յերկուս բաժանելով զայն: Մէկուն պատ-
ուիրեց յայանապէս գործել եւ միւսին թաքստիւ-
ապրդիլ հասարակաց տեղիս եւ մինչեւ ընտանեկան
յարկաց ներքեւ եւ սրբօղան դաղանեաց մէջ. եւ
հրամայեց իրենց միարան աշխատիլ, իրարու պաշտ-
պան եւ ձեռնառու ըլլալով: Եւ չեմ գիտեր որպիսի
գազիր ժպիտ մը չարութեան փոթտէր շրթունքն
ճիւղաղին՝ զօր մարդածեւ լռիկ ուրուականներ պա-

չարեն: Ըսաւ անոնց որ պատուէր ունէին խաւարի մէջ ծածկուիլ:

Ահաւասիկ ձեր պաշտելի կուռքերը . սառսթիւն, երդմնազանցութիւն, կեղծաւորութիւն, ասպակահութիւն: Տարածեցէք ամէն կողմ՝ կասկածն եւ երկմտութիւն: Արբեմն ալ քնացուցէք պարզամիտ անկեղծութիւնն որպէս զի կարող բլաք զիրութեամբ մոլորեցընել: Խարեցէք եւ մասնեցէք խուզելով սրտից խորերը մոլութեանց ծածկուած սերմն գաէք եւ սովորական գնով իւրաքանչիւ բին անունգը հայթայթեցէք: Ճարտարութեամբ վարուեցէք, հրապուրեցէք, յորդորեցէք, հետեւանքը ծածկելով, մինչեւ որ անդարձ գլորին 'ի խորն: Աւ կարօտութիւնները, ծայրագոյն կարօտութիւններն ալ զօրաւոր միջոցներ են: Ըսէք քաղցիւոյն . վաճառէինձ այս, այն . եւ եթէ վարանի, ցրցուցէք իրեն այն փոսը՝ որ կնոջ եւ որդւոյն առաջ բացուած է, անոնց յուսահատ ճշերով թնդացուցէք իր ականջը: Ձեր որոգայթները լարեցէք անմեղին ստից ներքեւ, թելադրեցէք իրեն մտքէն չանցած բաները, մրդեցէք զինքը վտանգաւոր ճանապարհներու մէջ, եւ եթէ չյաջողիք՝ շեղածը հնարեցէք: Արդ գացէք: Աւ նետեց իրենց բազում ոսկի որոց վրայ անյագարաբար յարձակեցան . իսկ միւսներուն այսպէս ըսաւ:

Ձեր կուռքերն են բռնութիւն եւ սպառնալիք: Ասպառնացէք տկարը, աղքատը, հալածանօք տառապեցուցէք զինքը եւ քրտամբն ողորեալ հացին կտորը բերանէն առէք եթէ կուրօրէն ձեր կամաց չհետեւի: Ամէնքը հնազանդին ձեզ անասնական մունջ հեղութեամբ: Մեզի պէս մտածեն, կամ բը-

հաս չմտածեն, ապա թէ ոչ ապստամբութեան պատուհասը կրեն :

Ընտրեցի զձեզ պաշտօն վարել ձեր յատկութեանց համեմատ . մտէք հանդիսից մէջ, առիթ տուէք արտասուաց, խոցեցէք եւ աներկիւղ խաղացուցէք արեան դետեր, վասն զի ոչ օք ձեզի դէմ դնել կարող է, եւ այս է ահա մեր քաջութիւնը :

Ս, յս ըսելով զամէնքը ցրուեց եւ այն մեծ քաղաքն աւերակ դարձաւ, ինչպէս ծառ մը որոյ արմատին վրայ թոյն թափուած ըլլալով՝ մահաբեր հեղուկը թափանցէ եւ նիւ թոյն հետ խառնուելով խամրեցընէ ծաղկունքն պառուգքն եւ տերեւքն եւ փտեցընէ ցամաքեալ ոստերը :

Եւ թուէր ինձ սոսկալի երազ մը տեսնալ երբ յանկարծ խառնաշիտթ աղաղակ մը լսելով թմբութենէս սթափեցայ : Եարկութեան ձայներ, յօշատեալ անդամոց կրճումն, սրտակտուր ողբեր եւ վայրենի ծիծաղներ հնչեցին, եւ ահա տեսայ բազմութիւն մը երիտասարդաց եւ մանկանց կողապատառ եւ արիւնաթաթախ՝ զորս ճնշէին եւ դիզէին այն կոյանոցին մէջ . ուստի Սաթայելի արքեպեալ դունդերը նշած էին . երկաթապատ դռները բացուելով դոցուեցան եւ ապա ահաւոր լռութիւն մը տիրեց :

Եւ ես մութ սրահի մը մէջ փոխադրուեցայ : Եւ ճանչցայ այն տեղւոյն հրամանատարը՝ զոր սեւ ստուերներ խոնելով պատիին եւ որոց հետ ցած ձայնիւ խորհուրդ կընէր :

Եւ քիչ մը ժամանակէն վերջը սեւ ստուերները մեկնեցան : Չանայի իրենց հետեւիլ բայց անհետ

Եղան իթին եւ օձապտոյտ ճանապարհներէ՝ ուր ապականեալ օղը խեղդէր զիս :

Մինչդեռ տրամու թեամբ կորացեալ եւ սարսափով պատեալ տեսածներուս վրայ խորհէի, ահա կրկին երեւեցաւ ինձ այն բազմաթիւնը զոր քիչ մը յառաջ կոչանային մէջ քարշէին : Նոյն ժանտադէմ ճիւղները հալածէին եւ մղէին զիրենք դէպ 'ի նեղ եւ ցած մուտք մը ուր սոսկալի դէմքեր տեսայ նման դահճաց որ դատապարտելոյն կախադանին մօտ կը շարուին, եւ լսեցի սուր եւ բիրտ ձայներ, կատաղի ծիծաղանք եւ զզուելի անէծք : Եւ դերեզմաններէ ելած դարշահատու թեան պէս թանձր ծուխ մը պատելով զիս՝ մերձ էի նուազիլ :


Եւ անոնք որ հոն անկեալ էին, ժամէ ժամ դեղնէին, ծիրէին եւ յերկիր գլորէին. կուրծերնին շնչաստպառ էր եւ շէին կարող օղը ծծել, ոսկերքը բախէին ինչպէս կմախքի ոսկերքն, եւ առաւօտեան դէմ դազազներ դադտադողի կրուէին առանց յուղարկաւորութեան, առանց աղօթից եւ խոր լռութեան մէջ :

Եւ դառն անձկութեամբ լցեալ ոգւոյս խորհն աչտպէս ազազակեցի :

Տէր, միթէ յազթանակեց Սադայէլ :

Եւ ձայն մը ըսաւ ինձ, Տէս :

Եւ ահա աչքերս 'ի վեր առնելով երկնային լուսով պատկեալ դուարթագէտ մարտիրոսներ տեսայ :



Կաղանդին օրը որ գոց է ունայն մասածմանց ,
 խաբերայ աղնկալութեանց , մշտաց եւ հոգոց շար-
 քը՝ դոր տարի կոչեմք , հոգիա արտում խնդրէք
 քանի մը վայրկեան յԱստուած ամփոփելով՝ խաղա-
 դութեան մէջ՝ սորոգել ոյժն՝ որ կենաց աշխատու-
 թեան կարեւոր է :

Եկեղեցի մը տեսնելով ներս մտայ : Եւ անա-
 մինչդեռ պատրաստուէի յաղօթս կալ , կտրուկ եւ
 ջախջախած խօսքեր խոսվեցին զիս : Այս անսովոր
 ձայնը ոչ կրժէ կելլար՝ այլ սուր եւ չոր դանկի
 ոսկերաց մէջէն հնչէր , նման պարզունակի կամ
 բանաստեղծի բանալեաց ճոնչման :

Եւ աչքերս դէպի այն կողմը դարձնելով՝ ուս-
 ասի ձայնը կուգար , տեսայ տարիքը առած , նիհար
 եւ կարճահասակ մարդ մը՝ որոյ անպաճոյճ մաղերը
 խոռոչացեալ այտից վրայ թափէին , շրթունքը բա-
 րակ եւ փոթ փոթ էին եւ աչքերը բլբլեղանման
 թափանցիկ լնցի աչաց պէս ցոլային :

Այ կողմը լուսափայլ հրեշտակ մը կեցած էր ,
 եւ ձախ կողմը սեւատեսիլ ճիւղ մը :

Լուսափայլ հրեշտակը կրսէր իրեն . քննէ երի-
 կամունքդ , եւ հաշուէ , եթէ կարող ես հաշուել ,
 խղճիդ խորը գիգեալ անօրէնութիւնները , իշխա-
 նութեանդ ամօթալից զեղծումներն եւ անմեղ դո-
 հերը՝ զորս փառասիրաց եւ հարստից կրից մատ-
 նեցիր : Ի՞նչ բրիք օրէնքը : Արդարութիւնը ի՞նչ է
 քեզի համար՝ եթէ ոչ շահու հաշիւ մը : Աւճառե-

ցիր տկարին չարչարանքը, արտասուքը եւ կեանքը, եւ դիակին վրայ կոխելով բարձրացար:

Միթէ կարծէիր ոճիրներդ ծածկել յաջայ Ամենատեւին: Երբ հրապարակաւ ստէիր, միթէ կարծէիր թէ Աստուած չլսեր. կարծէիր թէ Իր աչքը չթափանձեր ասելի կեղծաւորութեանդ քողը: Յիմար. Իր պաշտօնէից յետինը կարող է ճանչնալ ըզքեզ մեղաց հտաէն որ բուրէ վրայէդ, եւ դու կարծէիր յԱստուծմէ թաքչիլ ոգւոցդ ցեխին մէջ քնկզմելով: Հասեալ է բարկութեանը եւ մերձ է անազոր կրնաս հեռացընել եթէ փութաւ զղջալ:

Եւ պատուիրանազանցը դաւարէր ներքին տագնապով, զղջումն փնտռէր սրտին մէջ եւ միայն խէթ եւ սարսափ դանէր:

Եւ ճիւղան ալ մոմաւ ականջէն. թող բարբանջէ այդ բանդագուշօզը որ ոչ կարող է տէրութեանս իրաւանց հասու ըլլալ: Ըստ իր դրութեան չկրնար տէրութիւն մը հաստատ մնալ: Լաւ է ոմանք մեռնին միւսներուն ազատութեան համար, եւ մեծ բարոյականը սպաննէ զփոքրը:

Ո՛չ միթէ ձեր դրոց մէջ գրեալ է: Հնադանդեցէք հաստատեալ պետութեանց: Սրդ ո՛վ հակառակի հաստատեալ պետութեանց եւ ո՛վ խռովէ, յանցաւոր է: Եւ դու կը պատժեա զիրենք, այս նկատմամբ, մնացեալը արտաքին ձեւ մ'է: Եւ ո՛չ միթէ ուրիշները քեզի պէս կրնեն, եւ կուզես որ զքեզ անցնին, կուզես որ վաստակոցդ հասուցումն կողոպտեն:

Մինչեւ հիմա ծառայեցիր, շարունակէ այսուհետեւ լաւագոյն եւս ծառայել, եթէ ետ դառնալ

Չանաս՝ չատ ուչ է: Միթէ կուզես կորսնցնել մէկ
 վայրկեանի մէջ խոնարհութեանցդ վարձը, թախծա-
 լից տքնութեանցդ եւ երկարատեւ գիշերաց՝ զորս
 խառովէր ոգւոյդ ներքին եւ անխափան ձայնը: Մի-
 թէ կուզես մերժել պտուղը որոյ այնքան ցանկա-
 յիր եւ զոր անա վայելելու մօտ ես:

Ճիւտալը՝ չոր եւ նիհար մարդոյն ականջէն վար
 քանի մը ծածուկ խօսքեր ալ փարտաց զորս չոր եւ
 նիհար մարդը անյագութեամբ ուչի ուչով մտիկ
 կընէր: Չեմ դիտեր ինչ տագնապով սիրտը յուզեալ
 էր, բայց տեսայ որ հրեշտակին սղայծառ ճակատը
 նսեմանացաւ, աչքերը միւս կողմ դարձուց, սար-
 սափով եւ արտճութեամբ դէմքը պատեցաւ. եւ
 մինչդեռ ամպոց մէջ բարձրանայր՝ խաւարապատ
 կամարաց ներքեւ այս խօսքերը թնդացին:

ԱՆԻՇԵԱՆ Լ ՅՍԻՒՏԵԱՆՍ



Ժ.

Անտառին անկիւն մը, թիաց ճիւղերէ կրակ մը
 վառելով, խեղճ մանուկն, մամռոյն վրայ նստած,
 ձեռքերը շառաչող բոցոյն մերձեցընելով տաքըր-
 նէր: Ծուխը՝ դեղին դունաւորելով ամպերէն ցայ-
 տող շէկ ճառագայթիւք օդոյն մէջ ծանր ծանր
 բարձրանայր: Դիտէր մանուկն թէ ինչպէս վէտ
 վէտ ծածանէր նման օձին որ ուռննալով օղ օղ դա-
 լարի, եւ թէ ինչպէս յետոյ սիւսէր դերդ թուխ
 ծածկոյթ եւ սպա ցրուէր թանձր մթնոլորտին մէջ:


Մայրապայ մէջ երդերն ահա դադրած են, դոյն-
 դոյն ոսկեզօծ թեւօք բոստաները ծաղիկ ծաղիկ
 սիրահարեալ չեն թռչտիր. ամէն կողմ ակուր լը-
 ութիւն եւ հանդիստ տիրէ. ամէն բան աղօտ
 դոյն մը պատէ:

Խոտոյ երկայն թելերը խամբեալ եւ սպիտա-
 կացեալ դեանատարած ախուլով, կարծեա թաղուած
 բնութեան պատանքն են:

Երբեմն հողմիկը որ հողիւ վայրկեան մը փչէր,
 աղաղուն տերեւները վանէր դլորէր: Մանուկն ան-
 շարժ եւ մտախոհ ազանջ կախէր ձմեռուան ձայնին
 որ հողւոյն մէջ թախանցելով կը ցնդէր ինչպէս մի-
 այնութեան հառաչանքներն անտառաց խորը ցնդին:

Երբեմն ալ բարձր օդոյն մէջ օտար կլխնայից
 թռչնոյ երամներ գլխուն վրայէն կանցնէին: Աչօքն
 հետեւէր իրենց ընդարձակութեան մէջ եւ յափըշ-
 տակեալ ցնորիս ք՝ իրենց պէս հեռաւոր եւ խորհրդ-
 դաւոր դաւառներ դիմել փափաքէր ներքին եւ
 անձանօթ դօրութենէ մղեալ:

Ո՞վ մանուկ, ապաքէն անձկաս վախճանիդ
 հասնիլ. համբերէ վայրիկ մի եւս, եւ Ստորած
 կառաջնորդէ քեզ:



ԺԱ.

Աէս գիշեր էր, գիշեր ամառամած եւ ահաւոր,
 եւ ես ոչ քուն եւ ոչ արթուն էի. հողիս թախա-
 ուէր սառնապատ, ախրաղղած եւ անձանօթ դա-

ւառայ մէջ ուր անցնէին եւ դառնային արարածոց ուրուականներ :

Թուէր ինձ թէ ողի մը յանկարծ տանէր դիւ սեպացեալ եւ մերկ ժայռից վրայ որ աստ եւ անդ կոյտ կոյտ պրուեալ էին ինչպէս կործանեալ քաղաքի մը աւերակ . եւ օղբ երթալով անդայտանար , եւ աղօտ նշոյլ մը ռախցս ներքեւ անթիւ բազմութեամբ ծածկուած դաշտ մը լուսաւորէր :

Եւ այս բազմութիւնն երթար եւ դայր , խառնաշփոթ շարժմամբ յուղեալ , նման ալեաց ծովուն որ հակառակ հողմոց մղեալ , ճակատին մէկ մէկուդէմ եւ ափանց վրայ փշրին աղտոտ փրփուրներէ երկայն հեաք մը թողլով :

Եւ ըսաւ ինձ ողին :

Ս. յսպէս կըլլայ ամէն ազգ՝ որոց մտաւոր կեանքը խաւարած է եւ որոց ամէն անհատ երկրիս հեա կապուելով անձկաց միայն երկրաւոր բարեաց , շահն ըլլալով միայն իր օրէնքը եւ նպատակը միայն իր անձը :

Տես այս մարդկային փոշին . երբեմն սա ազգ մ'էր . եւ հիմա ի՞նչ է :

Չունի ոչ կապ միութեան , ոչ միտք համախոն եւ ոչ սէր . ամէն զօրութիւնքն մեռած են բաց 'ի անասնական ախորժակէն . ամէն բան կորուսեր է մինչեւ իսկ ճակատագրոյն զգացումն :

Խուզէ ոգւոյն խորը եւ ըսէ եթէ կայ հեաք մը առաքինութեան , պատուոյ եւ վսեմ եռանդեան որ մարդու յիշատակն անմահացընեն , զարկ կրծի՞ն վրայ , ունայն ձայն մը կուտայ :

Եւ ահա պատուհասը կրէ , վատ ամբարշտաց

ձեռքը մասնուած եւ անարդ բռնաւորաց ցեխին
մէջ խեղդուած :

Սյապէս ըսէր ողին ոչ յանգիմանութեան աջ
ցաւոց եւ խորին տրամութեան ձայնիւ :

Քիչ մը լռութենէ վերջը : Ի՛նչ դանաս , ըսաւ
արժանի մարդկութեան այդ ազգին վրայ : Տես ,
ահա կը շարժի . բայց անասունք ալ կը շարժին , որ-
դերն ալ կը շարժին :

Ա՛զգ , երբեմն մեծահոգակ , դոր նախանձելով
դիտէին ուրիշ ազգերը՝ երբ լուսապսակ փսեմու-
թեամբ ձեմէիր բանալով իրենց ապագային դռնե-
րը , ինչ երազ : Ի՛նչպէս գործածեցիր պարգեւներս :

Չեռքս օրհնէր զքեզ , առաքինութեան դորու-
թիւն հեղուի 'ի քեզ : Ընտրած էի զքեզ դործն իմ
'ի գլուխ հանել :

Եւ հիմն :

Բայց դու ոչ կամայ գլորեցար , ալ քնուդ մէջ
կապեցին թեւերդ եւ յետոյ թաւալեցին զքեզ 'ի
դուքն կորստեան :

Առանց նախատեսութեան վատահութեամբ խը-
մեցիր թունաւոր բաժակը՝ դոր քեզ կարկառէին :
Անոր համար վերստին պիտի կանգնեմ զքեզ :

Ո՛վ է քան զիս դորաւոր :

Չարւոյն խորը դրած եմ բարեաց անկորուստ
սեմն՝ որ ժամանակը գալով կը բողբոջէ եւ կաճի
ինչպէս ծովուն յատակին մէջ բուսոց աներեւոյթ
հունտեր ցանած եմ որ կամաց կամաց անդնդոց
խորէն բարձրանալով մակերեւութին վրայ կը
ափուուին :


Աշնան գեղեցիկ իրիկուն մը ծովը շողար ա-
րևուն ճառագայթներէն, եւ ամէն մէկ աղամանդ-
եայ փայլուն կաթիլներն սպիտակ եւ պայծառ
լոյս մը արձակելով աչքերը շլացնէին: Մերձակայ
դիւղէն, արք, կանայք եւ մանկունք բազմութեամբ
ծովեզերքը դիմէին, ուր շահոքրամի մանիշակա-
դոյն ծաղկունքն ծաթրինի հետ խառնուելով մե-
խակի հոսոյն նման անոյշ հոտ մը բուրէին. ոմանք
ձեռքերնին կողովներ, ոմանք բարակ ուրկաններ,
եւ միւսները թիւեր եւ ծայրը երկաթեայ կարթով
սլաշտպանեալ երկայն գաւազաններ առած կրսպա-
սէին որպէս զի ծովուն ջրերը քաշուելով ընդար-
ձակ ափունքն եւ ժայռերը 'ի յայտ գան նախա-
խնամութեան պատրաստած հարուստ աւարը ժողո-
վելու համար ինչպէս արծաթափայլ ժժմակներն որ
խոնաւ աւազոյն մէջ սահին, մկրատաւոր խեչա-
փառներն, գիշակեր խեցգետիններն եւ ամէն տեսակ
խեցեմորթներն: Նրեկոյեան մօտ երբ ծովը յոր-
ձանահոս վազէր հասնէր ինչպէս գետ մը յորդ
անձրեւօք ողողեալ, ամէնքը ուրախ դիւղ դառ-
նային: Բայց ամէնքը չգարձան:

Մատաղ կուսան մը սրտին երազոց մէջ ընկող-
մեալ հեռաւոր ժայռի մը վրայ նստած էր ինքրդինքը
մտնալով: Նրբ սթափեցաւ, ալեաց չարժուն օղակ-
ներն արդէն ժայռը պատէին եւ երթալով միշտ
բարձրանային: Նզերքին վրայ մարդ չկար, եւ ոչ
յոյս օգնութեան:

Արդեօք ինչ եղաւ այն վայրկենին իր կուսա-
կան հողին : Աչ ոք գիտէ զի դազանիք մ'է իր եւ
Աստուծոյ մէջ :

Երկրորդ օրը իր մարմինը դանուկցաւ : Սեւ մա-
ղերը մամոռոյ երկայն թելերուն հիւսած էր , որպէս
զի ալիք զինքը ծովուն խորերը ջնդեն , եւ որպէս
զի սիրելեացը մօտ օրհնեալ հողոյն մէջ հանդ չի :

Փայտէ խաչ մը իր գերեզմանին վրայ բարձրա-
ցած է : Շատ անգամ իր ընկերուհիներէն ոմանք
կուգան եւ խոսոյ վրայ ծնրադիր աղօթեն իրեն
համար եւ տխուր յիշատակօք սրտերնին փղծկած ,
եւտ կը դառնան զշուխնին կախած եւ արատաւք-
նին սրբելով :



Բ. Գ.

Օդը սաստիկ սաք էր : Մարդ մը բլրոյ մը ստա-
րոտը ողկոյզներով ծանրացեալ այդի մը տեսաւ , եւ
որովհետեւ ծարաւի էր , փափաքեցաւ խառըր ճա-
շակելով գովանալ :

Բայց չէր համարձակեր այդին մտնել վասն զի
նախ պէտք էր աղմուտ ճահճի մը մէջէն անցնիլ :
Սակայն ծարաւէն նեղուելով , ինքնիրեն ըսաւ :
Քերեւս ճահիճը խորին չէ ինչ կըլլայ եթէ մէյմ'ալ
եւ փորձեմ , ինչպէս շատերը : Շատ շատ կոշիկներս
պիտի աղտոտին , մնասը մեծ չէ :

Այս ըսելով ճահճին մէջ կը մտնէ , գարշահոտ
աղմին մէջ կը խորին ոտքերը եւ քիչ քիչ մինչեւ
ծունդերը :

Կանդ կանուս եւ վարանելով կը խորհի ետ
դառնայ թէ շարունակէ : Բայց այդին եւ ողկոյզ-
ները դիտելով բերանը կը փրփրի :

Այսքան յառաջ երթալէս վերջը, կըսէ, ինչ
յիմարութիւն է ետ դառնալ, ինչն է 'ի դուր աշխա-
տանքս կորսնցնեմ : Քիչ մը աւելի ցեխ, քիչ մը
պակաս, փոյթս չէ : Անշուշտ առուակ մը կը դըտ-
նամ եւ կը լուացուիմ :

Այսպէս մտածելով յառաջ դիմէ ցեխին մէջ եւս
քան դեւս ընկղմելով : մինչեւ կուրծը կը հասնի,
յետոյ մինչեւ վիզը եւ յետոյ մինչեւ շրթունքը .
վերջապէս գլուխն ամբողջ կը թաղուի . խեղդուե-
լով եւ շնչասպառ վերջին ճիզը թափելով ինքրդին-
քը կաղատէ եւ այդւոյն ստորտար կը հասնի :

Ծածկուած սեւ աղմով որ անդամներէն կը վա-
ղէր, քաղէ ցանկացած պտուղը եւ լափէ : Աւերջը
անհանդիստ ըլլալով եւ ամօթալից, վճիտ վտակ մը
կը փնտռէ մաքրութելու համար : Բայց ինչ որ ալ
ընէ, հոտը կը մնայ :

Ճահճին չոգին մտին եւ ոսկերացը մէջ թափան-
ցելով, անդադար կը բուրէ եւ ժանտահոտ մթնո-
լորտ մը պատէ միշտ զինքը : Երբ կը մօտենայ, ու-
րիչները իրմէ կը հեռանան, եւ մարդիկ քովէն կը
փախչին :

Ուղեց սողուն ըլլալ, թող երթայ հասարակ
նոց մէջ ապրիլ :



ԺԳ.

Հայր իմ, այսօր աշխատանքը շատ խիստ է, ձեռքիս բրիչը 'ի դուր չորցած հողուն վրայ կը դարնեմ: Արեւը հրատապ ճառագայթներ կարծակէ. եւ հարաւային հողմը դաշտաց մէջ պտոյտ պրտոյտ փոշին երկինք կը հանէ: Այն որ խորշակաքեր հովեր կը խրկէ, որդեակ իմ, խոնաւ ամպեր ալ կը խրկէ: Ամէն օր դատ իր վիշտն ունի եւ ակնկալութիւնն, եւ աշխատութենէ վերջը հանգիստն:

Տես, հայր իմ, այս խեղճ բոյսերը ինչպէս կը խամրին եւ ինչպէս դեռնեալ տերեւքն միջակոր ընին վրայ կը խոնարհին:

Ամէնքն ալ կենդանեանս, որդեակ իմ, երկնային շտեմարանաց մէջ միշտ յորդ անձրեւներ եւ դով ցօղեր կը դանուին, ոչ թել մը խոտոյ դուրկ կը մնայ:

Հայր իմ, թռչունք լռեն տերեւոց մէջ. լորամարդին անշարժ աղօսաց խորշին մէջ պահուրած ընկերն անդամ չկանչեր, կովը շուք դով կը փնտռէ, եւ եզն մարմնոյն ծանրութեան ներքեւ ոտքերը կքած, պարանոցը երկնցուցած, կը բանայ լայն ունդունքն ծծել օդը որ ցանցառ է:

Արդեակ իմ, Աստուած թռչնոց ձայնը նորէն կուտայ եւ ոյժն եղանց եւ կովուց որ տապախարշ տաքութենէ սպառած է: Եւ ահա արդէն հովիկը լցնուի փշելով կուղայ դիրենք կաղղուրել:

Երթանք. հայր իմ, նստիլ լճին եղերքը խոտին

վրայ մօտ այն հինաւուրց կաղնւոյն որոյ կախեալ
ուստերը ջրոց երեսը կը ծածանին : Ինչպէս հան-
դարտ , ինչպէս պայծառ է լճակը , տես . ինչպէս
դուարթ խայտան ձկները : Ոմանք իրենց թեւաւոր
որսերն , խեղճ նորածին ճանճիկները հալածեն , եւ
ոմանք դլուխնին ջրէն դուրս հանելով , կարծես
կիսաբաց բերանով՝ մեղկ համբոյր մը տան օդոյն :


Որդեակ իմ , այն որ ամէն բան ստեղծեր է , ամ-
մէն կողմ կը սիւսէ անհասնում պարզեւներն ,
կեանքը եւ կենաց ուրախութիւնները : Չարը առ-
աչօք կայ միայն , սիրայ ազօտ կողմն է , բարւոյն
մէկ երեսը եւ ստուերն է :

Սակայն , հայր իմ , հանապաղ կը շարշարուիս
Որքան աշխատանք , որքան յողնութիւն պէտք է
մեր կարիքը հողալու համար : Ո՞չ միթէ աղքատ
եմ : Ո՞չ միթէ մայրս աղքատ է , ձեր քրտամբ սնու-
ցիք . միթէ օր մը միայն վաղուեան ապահովու-
թիւնն ունեցածք :

Ինչ փոյթ վաղուանը , որդեակ իմ : Վաղը Աս-
տուծոյ է . իրեն ապաստանինք : Ո՞վ աւաւտուեն
կելլայ արդեօք դիտէ թէ իրիկուան պիտի հասնի .
ինչո՞ւ ուրեմն հողանք եւ մամտանք ապագային
վրայ որ թերեւս մերը չէ : Աանցնինք երկրիս վրա-
ջէն ինչպէս կանցի՞ի ծիծառն ամէն օր ամէն օրուան
սնունդը փնտռելով եւ իրեն պէս ձմեռուան մօտ
խորհրդաւոր գօրութեամբ մզեալ դիմենք մեղմա-
դոյն կլիմայից ներքեւ :

Ինչ է այս , հայր իմ : Կարծես մեռեալ մը պա-
տանքով պնդեալ կամ մանկիկ մը խանձարուրով
ծրարեալ :

Արդեակ իմ, այդ սողուն որդ մ'էր, քանի մը
օրէն շնչաւոր ծաղիկ մը պիտի ըլլայ, եթերային
չինուած մը եւ վառվառն եւ գոյնզգոյն շողալով
պիտի սլանայ յերկինս:



ՓԵ.

Ո՛հ, ո՞ տայր ինձ դառնալ ծննդեանն իմ հո-
վիտ, ո՞ տայր ինձ տեսանել այն ժայռերը եւ դառ-
'ի վայրն բուսած զիր ու ցան հակայ սոճիները, կա-
նաչագեղ մարդերն՝ ուր ողկաւէտ խոտոց ներքեւ
ծածկուած պայծառ ջրոց մէջ թանայի ոտքերս՝
էրբ ձիւները հալէին:

Հայրենիքէս դատեցին զիս խեղճ մանուկ ան-
տառաց թանձր սլատով եւ երկաթածոյլ շղթանե-
րով:

Երբ իրենց դէմը ելայ, հարցուցին ինձի: Ին-
չով կապրիս:

Աշխատութեամբս, ըսի, բայց հիմայ ամէնքը
զիս կը մերժեն եւ անօթի մեռնիլ մնայ ինձ:

Անօթի կը մեռնիս. յանցաւոր ես: Ո՛ւր կը բը-
նակիս, Բնակարան մ'ունիս:

Ստակ չունենալով, ամէն դռները դոց են ինձ,
եւ հոն է երեկոցեան ապաստանն իմ՝ ուր նախա-
խնամութիւնն առաջնորդէ: Չունիս բնակարան,
յանցաւոր ես: Օրէնքը յայտնի է, բանտ:

Խաբերայք՝ որ Արդւոյն մարդոց աշակերտք կո-
չիք, այնմ՝ որ երկրիս վրայ աղքատ եւ անօր

ապրելով, չունէր եւ ոչ քար մը գլուխը հանգու-
ցանելու, տեսէք ահա ձեր^ն գլխուն վերեւ իր ըս-
պանաւից դէմքը, ահա իր շրթունքն սուրբ բար-
կութեամբ կը շարժին զձեզ եւ ձեր օրէնքն անխ-
ժելով: Ո՛չ միթէ օգը եւ արեւը ամէնունն ալ են:
Միթէ Աստուած բանտեր շինած է իր արարածոց
ոմանց համար:

Ո՛վ իմ երկրին հովիւներ, ձեր հիւղին մէջ զը-
ւարթ ապրեցէք: Չքաւորութիւնը հոն յանցանք
չէ, եւ պանդուխտը հոն կը գտնէ միշտ քիչ մը
կաթ եւ սլատառ մը սեւ հաց քաղցը յագեցնելու
համար՝ եւ չորցած խոտեր՝ վրան հանգչելու հա-
մար:

Երիտասարդութեան իմ օրեր ինչպէս ուրախ
սահէին ձեր մէջ, եղբարք իմ: Ի՞նչպէս խորհուրդք
մտացս թմրեալ ոգւոյս մեղմիկ ծփային երազներ
բով, երբ կանաչ մամռով սլատած ժայռին ստորո-
տը մարգագեանին վրայ նստած, քաղցրաբոյր
ծաղկանց երկնային հոտը շնչէի, եւ ականչ կա-
խէի սարեկին անոյշ երգոց եւ շառաչման հեղե-
ղին՝ որ անդնդոց խորը թաւալելով քարերուն դէմ
խորտակէր:

Ո՛հ, ինչպէս անցեալ յիշատակները պաշարեն
դիս: Կը տեսնեմ ահա այն թեթեւ ամպերը՝ որ լե-
րանց կողից վրայ սահէին եւ ապա հազար ձեւե-
րով եւ հազար ծաղքերով բարձրանային եւ դա-
գաթը հովանաւոր սլաօկով մը սլաօէին:

Ի՞նչ է այն սեւ բիծը՝ զոր երկնից խորը կը
տեսնամ: Սրժիւն է՝ որ ընդարձակութեան մէջ
զօրաւոր թեւերը տարածէ. ահ, ազատ է ինքը:

Եւ այժն ալ ազատ է ամայի ժայռից վրայ, եւ
արջն ազատ է քարայրին մէջ, եւ թռչունը ան-
տառին մէջ եւ որդը խոտոց մէջ: Ա՛հ, ինչո՞ւ ես
ալ որդ չեմ խոտոց մէջ, թռչուն անտառաց, արջն
քարայրի մէջ եւ այժն ամայի ժայռից վրայ:

Ամէն արարած երկնից ներքեւ ուղածին պէս
երթայ եւ դայ, եւ չնչէ օդն՝ զոր ոչ ոք չափով
չափէ:

Այսպէս չէ աղքատը. աղքատը արարչագոր-
ծութեան տարագիր եւ գռեհիկն է: Ա՛վ կարող
էր գուշակել, նով Աստուած իմ, թէ օր մը պիտի
զղջայի մարդ ըլլալուս վրայ:



ԺԶ.

Փոքրիկ խորչի մը խորը եւ յատակն ալիքներով
փորուած քարանձաւի մը ներքեւ՝ ուր ժայռերէն
կանաչ եւ երկայն խոտեր կախուէին, երկու մարդ
մին երիտասարդ՝ միւսը տարօք բայց դեռ կայ-
տառ, ձկնորսի նաւակի մը կրթնած կըսպասէին որ
ծովուն ջրերը բարձրանան. բարակ հովիկ մը կը
փչէր եւ ալիք ուռնալով աւազին վրայ մեղիկ
սահէին անոյչ եւ նուազ կարկաչով:

Քիչ մը ժամանակէն վերջը նաւակը եղերքէն
հեռանալով ընդարձակ ծովուն մէջ կը յառաջանար
քիթը վեր եւ ետեւէն հերմակ փրփուրներով եր-
կայն հեաք մը թողլով:

Ծերունին ղեկը բռնած դիտէր դառապասանե-

բը՛ որ մերթ ուռենային եւ մերթ թուլնային յող-
 նած թեւերու պէս : եւ կարծես աչօքն նշան մը
 փնտռէր հորիզոնին վրայ եւ անշարժ ամպոց մէջ :
 Յետոյ խորին խորհրդոց մէջ ընկղմելով, խոնարհէր
 ճակատը՝ որ թէպէտ աշխատութեամբ կնճած
 քայց կոխներու մէջ միշտ աննկուն էր :

Յորձանքները հանդարտ ծովուն երեսը հովիտ-
 ներ փորէին՝ որոց մէջ շնորոքը լողար՝ կապուտակ
 եւ պայծառ ալիքներէն յուշիկ յուշիկ տատանե-
 լով : Արտոյտը բարձրէն թռչելով ալեաց մէջ իր-
 բեւ նետ ընկղմէր եւ դանդաղ ջրագռաւն սեւ ժայ-
 ուի մը ծայրը թառած էր անշարժ :

Ոչինչ դիպուած մը, թեթեւ սիւղ մը, լուսոց
 շող մը՝ այս շարժուն տեսարանաց կերպարանքը
 փոփոխէր : Երիտասարդին՝ որ սրտին մէջ ամփո-
 փելով յափշտակեալ էր, այս ամէնը երազ մը թը-
 լէր : Ոգին ծփայր եւ ծածանէր ալեաց մրմնջով,
 ինչպէս ննջէ մանուկն ստնատւին անոյշ : եւ մենա-
 ճայն երգօք :

Բայց յանկարծ սթափելով եւ աչքերն եռան-
 դեամբ բորբոքելով, աշխոյժ ճայնիւ օդը թնդա-
 ցուց :

Իաշար մշակին են, անտառք որսորդին, ծով
 եւ ալիքն, ժայռերն եւ մրրիկները ձկնորսին :

Երկինք դլխոյն վերեւ, անդունդք սափցն ներ-
 քեւ, ձկնորսն ազատ է եւ ինքն իր տէրն է :

Տեսէք ինչպէս տկար նաւակը դոր հողմերը կը
 դօրացնեն, տեսէք ինչպէս հնազանդի ձկնորսին
 ձեռքին եւ ինչպէս սահի տնկայուն դաշտին վրայ :
 Ձկնորսը կռուի ալեաց հետ եւ նուաճէ դիրենք

կառուի հողմոց հետ եւ սանձէ զիրենք : Ա՞յլ իրենս
պէս զօրաւոր , ո՞յլ իրենս պէս քաջ է :

Ա՞ւր են իր տէրութեան սահմանները եւ ո՞յլ
կարող է չափել : Գնահատենք ահա՛ ուր տա-
րածուի Ուկրաինն , ըսաւ իրեն Աստուած , գնահատենք
քեզի բաժին տուած եմ :

Ուսկաններն ալեաց խորէն շնչաւոր հունձքեր
կը քաղեն : Եւ ունի անթիւ երամակներ՝ որ ծովուէն
չատակը ծածկուած արօտներով պարարտանան :

Աստուած ձկնորսին համար կը փթթեցրնէ ծո-
վուն ծոցը մանիշակադոյն , կասրոյտ , գեղին եւ
ծիրանի ծաղիկներ , եւ իր աչքերը կդմայլեցի՛ է ամ-
պերունս վրայ նկարելով ընդարձակ ափունքներ ,
գեղեցիկ եւ երկնադոյն լճեր , լայն գետեր , լեռ-
ներ , ձորեր եւ հրաշակերտ քաղաքներ . մերթ ըստ-
ուերաց մէջ ընկզմած եւ մերթ արեւմտեան նշոյլ-
ներով լուսաւորուած :

Ա՛հ , ինչպէս քաղցր է ինձ ձկնորսական կեան-
քը եւ ինչպէս սիրեմ եւ կռիւներն եւ վտանգներն
եւ ուրախութիւններն :

Սակայն , ո՞յլ մայր իմ , երբ յանկարծ գիշերը հո-
վիկը մեր հիւղը սարսէ , ինչպէս սարսափով սիրտդ
բարախէ : Ի՞նչպէս գողգողուն վաղելով դիմես պա-
ղատիլ Աստուածածին կոչը՝ որ խեղճ նաւաստեաց
պաշտպանն է :

Եւ իր պատկերին առջեւ ծնրադիր արտասուե-
լով աղօթես որդւոյդ համար , դար հողմերը խառ-
րաց մէջ մղեն դէպի սեպածեւ ժայռերն՝ ուր օր-
հասական ողբեր մբրկաց մանչիւններու հետ խառ-
նուին :

ԺԷ.

Ողբացէք ազգն կործանեալ, ազգ զոր երբեմն
 միւս ազգերը դժուխնին վեր առնելով փառօք շքե-
 դացեալ դիտէին եւ ասէին: Արժանի է դա առաջ-
 նորդել մեզի. իբր արեւ լուսաւորող մարդկութեան
 թող յառաջ դիմէ եւ մենք իրեն հետեւինք:

Եւ նա յառաջ վազէր ազգերն կանչելով ՚ի նոր
 կեանս. խօսքով եւ փառաւոր օրինակօք սորվե-
 ցընէր իրենց օրէնքը՝ որ խոնարհը բարձրացնէ
 տկարը դօրացնէ եւ ամէնքը սուրբ հաւասարու-
 թեանք, ազատութեամբ եւ եզրայրական սիրով
 կապէ:

Արքունական գաւազանները իր ոտից ներքեւ
 ջախջախէին եւ թաղերը դեռին գլորէին՝ ինչպէս
 շրջանակներն՝ որոց հետ մանկուսք խաղան: Զին-
 ուորը, աստուածային մշակ, պատերազմի դաշ-
 տաց վրայ գերութենէ ազատեալ ազգաց փրկու-
 թիւնը ցանէր: Ար գալստեան համբաւը բաւական
 էր փչրել եւ խօրտակել սարկութեան շղթայներն,
 եւ գիրքն ներքին անձանօթ աղգեցութեամբ ճա-
 կատը բարձրացընէր մարդ լլխան զգալով:

Ինչպէս երեկոյեան դովաշունչ հողմը, յոյսը թա-
 փանցէր աղքատին տունը, դուարթ եւ խաղաղ ե-
 րազներ սփոփէին զինքը քնոյն մէջ, տեմնար լու-
 սաճաճանչ պատկեր մը որ ժպտէր իրեն եւ ժրպ-
 տէր սիրելեացն եւ հեղոյր իրենց վրայ յորդառա-
 ցող մը նման զիչերային շաղին որ արեւուն տա-
 սով խամրեալ բոյսերը կաղզուրէ:


Ամէն սրտեր ուրախութեամբ ընդարձակէին եւ
խայտային . ամէն սրտեր խորհրդաւոր դուշակու-
թեամբ բարասէին :

Ինչպէս հորիզոնը ճոխ եւ պայծառ էր , յոր պըշ-
նուին աչք դմայլմամբ . եւ այս պայծառ տեսարա-
նաց խորը ինչպէս բարիք բարեաց խառնուէին ան-
ձագ եւ անապառ :

Եւ ահա անցելոյն ուրուականը՝ ժանտահոտ
փոշւով ծածկեալ յանկարծ գերեզմանէն ելլելով ,
ազատարար աղգին դէմը կանդնի . ձեռքն դնէ կըր-
ծին վրայ եւ արիւնը կը սառի եւ սրտին բարա-
խումն կը դադրի . փշէ երեսին իր շունչը եւ թալ-
կանայ , ծունդերը դողան միտքը խռովի եւ չճիշեր
իր նախնի փառքը , չճիշեր թէ ինչպէս մեծ էր եր-
բեմն , չճիշեր թէ ինչ համակրութեամբ ուրիշ ազ-
գերը կատուած էին իրենն ինտ : Ապականութեամբ
վատթարացեալ , կարկառէ ապշութեամբ ոտքերն
չղթայից եւ պարանոցն լծոյ :

Եւ ահա խոնարհեալ է յերկիր զոր փորէ եւ խու-
զէ՝ շունենալով ուրիշ հոգ բայց միայն յագեցընել
անասնական ցանկութիւնը , եւ որչափ կրկնապատ-
կէ վաստակը , այնչափ նուազ արգիւնք քաղէ : Ին-
քը յողնի եւ ուրիշները վայելեն , նման անարգ ա-
նասնոյն , որոյ հոտոտելով հողոյն մէջ գտած պտուղը՝
բերնէն յափշտակեն :

Ողբացէք աղոյն կործանեալ :



Ահա ինչ ըսի ես, Աստուած եւ Տէր:

Վնչ աղագոյ որ մտանան զիս, վնչ ժողովրդոց որ մերժեն զիս:

Որովհետեւ զիս մտքէդ հանեցիր եւ օրտէզ հեռացուցիր, եւ դու ինքնին տէր ըլլալ ուզեցիր:

Որովհետեւ հպարտութեանդ մէջ ծածկեցար ինչպէս թափոնի բեմին վրայ կեղծ թաղաւորը ծիրանւոյն մէջ ծածկուի:

Որովհետեւ զգայարանացդ հետեւելով, ըսիր ցանկութեամբ, դու ես իմ օրէնք. եւ նիւթ ին, դու ես իմ բարիք:

Որովհետեւ ուրացար գերադանց յատկութիւններդ:

Ես ալ սառնապատ խաւարօք եւ մտացածին ուրուականօք պատելով, յամառութեան ողին, սրտութեան ողին եւ երկչոտութեան ողին խրկեցի քեզ:

Առի քեզմէ բանականութիւնը եւ մինչեւ անդամ աղատութեան սէրը:

Կոյանոցէն ուր նեխին եւ եռանքազազ աւելածք, բարձրացուցի ապականեալ հոգիները, փտեալ եւ ինչ որ ցած, պիտի եւ գարչելի է, որպէս իշխեն վրադ:

Խոնարհեցուցի զքեզ անարդ զեխին մէջ. խաւարանի եւ գաւազանի տակ ընկճեցի. նախանձեցուցի քեզ անասնոյն վիճակը՝ զոր ոչ բանտի մէջ փակեն եւ որոյ խնամք տանին վասն զի զին ունի:

Սուրիչ աղագոյ խաղալիկ ըրի զքեզ, իրենց թըշ:

նամանաց եւ այսպանաց մատնեցի, որք անցնելով
արհամարահանօք դիտեն զքեզ դեանատարած եւ
տանակոխ ընեն: Պատասխանէ ինձ, միթէ բաւա-
կան են այսքան նախատինք:

Հրամաշ տենդ մը լախէ աղիքներդ, եւ ծա-
րաւդ մարելու համար զովացուցիչ աղբիւր մը գըտ-
նել փախաքելով, կերթաս արեւուն տակ, խեղճ
յիմար, սօթագին աւազը խառնել եւ փորել:

Քաղցը կոտորէ ուստերքդ եւ դստերքդ որք
ապրելու համար աղբին մէջէն պոռնկութեան հացն
ժողովեն:

Ամէն թշուառութիւն ըմպեցիր, ամէն ցաւ մար-
մինդ եւ հողիդ տանջեցին եւ ամէն տեսակ անօթ
կրեցիր:


Իմ լուծս նեղէր զքեզ, թօթափեցիր դասն, եւ
ուրացար զիս ոչ ճանչնալով իբրեւ հայր. եւ անա-
այսպէս ըլլալ կամեցար, ցանկութենէ զատ չունիս
ուրիշ կանոն, եւ ոչ ուրիշ լոյս բաց 'ի ստուերէ,
եւ ոչ ուրիշ դօրութիւն, բաց 'ի բազկացդ եւ ոսկե-
րացդ: Անասուն փոխեցար եւ իբրեւ անասուն
գործածեն զքեզ:

Անոնք որ իրենց որան ըրին զքեզ, սայրասուր
ճիրանօք միտդ պատառեն: Կանչէ հապա մարգա-
րէներդ որպէս զի փրկեն զքեզ եթէ կարող են:

Արդ համողեալ ես թէ կեանքդ ինձմէ բխէ նա
մանաւանդ թէ իմ բերանոյս շունչն է:

Բաց հապա աչքերդ եւ անկեղծութեամբ զրդ-
ջալով ապաշխարէ, եւ ես պիտի կարկառեմ ձեռքս
որ վրագ ծանրացաւ, ձեռքս վերստին պիտի կանգ-
նէ զքեզ, եւ անոնք որ այժմ հարստահարեն զքեզ

անոնք արդարութեանս արուլք պիտի կորնջին, եւ
գու գարձեալ իմ ընտրեալ ժողովուրդս պիտի ըլ-
լաս. ժողովուրդ զոր միւսները խորհրդաւոր ապա-
գայի ակնկալութեամբ պիտի դիտեն լի յուսով:



ԺԹ.

Այսպէս ըսին. Չնջենք բարին եւ սերմն ան-
գամ ոգւոց խորէն արմատախիղ ընենք: Եւ եթէ
չանդգնի ոք ձայնը բարձրացընելով պաշտպանել
եւ յիշեցընել զայն այլոց, իբրեւ Հարագործ թաղենք
դինքը մեր բանտից մէջ վասն զի զօրաւոր ենք,
կամ արձակենք իրեն վրայ անօթի շանց ջուր որ
Չարեաց տաճարին գոները պահեն, եւ որ ցեխին
մէջ ինկած պատառ մը հացի համար, ստութեամբ
եւ թշնամանօք հաջեն:

Յիմարք, եւ եթէ փճացընէք այսօր ինչ որ
վազը պիտի փճացընէ մահն անհրաժեշտ, կարծէք
յաղթութիւն տանիլ: Միթէ Բարին մահկանացու
մարմին ունի: Բարին, ես ինքն եմ, կրսէ տէր:

Երբ Արդարը խաչին վրայ բեւեռացեալ, եր-
կու աւազակաց մէջ ոգին աւանդեց, այն ժամա-
նակին թագաւորք, հզօրք եւ կեղծաւորք, որ ժո-
ղովուրդը լախէին իբրեւ պատառ մը հացի, կար-
ծեցին յաղթանակել: Բայց երկրորդ օրը երկրիս
ծայրէն միւս ծայրը արձագանք ազատութեան
գոչեցին, ազատութիւն որ դատաւարակելոյն գե-
րեզմանէն ծագեցաւ:



1669-1678

OL
NL

<< Ազգային գրադարան



NL0025848

8485200

8485200

OL
NL

<< Ազգային գրադարան



NL0025843

OL
NL

<< Ազգային գրադարան



NL0025847

8485200

8485100

OL
NL

<< Ազգային գրադարան



NL0025842

OL
NL

<< Ազգային գրադարան



NL0025846

8485200

8485100

OL
NL

<< Ազգային գրադարան



NL0025841

OL
NL

<< Ազգային գրադարան



NL0025845

8485200

8485100

OL
NL

<< Ազգային գրադարան



NL0025840

OL
NL

<< Ազգային գրադարան



NL0025844

8485200

8485100

OL
NL

<< Ազգային գրադարան



NL0025839

